

4132

301

789

f-89

2010

10 Nr. Հրատարակութիւն Հնչակ. Կուսակցութեան. Nr 10

Ա Յ Յ ի ա լ ի ս տ ա կ ա ն Գ Ր ա գ ա ր ա ն

23.191.542

P-06

ԿՐ. ԲՈՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ

ԳԼԴԱՏԻԼՅԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Գինը 1 Փրանկ.

ԱՌԵՆՔ

ՏՊԱՐԱՆ «ՀՆՁԱԿԻ»

1894



301
F-89

10 Nr. Հրատարակութիւն Հնչակ. Կուսակցութեան. Nr 10

Ս օ ց ի ա լ ի ս տ ա կ ա ն Գ Ր ա Դ ա ր ա ն

ԲՈՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ

ԳԵՂԵՏԷՍԵՒ ԴԵՏԵՎԵՐՈՒԹԻՒՆ



Գինը 1 Փրանկ.

ԱՌԵՆՔ

ՏՊԱՐԱՆ "ՀԵՂԱՍԻՆ"

1894

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

«Հնչակի» անցեալ տարւոյ դեկտեմբերի համարում, պատասխանելով Բ. Դուան յախուռն յարձակումներին Հնչակեան Կուսակցութեան վրայ, մենք խոստացանք հրատարակել զանազան թղթեր ու վկայագրեր Գաղատիայի յայտնի Գատավարութեան վերաբերեալ, որի վրայ մասնաւորապէս թափւում են թշնամի կառավարութեան շանթերը: Մենք այսօր կատարում ենք մեր խոստումը: Յայտնի է, որ Բ. Դուան անգլիական թերթերում անիմանալի, անձոռնի կերպով խեղաթիւրել էր այդ Գատավարութեան վերաբերեալ իրողութիւնները և ամենատգեղ ու անճիշդ կերպարանքի տակ էր ներկայացրել ամբաստանված Հնչակեաններին, ինչ թոյլ էր տվել մեր ներքին թշնամիներին օգտվել մեր դէմ իրանց արած անընդհատ յարձակումների համար, ձայնակցելով Բ. Դուան: Յայտնի է նոյնպէս, որ Գաղատիայի Գատավարութիւնը տպագրվեցաւ իր ժամանակին Կ. Պոլսի հայ և թիւրք շատ լրագիրներում, և չը նայած, որ նրա մէջ ծայրից ծայր ամեն-մի տող խմբագրված էր թիւրք կառավարութեան ձեռքով, անձոռնի կերպով աղաւաղված Գատավարութեան միջոցին Հնչակեանների տված հարցաքննութիւններն ու արտասանած ճառերը, այնու ամենայնիւ տպագրվելով, նրանք խոր տպաւորութիւն թողին հայ հասարակութեան վրայ ի նպաստ Հնչակեան Կուսակցութեան: Իւ դա պարզ էր, թէ ինչու: Որովհետեւ

տեւ թիւը կառավարութեան ամեն աղաւաղումները դարձեալ չէին կարողացել սրօղել հասարակութեան աչքից Գատավարութեան մէջ Հնչակեանների բռնած օրինակելի ընթացքը, Հնչակեան Կուսակցութեան զօրութիւնը և առհասարակ գործունէութիւնը, որ ակամայ խոստովանում են ինքը Բ. Գուռը և մեր այլ թշնամիները:

Այդ բոլորը չէ՞ ապացուցանում արդեօք, որ մալաթը պարկուճ չի պահպնել և ճշմարտութիւնը՝ երեւան կը գայ:

Միւս կողմից այսօր մենք մեր պարտքն ենք համարում ի մի ժողովելով լոյս ընծայել Գաղատիայի Գատավարութեան վերաբերեալ կարեւոր վկայաթղթերը՝ իրանց ճշմարիտ գոյնի տակ ներկայացնելու համար մեր դատապարտված ընկերների կռիւը բռնութեան դէմ, նրանց կրած ծանր տանջանքները, նրանց խօսած գեղեցիկ ճառերը Գատավարութեան միջոցին: Հայ ժողովուրդը պէտք է ի մանայ, թէ որոնք են իր պաշտպանները, որպիսի անձնուրաց գործունէութիւն են նրանք ունեցել, որոնք են եղել նրանց առաջնորդող գաղափարները, որպէս են նրանք իմացել մահու առջեւ կանգնել դէմ առ դէմ: Այդ գործիչներն արժանի են հայ ժողովուրդի երախտագիտութեան:

Եւ ահա այդ երկու տեսակէտից մենք մեր պարտականութիւնն ենք համարում հրատարակել ներկայ բոլորը, որ արդէն ինքն ըստ ինքեան աւելի, քան օգտակար է հայ հասարակութեան համար. նա կ'արեւոր է:

Սար ժամանակ — և այդ ժամանակը շատ մօտ է. հազիւ չորս-հինգ տարի առաջ, — երբ ընդհանուր առմամբ հայերը մի մաշող թմրութեան մէջ էին: Երկիւղով էին նրանք մտածում ապագայի մասին, երկիւղով էին

նրանք դիտում ներկան և անվստահութեամբ ու թերահաւատութեամբ լսում յեղափոխական քարոզները: Եւ այդ հասկանալի էր: Ի՞նչ հասարակական գործունէութիւն էր տեսնվել մինչ այն ժամանակ ազգի մէջ, որից յուսացվէր բռնակալ լծի թօթափումը: Ոչինչ: Կային արդեօք անձեր, հասարակական գործիչներ, որոնք ոչ միայն խօսքով, այլ և կենդանի գործով ցոյց տված լինէին հայութեան, թէ վերջնականապէս որոշված ու ընտրված է նրա փրկութեան ճանապարհը: Ո՛չ և եղածները դեռ նոր էին դուրս գալիս անյայտութեան միջից, պատրաստելով իրանց մտաւոր ու բարոյական ոյժերը ժողովուրդի փրկութեան խորանի վրայ դնելու համար: Մի բան, որ գիտէր այդ ժամանակ հայ հասարակութիւնը, դա այն էր, որ մի քանի, այստեղից-այնտեղից դուրս պրծած և հանգամանքների բերումով «ազգասէրի» անուն վաստակած տգեղ ինքնապաշտներ ի չարն էին գործ դնում ժողովուրդի պարզամտութիւնը, դիւրաթեք վստահութիւնը, շուրջում նրան մեծամեծ խոստումներ: Մինչդեռ յետոյ, երբ անցնում էին տարիներ և ամեն բան միշտ ու շարունակ մնում էր նոյն մեռելային անշարժութեան մէջ, ժողովուրդը դարձեալ ու դարձեալ իր ետեւը, իր հանդէպը, իր շուրջը տեսնում էր միշտ նոյն բռնակալութեան սոսկացնող ուրուականը, որ հալածում, տանջում, մահացրնում էր նրան:

Ահա այդ թերահաւատ ու վհատեցնող վիճակի մէջ յանկարծ հարուած հարուածի վրայ պայթում են Էրզրումի և Կ. Պօլսի 1890 թ. յեղափոխական շարժումները... Անցնում է մի, երկու, երեք տարի և յեղափոխական տագնապն ու շարժումները ծաւալվում են ամբողջ Հայաստանում: Թոյսերը, երազները, նախագծերը,

ողեւորութիւնը, ինքնաճանաչութիւնը, ինքնագործունէ-
ութիւնը — միանգամից թեւաւորվում են և յուսադրող
ու փրկարար կերպարանքով սաւառնում այն ժողովրդի
վրայ, սնվում իբրեւ ջերմոցում այն ժողովրդի սրտում,
որ տակաւին երէկ կմախք էր թւում: Եւ առաջացաւ
յեղափոխական գործիչների մէկ ամբողջ շարք, երեւան
եկան հերոսների տիպեր. . . և թիւրքական բանտերը, ար-
սորները լքեցին նրանցով, մինչեւ որ մէկ օր, լուսա-
գէտին, վառ արշալոյսով կարմրած երկնածրի վրայ նը-
կարվեցաւ նսեմ ու խոժոռ տեսքով Գաղատիի՝ յիշատակարգ
սինը, իր առաջին հինգ հերոս նահատակներով: Գա
հայկական յեղափոխութեան զանգակի խորհրդաւոր ու
սառսեցնող ղօղանջն էր: Նա հնչում էր, թէ հայ յե-
ղափոխական կարմիր դրօշակն այլ եւս պարզված է, ա-
ռաջացնելով մեծամեծ արհաւիրքներ և խոստացող ցան-
կալի փրկութիւնը: Գաղատիայի Գատաւարութիւնը եղաւ
հայ ժողովրդի ազատական ձգտումների ու պատերազմի
իմաստի ամփոփումն ու արտայայտիչն՝ իր լուսամիտ ու
աներկիւղ ճառերով, և սուլթանական կառավարութեան
պատմական առաջին դատապարտութիւնն՝ իր ծանր դա-
տավճիռներով. . .

Այս մեծ է այն բարոյական ու մտաւոր կրթիչ ազ-
դեցութիւնը, որ ունեցան յեղափոխական շարժումները
հայութեան վրայ: Այս վերջինն այսօր այլ եւս անձա-
նաչելի է դարձել, և որքան սիրտ, եռանդ, գործելու
փափագ են ներշնչում նրա մէջ մի շարք ազնիւ նա-
հատակների սուրբ ու արիւնշաղախ գերեզմանները և
այն՝ այլ եւս սրբավայրեր դարձած՝ զաշտերը, քաղաք-
ներն ու լեռները, ուր հոսել է հայ յեղափոխականի ա-
րիւնը: Հայ ժողովուրդն այսօր այլ եւս մտել է կեանքի

մի նոր դարագլխի մէջ, որ, հակառակ ներկայ արհաւիրք-
ներին, տագնապին, ապագայի հեռուում նշմարել է տա-
լիս նոր ասպարէզ նրա քաղաքական, հասարակական,
տնտեսական, մասնաւոր զարգացման ու առաջադիմու-
թեան: Եւ այդտեղ է նպատակը, դէպի որը նա սկսել
է դիմել և կը գնայ մենչեւ վերջ:

Այդ բարոյական վերածնութիւնը, այդ ուղիղ գի-
տակցութիւնը, ժողովրդի մէջ մուտք գործած բարձր
գաղափարների լուսաւոր հոսանքը և միանգամից մինչեւ
վերջ այլ եւս ընտրած յեղափոխական վերանորոգիչ
գործունէութիւնը — արգարեւ, այդ բոլորը մի մեծ գործ
էր, հիմնական գործն էր ժողովրդի ազատութեան դա-
տի: Եւ այդ բոլորը կատարվեցաւ միայն մի քանի տար-
ւայ ընթացքում, յեղափոխական շարժումների ազդեցու-
թեան տակ: Բանը նրանումն է, որ հայ ժողովուրդն
իր կեանքի տաք մոխրի տակը պահված ունէր կայծեր,
որոնք դուրս ցայտելով պէտք է հրդեհէին նրա սիրտը,
միտքը, զգացումը: Եւ այդ ժողովուրդը, որ դեռ երէկ
իսկ դողում էր բռնակալութեան առջեւ, ստրուկ, ար-
համարհված, անարգված, հարստահարված, — այսօր նա
հերոս է: Այսօր նա ելնում է գետնի վրայից, որին
շղթայված էր դարեւոր ստրկութեամբ, և քրտնաթոր
աշխատանքից իր ոսկրացած ու կոշտացած ձեռքերը դէ-
պի վնդ բարձրացնելով, լիաբաց բերանով նա ա-
ղաղակում է իր թշուառութիւնը և սպառնում իր հար-
ուածը: Այդ հարուածը նա կը տայ. նա կը տայ այն
հրէշաւոր բռնակալութեան, որ ամօթահար ու երկիւ-
ղով փրկում է նրա դէմ. նա կը տայ բոլոր հա-
րստահարիչներին, կեղեքիչներին, նրա աշխատանքով, նրա
արիւն ու մտով կերակրվող բոլոր օտարակերներին: Եւ

Ինչ ունի անելիք, եթէ ոչ այդ՝ այն դժոխային կեանքից յետոյ, որ նա ունեցել է դարերով և այն ընդարձակ բարօրութեան ձգտումներից ու պահպաններից յետոյ, որ ստեղծել է նրա կեանքը: Սեւ թշուառութիւն, անարգանք, կողոպուտ, կոտորում, սով, — ամենը նա փորձել է և փորձում է այսօր իսկ իր վրայ: Ինչ է մնում նրան կորցնելիք ամեն բան կորցնելուց յետոյ: Ոչինչ նրան այժմ մնացել է ընտրել կամ կեանքը, կամ մահը: Նա ուզում է կեանքը և դրա հետ իր իրաւունքը, իրաւունք ամենքի համար հաւասար — աշխատելու և վաճելու. նա ուզում է իր բարօրութիւնը, ընդհանուրի հաւասար բարօրութիւնը. նա ուզում է ամեն բան — մասնաւոր և հասարակական կեանք իր ծաղկած վիճակում: Եւ իր այդ վերջնական, բուն նպատակը նա ձեռք կը բերէ մէկ օր, թէկուզ այդ օրը լինի հեռու: Եւ այսօր նա իր յեղափոխական փէտատով ու մուրձով հարթում է ճանապարհը դէպի այդ վերջնական նպատակը, դէպի այդ իդէալը: Իր քաղաքական իրաւունքներն է, որ այսօր անմիջական կերպով ձգտում է ձեռք բերել իր արիւնով, և երբ դրան հասնելով, նա կը փշրէ, կը գլորէ ստրկութեան բանտի դռները, հեռու հօրիզօնում նրա հանդէպ կը խաղայ, կը ժպտայ վերջնական մեծ նպատակի արշալոյսը: Եւ աշխատաւոր ժողովուրդն այնուհետեւ իր բոլոր յոյժերով կը ձգտէ դէպի նա, դէպի այդ արշալոյսը — մարդկութեան ընդհանուր բարեկեցութիւնը, այդ աւետեաց աշխարհը:

Բ Ո Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Դ Է Մ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՂԱՏԻԱՅԻ. ՀԻՆԳՃԱՌԱՅԻ ԸՄԲԱՍՏԱՆ ՎԱՅՆՆԵՐԻ. ԿԵՍԵՐԻԱՅԻ. ԻՐ ԹՐԶԱԿԱՆՔՈՎՆԻ ՍԵՐԱՏԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ԴԵՊՈԶԻՏ. ԲԱՆՏԱՅԻՆ ՎԻՃԱԿ. ՏԻՊԱՐ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԸՄՊԱՏԱԿԻ. ԿԱՍԱԿԱՆԻ ՏԱԿԻՑ.

1893 ԹՈՒՆՎԱՆԻ ՍԿԻՋՐԷՆ ՄԻՆՁԵՒ

ԱՊՐԻԼԻ ՎԵՐՋԵՐԸ ԳԱՂԱՏԻՈՅ ԵՒ ՍԵՖԱՍՏԻՈՅ
ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՊԱՏԱՀԱՅ ԱՊՕՐԻ-
ՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԽԺԴԺՈՒԹԵԱՆՑ
ՀԱՄԱՌՕՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ.

1) Աօգկաթի հիւսիսային կողմը, 12 ժամ հեռա-
ւորութեամբ, Սունկուրլու քաղաքի հայ եկեղեցին գիշե-
րանց կը մտնեն մի քանի թուրք չարագործներ և կը
կողոպտեն եկեղեցւոյն բոլոր արծաթեղէնները: Չարա-
գործաց թուրք լինելն ամեն օրինական փաստերով և
մինչեւ իսկ չարագործաց միոյն կնոջ խոստովանութեամբ
հաստատուած էր, բայց կառավարութիւնն, առանց ա-
մրջնալու, այդ թուրքերն անպարտ արձակելով, եկե-
ղեցւոյն դրացի Արմենակ անուն երիտասարդ մը ձերբա-

կալեց և երեք տարուան տաժանակիր աշխատութեան դատապարտեց, պատճառելով թէ այդ հայու կացինը եկեղեցւոյ բակին մէջ գտնուած է:

2) Աեսարիայէն մի ժամ հեռաւորութեամբ թաւասի վարի թաղը, մի քանի թուրք սրիկաներ գիշերանց մտնելով նորապսակ յոյնի մը տունը՝ այրը կը կապեն և հարսին ոսկեղարդ մաղերու հիւսքը կտրելով կը տանեն: Թաւասի ոստիկանապետ ֆիրիշիօն օղլու Ահմէտ գիտնալով հանդերձ գործին հեղինակները (որոնք իւր ընկերներն են)՝ լուր կը տարածայնէ թէ սորա հեղինակներ քրիստոնեայ են, և ուստի կը ձերբակալուին մի քանի անմեղ յոյն երիտասարդներ, որք բաւական ժամանակ և դրամ վատնելէ վերջ իրենց անմեղութիւնը հաստատելու համար՝ կարճակուին ազատ. բուն չարագործք կը մնան անպատիժ:

3) Միջնակէս Թաւասի վարի թաղը Աքիլեւս անուն Յոյն երիտասարդի մը տունը գիշերանց մտնելով, Աքիլեւսը կը կապեն, կը ծեծեն, կը վիրաւորեն չարաչար և դժբաղդ հարսը լլկելէ յետոյ՝ թէ գլխի և թէ տան մէջ գտնուած ծանրագին իրեղէնները յափշտակելով կերթան: Այս չարագործք եւս կը վայելեն պաշտպանութիւնը վերոյիշեալ Ահմէտի *), որ միւս կողմէն կստիպէ զԱքիլեւս որ չարագործութիւնը հայ երիտասարդներու վերաբերէ: Աքիլեւս կընդգիմանայ, գիտնալով արդէն բուն չարագործները, բողբո կը բառնայ անոնց դէմ, բայց ապարդիւն:

*) Այս Ահմէտ, ուխտեալ թշնամի քրիստոնէից, իբր 3 տարի առաջ մօտակայ գետակէ մը անցնելու պահուն իր ձիուն համետը կը դնէ քահանայի մը վրան, որու իջայ կը նստի և խաչին հայոյելով կանցնի գետակը:

4) Աեսարիոյ հարկւրապետ Սէյֆուլահ՝ խումբ մը ոստիկաններով՝ հայ փախստական մը ձերբակալելու համար քաղաքէն ժամ մը հեռու Հաճըլար անուն տաճիկ գիւղ մը կերթայ: Անդ խումբ մը գիւղացիներ եւս զինելով կը միացունէ իր խմբին և կը սկսի հալածել իր որսը: Երբ կը տեսնէ թէ իր ջանքեր ապարդիւն կելնեն, բոլոր զայրոյթը կը թափէ Աեսարիոյ և յիշեալ գիւղի միջեւ գտնուած՝ քրիստոնէից այգիներու, պարտէզներու և հոյաշէն ամարանոցներու վրայ. իր կատաղած խմբին կը հրամայէ անխնայ բակել, քանդել, այրել այդ շէնքերը, կտրել, խորտակել ծառերը և իսպառ աւերել այգիները *):

5) Աեսարիոյ ճիւղայ բաղարի մէջ հայ նպարավաճառներու նպարեղէնները կը յափշտակեն եւ խանութպաններն անխնայ կերպով կը ծեծեն: Այս բարբարոսութիւնը ի գործ դրուեցան հարկւրապետ Սէյֆուլահի քաջալերած խմբի միջոցաւ: Այս դէպքէն և ընդհանուր կոտորածի մը սպառնալիքէն սարսափած՝ հայերը մի քանի օրեր չի համարձակեցան իրենց աներէն դուրս ելլելու:

6) Աօղկաթի մէջ փետրուարի վերջերը, հարուստ վաճառականներէն եւ ուսումնական դասէն՝ Յակոբեան Պետրոս Էֆէնտիի տունը կը մտնեն գիշերանց 11 զինեալ թուրքեր, դրամ և գօհարեղէններ կը պահանջեն. իրենց խնդիրը կը կատարուի, և սակայն դարձեալ անգրթօրէն կը սպառնան ամբողջ ընտանիքի կենաց, լարե-

*) Այս հրձիգ խմբին պարագլուխներ, որք ցոյցի համար բանտարկուեցան ի Աեսարիա, քանի մը ամսէն վերջ ներման արժանանալով՝ երեքական ոսկի պարգեւ ստացան ի վարձատրութիւն. . .

բով ու չունեննելով խեղդամահ ընել ջանալով: Եւ կը յաջողին խեղդամահ ընել Յակոբեան էֆ.ն, տիկինին վիզը կը կապկպեն, բերանը կը գոցեն և վրան կը դիզեն անկողին, վերմակ ևն. մի ուրիշ սենեակի մէջ չունեննելով կը կապկպեն զաւակաց և սպասուհւոյն վիզերը: Սոցա ճիւղերէն դրացիք հասնելով օգնութեան՝ ընտանիքը կը գտնեն դիակնացած, մայրը կիսամեռ, զաւակները ուղորմելի դրութեան մէջ: Այդ չարագործաց վեցը ձերբակալուեցան և այդ ձերբակալելոց երկուքը խոստովանեցան եղելութիւնը. բայց յետոյ տեղական կառավարութեան մասնաւոր հրահանգին համեմատ՝ մի երկրորդ հարցաքննութեան միջոցին ուրացան ամեն ինչ: Այսին թէ բանտն են, բայց այդ մեղ խիստ տարակուսելի կերեւի:

7) Եօզկաթի մէջ Յունուարի սկիզբները մանուկ մը կը մեռնի զոր քրիստոնեայք կը տանին ու կը թաղեն: Ոստիկաններ թաղուած զէնք գտնելու յուսով երիցս բացին գերեզմանը և վերջապէս երբ փոկրիկ դիակէն ի զատ ոչինչ գտան՝ պղծեցին գերեզմանը:

8) Եօզկաթէ վեց ժամ հեռաւորութեամբ քէօհնէ գիւղի մէջ խուզարկութեանց միջոցին՝ ոտից կոխան ընելով կը սպաննեն մի հայ մանուկ: Այս սպաննութեան առթիւ տարաբարդ ծնողաց կողմէն մատուցուած բոլոր աղերսագրեր ու հեռագրեր բացարձակապէս անխելի կը մնան:

9) Եւսն քէօհնէ գիւղի մէջ՝ Եօզկաթի միւտիր Մէհէմմետ Շիւքրի էֆ. եւ իւրայինք Գապագճեան Յովհաննէսի տանը խուզարկութեան ժամանակ՝ մի կարգ անարգանք տեղալէ վերջ՝ տանը արժեքաւոր կարասին և իրեղէնները կը յափշտակեն: Ասկէ քաջալերուած՝ թուրք

խուժանը կըսկսի թալանել գիւղը: Հարստահարուողք կը բողբեն Եօզկաթի կասաւարութեան, բայց բողբ, աղերս, հեռագիր, բոլորն ապարդիւն կը մնան:

10) Վարձեալ քէօհնէի մէջ Աւագ անուն մի հայու տուն «մուղիրը էվրագ» փնտռելու պատրուակաւ յիշեալ միւտիրը իւր հետ ունենալով 100 է աւելի թուրք կատաղիներու մի խումբ, կը կոխէ տունը և ոչ սակաւ անարգանքներէ վերջ՝ մէջտեղը գտնուած 3—4 տարուան մանուկը հրելով կը ձգէ կրակարանին մէջ. տղան կայրի և մի քանի օր վերջ կը մեռնի չարաչար մահով: Աւագ եղելութիւնը կիմացունէ այլ և այլ տեղեր, բողբելով հեռագրելով ևն: Գաղատիոյ Կոստակալը յիշեալ միւտիրը՝ առանց քննութեան և պատժոյ ենթարկելու՝ մի այլ գիւղաքաղաքի վրայ կը կարգէ:

11) Եօզկաթի շրջակայ քէլէք գիւղի մէջ Խանճեան հաճիի գործակատար Կարապետի խանութը կը թալանեն ցորեկ ատեն:

12) Պաշտպանութեան համար խճուղոյն վրայ շերտ շերտ Եօզկաթի ոստիկաններէն մի քանիներ՝ Խնճիրլի գիւղէն վերադարձող Կարապետ անուն Եօզկաթցիի մը 90 զուլը, գօտին և ապրանքը կը կողոպտեն: Կարապետ Եօզկաթի կառավարութեան կը բողբէ. գօտին միայն կը վերադարձնեն իրեն. ոստիկանք առանց պատժոյ ենթարկուելու կը պաշտօնավարեն:

13) Ավանազ (Գաղատիոյ եւ Սունկուրլուի միջեւ) գիւղաքաղաքի մօտակայ Չըպլագ թրքաբնակ գիւղը գտնուող կիւրինցի Շիրվանեան Ղազարի սենեակը կը պաշարեն վեց զինեալ չէրքեզներ. կը կողոպտեն 70-80 ոսկոյ ապրանքը, յետոյ կը սպառնան խողխողել խեղճ հայր: Գիւղացիք օգնութեան փութալով հարուածնե-

րու տակէն հաղիւ կազատեն զինք և վերաւոր՝ կը դը-
նեն սայլի մը վրայ ու կը ղըկեն Եօզկաթ, ուր Ղազար
կը բողբէ ու կաղերսէ որ իր վէրքեր դարմանուին եւ
չարագործք ձերբակալուին: Թողունք չարագործաց ձեր-
բակալութիւնը, հիւանդի քննութեան և դարմանման իսկ
անտարբեր կը մնայ կառավարութիւնը: Խեղճ հայը կը
մեռնի 8 օր վերջ: Աւելորդ է ըսել թէ ցարդ ոչ մի
տնօրինութիւն եղած է յայտնի չարագործաց մասին:

14) Եօզկաթէ 2-3 ժամ հեռի մի ձորի մէջ չէր-
քէզներ կը կողոպտեն Ալեքսան 2 սորըրճեան անուն վա-
ճառական մը 25-30 ոսկին և ձին առնելէ վերջ՝ խիստ
կը գանակոծեն ու կը թողուն: Դժբաղդ մարդը գը-
րեթէ սողալով կը հասնի քաղաք, կը դիմէ կառավա-
րութեան, կը բողբէ, բայց իր բողբը, այդ կարգի ան-
թիւ բողբներու նման, կը մնայ անլսելի: Երանի թէ
ասով վերջանար խնդիրը: Հաղիւ իր ցաւերն մոռցած ու
ցաւերէն բուժուած՝ ինքը զոհ կերթայ մի քանի թրքաց
կողմէ յերկրուած զըպարտութեան եւ կամբաստանուի
իբր «քաղաքական յանցաւոր» ու կայսերական ներմամբ
միայն կարձակուի զատկին երկար տանջանքներէ վերջ:

15) Եօզկաթէն 9 ժամ հեռաւորութեամբ Սահաթլը
կոչուած գիւղի եզըր թուրք ննջեցեալի մը համար փոս
մը պատրաստուած էր. այդ պահուն մի հայ գիւղացի
կանցնէր այդ տեղէն. թուրքեր յարձակելով խեղճին
վրայ, կը բռնեն և ողջ ողջ կը թաղեն զայն և երբ հե-
ռուէն կը նշմարեն յուղարկաւորներու գալը՝ կենդանի
թաղեալը փոսէն կը հանեն գրեթէ շնչասպառ:

16) Եօզկաթէն 18 ժամ հեռաւորութեամբ Ռւ-
զունլուի կողմերը հայ անցորդի մը վրայ կը յարձակին թուր-
քեր և խեղճը կողոպտելէ վերջ՝ ամորձիքները կը հանեն:

17) Սերաստիոյ կուսակալութեան Սարը-Օղլան ա-
նուն գիւղին մէջ չորս թուրք սրիկաներ Մարտիրոս ա-
նուն հայէ մը բռնի ստակ կը պահանջեն. երբ մեր-
ժողական պատասխան կառնուն՝ կը խորհին նոյն գիշեր
հայի գլխին հետեւեալ խաղը խաղալ. — Մարտիրոսին
տան կից պարտէզի մէջ յիշեալ սրիկաներ իրենցմէ միոյն
պարանոցը թեթեւապէս կը վերաւորեն և իրենք կը պահ-
ուին. վերաւորեալը կըսկսի աղաղակել «օգնութիւն, օգ-
նութիւն, Մարտիրոս կը մորթէ զիս»: Եւ ահա այս ա-
ղաղակի վրայ դարանակալք, ինչպէս նաեւ այլք, «օգ-
նութեան» փութալով, Մարտիրոսը կը հանեն իւր տունէն,
սաստիկ կը ծեծեն, ապա կը յանձնեն կառավարութեան:
Կառավարութիւնն ալ իր կարգին կը շարունակէ տան-
ջել որսը. հրաշեկ երկաթով կը խարեն շրթները, քիթը,
կռնակը և ծնկաց յօդերուն միջեւ քարեր զետեղելով՝
ծնկաբարձ կը քալեցունեն և այլ այս կարգի տանջանք-
ներով կը ստիպեն խոստովանիլ ինչ որ չէ ըրած:

18) Ղարաձեալ նոյն կուսակալութեան Ղէմէրէկ կոչ-
ուած մեծ գիւղի մօտ՝ Մուտրասըն անուն թիւրքմէն գիւ-
ղի մէջ՝ առեւտրական գործով հոն գտնուող Եղիա ա-
նուն մէկը կը բռնեն ու կըստիպեն որ «յայտարարու-
թեանց» մասին որոշ տեղեկութիւններ տայ իրենց: Երբ
սա կը յայտնէ թէ ինք ոչինչ կրնայ ըսել այդ մասին,
ձեռքերը ետին կապելով կը նստեցունեն կրակի դիմաց
և աստիճան առ աստիճան կը մօտեցունեն կրակին: Երբ
կը տեսնեն որ ծեծի տակ և կրակի առջեւ կը նուաղի,
կայրի և տակաւին «ոչինչ չըգիտեմ» կասէ, հայհո-
յանք տեչալով գլխին կարձակեն խեղճը:

19) Հետեւեալ հրձգութիւնք տեղի ունեցան գրեթէ
յաջորդաբար:

Ա. Մարզուան Օրիորդաց նորակառոյց գօլէճը (Ամերիկեան) ի սպառ Տրոյ ճարակ եղաւ խուսրէվ փաշայի (ատենօք յայտնի աւաղակապետ) մասնաւոր հրահանգով և կարգադրութեամբ: Այս ապացուցուած է ամեն կողմէն օրինական փաւտնորով, մինչեւ իսկ հրծիգներու եւ տեղական պաշտօնէից ոմանց խոստովանութեամբ:

Բ. Եօզկաթի բողոքական հայոց եկեղեցին գիշերով կրակ դրած են. օգնութեան փութացողք հազիւ յաջողած են աղատել շէնքը ամբողջովին հրոյ ճարակ ըլլալէ:

Գ. Եօզկաթէն 13 ժամ հեռաւորութեամբ Մէլէղ գիւղին հայոց եկեղեցին ամբողջովին մոխիր դարձած է: Հրծիգներու թուրք լինելը ամեն կերպով հաստատուած է, բայց կառավարութիւնը որ և է ձեռնարկ ըրած չէ չարագործները պատժելու:

Դ. Յիշեալ գիւղէն դէպ հարաւ 3 ժամ հեռաւորութեամբ Տէնտիլ գիւղին հայոց եկեղեցին մասամբ հրոյ ճարակ եղած է, դարձեալ թուրք հրծիգներու ձեռամբ:

Ե. Տէնտիլէն դէպ հարաւ 3 ժամ հեռու կէմէրէկի բողոքական հայոց եկեղեցին մասամբ հրոյ ճարակ եղած է, նոյնպէս թուրք հրծիգներու ձեռամբ:

Զ. Սեբաստիոյ բողոքական հայոց եկեղեցին նոյնպէս այրած է մասամբ:

Այս բոլոր հրծիգութեանց մասին և ոչ իսկ թեթեւ քննութիւն մը կատարած չէ կառավարութիւնը (ի բաց առեալ Մարզուանի օրիորդաց ամերիկեան գօլէճը, որուն համար, կիմանամք թէ կառավարութիւնը 500 ոսկի տուեալ յանձն առած է): Մի քանի տեղերու մէջ ազոնց մասին բողոքողներն իսկ բանտարկած է:

20) Ամասիոյ մէջ փետր. 16-ին Համբարձում Աշճրեան (Գարաճեան) անուն ընտիր երիտասարդը իր ձիերը վարժեցունելու մեջոցին կը հանդիպի միւթէսարըֆի քեռորդուոյն և սպասաւորին: Այս վերջինք ձիերու վրայ հեծած զէնքեր պարպելով կգթանուին: Համբարձում կը խնդրէ որ ձիարչաւը և զինավարժութիւնը մի բիչ դադարեցունեն, ըստ որում ձիերը կը խտլէին: Թուրքեր կատաղելով՝ կիջնեն իրենց ձիերէն վար և դաշոյնի հարուածով կը խողխողեն Համբարձումը: Կառավարութիւնը ցոյցի համար, եղած բողոքներու վրայ, բանտարկեց մարդասպանը: Բայց հիմա բոլորովին տարբեր մի գոյն կուզեն տալ խնդրոյն, որպէս թէ միւթէսարըֆի քեռորդին իր պատիւը պաշտպանելու համար (‘‘‘’’) սպանած ըլլայ զայն: Հետեւապէս չարագործի աղատ արձակումը մօտ է:

21) Աստարիոյ երեք հայ եկեղեցիներն, ինչպէս նաեւ թոմարլսյի վանքը սաստիկ խուզարկեցին զէնք գրտնելու յուսով և երբ ոչինչ գտան՝ անարգեցին և սրբապղծեցին վայրերը:

22) Ատաղած թուրքեր կը քարկոծեն հայ նեղեցեալ մը և յուղարկաւոր թափօրը. ժողովուրդը հեռագրով եղելութիւնը կը ծանուցանէ սուլթանին, բայց ապարդիւն:

23) Աէմէրէքի մօտ մի խումբ հայ ծխախոտի մաքսախոյսերու վրայ կը յարձակին թուրք գիւղացիներ: Հայեր զինու զօրութեամբ կը դիմադրեն և ահա հեռուէն ու մօտէն չէրքէզներու և թիւրքերու նորանոր զինեալ խումբեր կը հասնին, զնդակահար կը սպանեն կիւրինցի ճանօ անուն քաջ երիտասարդը և վիրաւորելով նորա ընկերները զէնքերնին կը կողպտեն և զիրենք կը յանձ-

նեն կառավարութեան: Կառավարութիւնն ալ այս վի-
րաւորեալ խմբակը «Տայ ասպատակներ» լինելու ամ-
բաստանութեամբ կը խրկէ Գաղատիոյ բանտը:

Հարկ չենք սեպեր երկարել այս տխուր ցանկը: Յայտ-
նի դէպքեր արդէն գրաւեցին հանրութեան ուշադրու-
թիւնը, դէպքեր սարսափի, չարչարանաց, յափշտակու-
թեան, աւերածի, հրկիզման, պատուոյ բռնաբարութեան,
արիւնհեղութեան ևն., որոնց թատր հանդիսացան Սեբաս-
տիոյ և Գաղատիոյ նահանգներ, Կեսարիա, որոյ դէպքի նկա-
րագիրը կը դնենք վարը և Էվքարա, ուր յունվար 8ի պա-
շարմամբ ոստիկաններու և հարիւրաւոր պաշտպօղութներու
կողմէ գործ դրուեցան ամենավայրենի խռովութիւնք: *)

ԿԵՍԱՐԻԱՅԻ ՄԵՑ ԴԵՊՔԸ **)

«Յունուարի սկիզբն էր, ուրբաթ օր մը: Առաւօտուն
կանուխ Կեսարիոյ եւ տեղւոյս գիշերապահք կը տեսնեն
թէ ամեն հրապարակի, պանդոկներու, կառավարութեան
պալատի և կառավարութեան պաշտօնէից տներու պա-
տերուն տաճկերէն գրերով թղթեր՝ «յայտարարութիւնք»
փակցուած են: ***): Անմիջապէս տեղակալին կիմացնեն
խնդիրը: Վերջինս սարսափած թէ մի գուցէ շփոթութիւն
ծագէ թրքաց կողմանէ, կը հրամայէ շուտով առանց մե-
կռն կարգալու ժամանակ տալու՝ բոլոր թղթերը ժողովել:

*) Էվքարայի դէպքի նկարագիրը դրված է յետագայ
երեսներում, «Գաղատիայի բանտարկվածների կրած չար-
չարանքները» գրութեան մէջ:

**) Արտատպված «Հնչակ»-ի Nr 3-ից, 1893 թ.

***): Այդ «յայտարարութիւնները» ղետեղված են
աւելի ցածր:

Իսկոյն կը կատարուի հրամանը և 200-էն աւելի յայ-
տարարութիւններ կը ժողովուին: Տեղակալը կը զարհու-
րի անոնց բովանդակութենէն և միանգամայն կը կորցը-
նէ գլուխը և ինչ անելիքը չիմանար, երբ բոլոր հա-
յաքնակ ու տաճկաքնակ գիւղերէ ու քաղաքներէ ոստի-
կաններ կը շտապեն դէպի նա նոյնպիսի յայտարարու-
թիւնների օրինակներով՝ որ գտած էին պատերուն փակ-
ցուած: Փոքր ինչ ուշքի գալով կուսակալը կը հրամայէ
միեւնոյն ժամանակ հեռագրով իմաց աւել տուլ թանին
եղելութիւնը: Սուլթանը հեռագրով կը հրամայէ գործը
շուտով քննել ու հետեւանքներու մասին իրեն հեռա-
գրել: Այդ նպատակով ալ Պօլսէն կուղարկեն երկու
էսքէր փաշաներ, որոնք հետերին առնելով Գաղատի-
ոյ կուսակալն ու անգլիական հիւպատոսն՝ կուգան Կե-
սարիայ: Ասոնց ռաջին գործը կը լինի 500-էն աւելի
անուանի հայեր ձերբակալել Կեսարիանէ և շրջակայքէն:
Այս բազմաթիւ ձերբակալութիւններէն հայ ժողովուրդը
կը սկսի յուզուիլ: Այդ յուզումն աւելի եւս կը սաստ-
կանայ, երբ կը լսուի թէ ինչ տեսակ անտանելի տան-
ջան անոնք, որոնց վրայ փոքր իշատէ կասկածներ կան:
Իսկ երբ բանտարկուածներէն մին՝ Ռուբէն Ճէ-
վահիր ճեան անուն՝ չը կարողանալով զիմանալ այն
վայրենի տանջանքներուն որ կուտան իրեն, կը սկսի մի
առ մի թւել քաղաքին յեղափոխական կարծուած
հայերուն անունները և երբ այդ առթիւ կը սկսուի մի
ամբողջ շարք նորանոր ձերբակալութիւններ, ժողովուր-
դն այնպէս կը կատաղի, որ կառավարութեան համար
այլ եւս պարզ կըլլայ թէ հայերուն կողմանէ շփոթու-
թիւններ կրնան ծագիլ: Կառավարութիւնը կուզէ այդ

բանին առաջն առնել եւ ատոր միջոց կը գտնէ հետեւեալը. կը սկսի թուրք խուժանը գրչուել հայոց դէմ:

Այստեղ եւ այնտեղ կը սկսին փոքրիկ ընդհարումներ տաճիկներու եւ հայերու մէջ. շուկաներու, փողոցներու մէջ հայերն ու թուրքերը միմեանց պատահած ժամանակ կուրի կը բռնուին: Այդ ժամանակները կը ձերբակալուի Անտոն Ռշտուլի, Հնչակեան, որի տուած պատասխանները հարցաքննութեան ժամանակ կայծակի արագութեամբ կը տարածուին հայերու մէջ եւ անոնց նոր սիրտ ու եռանդ կը ներշնչեն:

Եւրե Ռշտուլին միւս բանտարկեալներու նման հարցաքննութեան կը կանչուի, յանդգնութեամբ կը պատասխանէ. «Ի դուր կը կարծէք թէ այսպիսի միջոցներով, ձերբակալութեամբ, հալածանքներով պիտի յաջողիք գործը խեղդել: Հնչակեան Կուսակցութիւնը եւ անոր ետեւէն ժողովուրդը վճռած են մինչեւ մահ կռուիլ իրենց պահանջների իրագործման համար:» Իսկ երբ կուսակալն կատաղած կը հարցունէ, թէ որոնք են ձեր պահանջները, նա կը պատասխանէ. «Մենք կուզեմք ազատ ապրիլ, կուզեմք որ աշխատաւոր ժողովրդեան համար նպաստաւոր օրէնքներ ըլլան, որ նա ազատուի այլ եւս բռնակալութեան ճիրանէն եւ ձեռք բերէ քաղաքական ազատ կացութիւն. . .» Այլին կատաղած կը հրամայէ լռել իսկ սա աւելի եւս բարձրացնելով իր ձայնը, կըսէ. «Ես կը լռեմ, բայց մեր ետեւը հարիւրաւոր սպառազէն հրետանիներ կան, որոնց լռեցնել նոյնքան դիւրին չը պիտի լինի ձեզ համար. նոքա կը ստիպեն ձեզ մինչեւ վերջ լռել մեր պահանջները եւ կատարել անոնք.» եւ ապա դառնալով դատաւորների շարքի մէջ գտնուող զօրական տեղակալին կըսէ. «Իսկ դու որ այսօր իբրեւ կա-

ռավարութեան շահերուն ջատագով՝ հարցեր կառաջարկես ինձ, դու ինքդ մէկը չես կառավարութեան կողմատողներէն. դու չէիր որ ինձմէ 800 հատ արծաթ մէծիտ առնելով, փոխարէնը 800 հատ հրացանի փամիուշաներ տուիր. . . Տեղակալը կը պապանձուի: Ռշտուլին շղթայակապ դուրս կը տանեն: Բայց զօրական տեղակալը հանգստանալ չը կրնար: Ռշտուլին «վերացնելու» միջոցներին կը դիմէ եւ կը յաջողի ծառայողների միջոցաւ թուանաւորել զայն: Բարեբաղդաբար կուսակալին ժամանակին լուր կը տրուի եւ բժիշկներու օգնութեամբ կազատեն զինքը մահու ճանկերէն, թէեւ անկէ ետք կառավարութեան ճիրանը նետելու համար: Այս բոլորը կիմանայ հայ ժողովուրդը: Եւ երբ կառավարութեան կողմէ նորէն գորգուեալ տաճիկ հասարակութիւնը կը յարձակի հայերի տներու ու այգիներու վրայ եւ կուզէ կրակի տալ, հայերը կատաղի կերպով կը դիմադրեն. կը դիմադրեն իրենց զարմանալի արիութեամբ թուրք խուժանին, երբ վերջինս կը յարձակի եկեղեցեաց վրայ, կաւերէ, կը կողոպտէ, կանանց զարգերը կը խլէ: Տեղի կունենայ մի սարսափելի կռիւ որ կը տեւէ երկար ժամեր: Այդ դէպքերէն վերջը, ինչպէս եւ առաջ, տեղի կունենան հարիւրաւոր ձերբակալութիւններ հայերէն:»

Այս խառնաշփոթ վիճակի մէջ զարմանալի էր տեսնել ընդհանուր թիւրք հասարակութեան գործունէութիւնը: Թիւրքերը պատեհ առիթ գտնելով չարիք չի մնաց որ չի հասցունէին անտէր ժողովրդեան գլխին. ուր որ հասնէին, որովհետ որ խնդիր եւ կամ հին հաշիւ ունենային՝ յանկարծ երեւնալով այսքան «պախշիշ» կամ կաշառք կը պահանջէին. հակառակ պարագային՝ իբրեւ

«յեղափոխական» կառավարութեան մատնել սպառնալով: Գիւղերու և քաղաքներու մէջ քրիստոնէից ապահիկ պահանջներ (թրքաց վճայ) սկսան փձանալ. ոչ մի թուրք կողմէ «Ֆէսատ կեաժուրին» վճարել իր պարտքը, և ոչ մի քրիստոնէայ կը համարձակի բողոք բառնալ կառավարութեան, զի մի գուցէ իր քով մնացած մի քանի փողն ալ պաշտօնեայք յափշտակեն: Խիստ երկար կըլլայ ցուցակն անուանց այն քրիստոնէից՝ որոնք այս մոլեռանդ հասարակութեան զոպարտութեանց ենթարկուելով՝ իբր «քաղաքական յանցաւոր» ամիսներով բանտերու մէջ հեծեցին և դեռ կը հեծեն, երկրին ամեն կողմը, ուր որ հայ կայ, ուր որ բանտ կայ:

Պէտք է գիտնալ որ այս ամենն ալ կառավարութեան անուղղակի և մերթ ուղղակի հրահանգով ու թելադրութեամբ գործադրուեցան: Կեսարիոյ բանտի մէջ բանտակից թուրք գիւղացիներ պարզմտութեամբ կը պատմեն հայերուն թէ իրենց իմամներ ու խօճաներ այս վերջին մի քանի տարիներու մէջ ինչ կը քարոզեն մզկիթներու մէջ. այն է՝ «պաշտպանել սուրբ կրօնը և մարգարէի յաջորդը կեաժուրների դէմ, ամեն կարելի միջոցներով» և պատահաբար կիմանանք որ այս «միջոցներէն» էն կարեւորը փութոյ պնդիւ լուելայն կը հայթայթէ կառավարութիւնը, այն է զի ն ու ց մթ երբ պաշտպանութեն եր ու ք ն եր ու հ ա մ ար: Եւ միթէ ասկէ աւելի շօշափելի ապացոյց մի չէ՞ արիւնկզակ քրդերը զինել, պատուանշաններով մեծարել, կերցունել, խմցունել, ոգեւորել և պատրաստել ահեղ մի կոտորածի, որու թատր ըլլալու սահմանուած է Հայաստան, այդ մարտիրոսներու յաւիտենական հայրենիքը:



ԹԻԻՐԲԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Այստեղ թարգմանօրէն ղետեղում ենք, իբրեւ դուռնիներ, այդ երկու «յայտարարութիւնները», որոնց մասին խօսք կայ աւելի բարձր: Նոյն իսկ թիւք կառավարչական շրջաններից ստուգված է, որ այդ «յայտարարութիւնները» Փոքր Հայքի 82 քաղաքների, գիւղերի և աւանների մէջ ցրված են եղել մի գիշերվայ մէջ (25 դեկտ. 1892):

I.

«Օսմանցիներ.

«Հասել են Արդիւ-Համիդ բռնակալի թագաւորութեան վերջին օրերը, որ անպատվել է Խալափութեան անունը և կեղտոտել Օսմանի սուրբ գահը:

«Այդ բռնակալը յափշտակել է կայսրութիւնը եւ աւերել է մեր սիրած հայրենիքը, և իրան կառավարութեան գլխին պահելու համար՝ մեր ամենալաւ հայրենասէրների այնքան արիւնն է հոսեցնում:

«Այդ գործերի համար վրէժխնդրութեան ձայնը բարձրացել է մինչեւ երկինք:

«Պարծելու ժամը հասել է: Խալափ միլիօնաւոր հաւատարմները, որ ազատ կերպով ու առաջադիմելով ապրում են մէկ այլ ուժեղ տէրութեան ձեռքի տակ, գալիս են ձեր օգնութեան:

«Եւ ի՞նչ քաջարի:»

II.

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԵԾ ԴԱՐՄԱՆՆ ԸՇԽԱՐՀԻՍ

ԱՄԵՆԱԼԱՒ ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆ Է՝

»Այս դարմանն ամենալաւ ու միակն է, որ կարող է բժշկել անեփրիզմը, կաթուածահարութիւնը, շնչարգելութիւնը, անմարսութիւնը եւ ուրիշ հիւանդութիւններ, որոնցից ամեն տարի այնքան մարդիկ են մեռնում թիւրքիայում:

»Հարկւր տարիից ի վեր է, ինչ նա գործածվել է շնդկաստանում նշանաւոր Ժըհան Կումպանիի ձեռքով, եւ շարունակել են գործածել ահա 34 տարիից ի վեր անգլիական մեծ թագուհու՝ Վիկտորիայի յատուկ հրահանգով:

»Այդ դարմանն ունի մեծ ազդեցութիւն ժողովրդի վրայ, որին դարձնում է ուժեղ ու տոկուն մեծ ճիգերի համար: Նա ժողովրդին դարձնում է աչքաբաց եւ ընդունակ: Հատ են խորհուրդ տվել գործածել այն թիւրքիայում, սակայն տգեաներն ու չարահամներն արգելեցին նրա մուտքը այդ երկրում:

»Բայց թող ամենքն ունենան համբերութիւն և ըստպասեն: Քիչ ժամանակից վերջ շնդկաստանից եկող մարդիկ, որ փորձառու և հմուտ են այդ մեծ դարմանի գործածութեան մէջ, կը գան Խալաֆի երկիրն՝ առաջարկելու այդ դարմանը ժողովրդին, որն այդ ժամանակ կը հալածէ այն տգետ ու չարահամ մարդկանց, և այդպիսով Խալաֆի երկրում ամեն տեղ կը թագաւորէ մեծ բաղդաւորութիւն:»

ԴԱՂԱՏԻՈՅ ԲԱՆՏԱՐԿՈՒԹՆԵՐԻ ԿՐԵԾ
ՁԱՐՅՈՒՐԵԼԻ ՁԱՐՁԱՐԱՆՔՆԵՐԸ: *)

Գ ա ղ ա տ ի ա — Բ ա ն տ.

»Գաղատիոյ բանտէն կը գրեմ այս տողերն: Կեսարիայէն, Եօզկաթէն, Մարգուանէն և այլ մի քանի տեղերէն յաջորդաբար թւով 500 հոգի էինք իբր քաղաքական յանցաւորներ, որոնցմէ մի մասը ազատ արձակուեցան, թիւրք կառավարութիւնը մինչեւ իսկ չը կարենալով նոցա անմեղութեան վրայ շինծու յանցանքներ բարդել: Անլուր, պժգալի փորձեր ու միջոցներ գործադրուեցան իբր խոտոտմանութեան դեղ ու դարման: Չարչարանք, անարգանք, ծեծ, մերկանք, լլկանք, անօթի ու ծարաւ թողուլ սովորական ձեւակերպութիւնների կարգն անցած էին: Սաստկաշունչ ձմեռը աւելի դառն կը գործէր, գոգցես աջակցելու համար այդ փորձերուն ու միջոցներուն. ցնցոտի խշդեակները՝ անկողնոյ տեղ, մկների կրծած հացի փշտանքները՝ կերակուրի տեղ, աղտոտ սափորիկներու զարշահոտ ջրերն — ամեն բան խնայողութեամբ տրուուեցան հայ բանտարկեալների պապակն ու ծարաւը անցունելու համար. հինաւուրց ժանկոտած ծանրակշիռ շղթաները երեւան հանցին, որպէս և անտանելի ուռմբերն ու գնդակները, փայտեայ ու երկաթեայ ձեռնակապները՝ ոմանց վզին, ոմանց ոտքին և շատերու ձեռններուն կապուեցան՝ խօսեցնելու համար այն բաները, որ կառավարութիւնն ու բանտի պաշտօնեայք կամենային լսել:

Բանտարկուածները խոստովանեցնելու համար աւելի յարմար որոշած էին փոխանակ ցերեկի՝ ձըմար աւելի յարմար որոշած էին փոխանակ ցերեկի՝ ձը-

*) Արտատպւած »Հնչակ«-ի Nr 7-ից 1893 թ.

մեռուան երկար ու ահարկու գիշերները հարցաքննել: Մերթ ժամը Յին, մերթ կէս գիշերին եւ մերթ առաւօտեան դէմ բանտի իւրաքանչիւր նկուղէն կը լսուէին լալախառն ու հեղձամղձուկ հեծկլտանքներ և երբեմն ալ աղիողորմ աղաղակներ — «չեմ գիտեր, չը տեսայ. . . մեռայ», և այլն, որոնց կը խառնուէին թիւրք բանտարկուածներու սոսկալի գոռումն ու գոչումը, ամեն կողմէ երգուած այլաղան և սրիկայական թիւրքերն եւ ըն ու մանին երբ, որպէսզի — կառավարութեան պատուէրով — չը լսուին փայտի հարուածներու տակ կամ տաքցած ու շամբրած շիշերու առաջ, կամ ձիւնի կոյտերու վրայ բոլորովին մերկամարմին ծնրագրող հայ պատանւոյն ու երիտասարդին ճիւն ու վայնասունը: Մին փոյտէ հարուածներու տակ կը գոչէ՝ «ալ մեռայ», ուրիշ մը ձիւնի կոյտերու վրայ գլխէ ի վար թափուած սառ ջրերէն սառսուռ զգալով կը պոռայ՝ «ալ սառեցայ», և անգին մի երրորդը հրաշէկ ու տաքցած շիշերէն ստացած վէրքերի ցաւէն կը ճւայ ու կը ճչէ, աղիողորմ ձայնով ըսելով՝ «այրեցայ, մրկեցայ, ալ կը բաւէ, հրէշներ. մեռցուցէք զիս որ ազատիմ». . . եւ այսպէս շատերը տանջեցին: Անարգանքները, չարչարանքները՝ գրչիս ներածները միայն գրեցի, սակայն գործ դրուեցան նաեւ երբեմն այնպիսի լրբենի միջոցներ թէ պատանւոյն, թէ չափահասներու վրայ, որ լսելով իսկ մարդ կը սարսափի անշուշտ և գրիչներն իսկ կը կասին ու կը պատկառին այդպիսի գաղանային ու վայրենի արարողութիւնները գրելու ու գծելու, որոնք գործադրուեցան կառավարութեան պաշտօնեաներու բացորոշ հրամաններով և բանտի մարդասպաններու ու աւաղակներու ձեռքով:

Այս անլուր ու բարբարոս չարչարանքները սկսան գործադրուիլ տարեգլխի և ծննդեան տօնի գիշերները: Բանտի զոհերն սակայն թողունք բանտի մէջ և այս պահուս քիչ մը բանտէն դուրս ելնենք և տեսնենք թէ ինչեր կը կատարուին Վեսարիոյ մէջ և անոր շուրջ գըտնուող հայաշատ գիւղերը: Վեսարիոյ թիւրքերը կը միանան մօտակայ Հաճըլար կոչուած գիւղի թիւրքերու հետ և կը մտնեն քաղաքի մօտիկ հայոց այգիները. նախ կը ջարդեն ու կոշնչացնեն անոնց ամբողջ բուսականութիւնը, ապա կտակի կուտան գեղեցիկ տուններն ու ամրոցները և յետոյ սպառնական գիրք կը բռնեն Վեսարիոյ քաղաքի հայերու վրայ յարձակելու միտումով: Եւ նոքա սրերով, բրերով, գէնքով կը յարձակին հայերու տներն ու խանութները թալնելու և թէքէ Եօնու ըսուած շուկան, խանութները ու սէրկիները կը կողոպտեն, կը փշոնեն, հայերու վրայ ալ յարձակելով կը զարնեն, կը ծեծեն, կը կոտորեն: Եփքէրէ մեծ գիւղէն ալ ձայն կուգայ, թէ կոխուեցաւ պաշտպանութիւնը, հայոց հարսերը լլկուեցան, կոյսերը պղծուեցան, տղամարդիկ ծեծուեցան ու սպանուեցան, եւ ապա կացիններով դռները խորտակելով՝ շալակներով ու տոպրակներով հայոց տունները կողոպտեցին. և այդ բոլոր տուններու մէջ քանի մը խիստ փնտռուած յեղափոխական բռնելու պատրուակաւ միացած կառավարութեան պաշտօնեաներու հետ և գործելով սոցա հրամաններուն համեմատ: Եւ ատոր փոխանակ սայլերով լեցուն և երբեմն ալ յետիոտն ամեն կողմէ և ամեն գիւղերէ հայեր լեցուեցան բանտի բակն ու ներսը. մինչեւ անգամ բանտի գարշահոտ ճեմին շերտն ու արտաքնոցներն ձերբակալուած հայերու համար ննջարան-

ներ եղան և բանտի բացօդեայ բակը պատուհաններէ կապուած՝ շղթայուածներու համար պատստարանաց տեղի. թշուառ բանտարկուածներն իրենց քսակներն ու արժէքաւոր ինչ որ ունէին կամայ ակամայ բանտի մարդասպաններին յանձնեցին, որպէսզի գէթ արծաթի գնով գնեն մի քիչ հանգիստ: Ոմանք ալ բանտարկուեցան ածուխի շտեմարաններու մէջ, և այդ օրը յատկապէս ածուխ գնուեցաւ և այնտեղ ձգուողներուն վրայ ածուխ, ջուր և կազ միասին թափուեցան ու սրսկուեցան: Այդտեղ բանտարկուած սիրուն պատանիներն, պատուաւոր վաճառականներն ու երիտասարդները յետոյ դուրս ելան ուղի տարօրինակ ու նորահնար բանտէն իբրեւ մի մի ուրուականներ և աղտոտ, փիս խափշիկներ: Աստառաջ կը բերեմ բանտարկուածներէն անոնց անուններն, որք ամենէն խիստ տառաջանաց ենթարկուեցան թիւրք պաշտօնեաներու կողմէ:

1) Շաւարշ Եսայեան, Թալասցի, 40 տարեկան, 4 զաւակներու տէր, տեսուչ և ուսուցիչ՝ Վարդ-Պատրիկեան վարժարանի, վկայեալ ուսումնական խորհրդոյ կենտրոնական վարչութեան կողմէ: Սա առաջինն եղաւ Անսարիոյ եւ նորա շրջակայից բանտարկելոց մէջ. տարեգլխի առաջին գիշերը, ժամը 7-ին, երկու հարիւրապետ, ընդհ. դատախազի օգնական և 30 զինեալ ոստիկաններ սորա տունը կը կոխեն, բոլոր գոյքերն, արկղներն ու սնտուկները թափելէ ու որոնելէ յետոյ, նըստարանները և մինչեւ իսկ առաստաղները կը խորտակեն բան մը փնտռելու պատրուակով և իր գրական բոլոր թղթերն ու գրքերը միատեղ առած, զինքն ալ կը ձգեն բանտը, 48 ժամ շարունակ անօթի ու ծարաւ կը պահեն և 6 օր խոնաւ մերկ գետնի վրայ կը պառկեն:

ցունեն, չը խնայելով նաեւ գաւազանի հարուածները:

2) Սարգիս Թէգեան, Թալասցի, 41 տարեկան, կրկին զաւակներու տէր: Վայրագ գանակոծութենէ յետոյ ցեխի մէջ կը նստեցնեն և գլխէն վար սափորներով, ձմեռ ժամանակ, պաղ ջուր կը թափեն. պետք չկրկնել կը փետտեն, թեւերը կապելով՝ գլխիվայր կը կախեն. ծնկներուն մէջ մեծ քար զետեղելով ծունր գնել կուտան, քորէ սափորիկի սրածայր ըմպիչը նըստուկին անցըր կը խոթեն և միւսի բերնին կը փչեն. կը սխի նորա բերնէն աղբ դուրս գալ փսխել. ապա տաքցուցած շիշ կանցունեն միզանոցին մէջ և մարմնոյն շատ տեղերը նոյնպիսի շիշերով կայրեն: Ութ օր շարունակ այդպէս կը չարչարեն և ի վերջոյ ամենաանողորմ ու կեղտոտ գազանութեամբ բռնի կը ստիպեն սորա և Չուքուրի Զակոբին պատիւը միմեանց բռնաբարել տալ...

3) Արապետ Քէրթմէնեան, Թալասցի, 23 տարեկան, ուսուցիչ: Սորան ալ չարաչար կը գանակոծեն, 4 ժամ ոտքերէն գլխիվար կը կախեն, ջրալից հողի վրայ գիշերը մինչ առաւօտ ծնկներու վրայ կը կանգնեցնեն, վզէն չուան անցունելով՝ գետնին վրայով քարշ կանեն. հազիւ թէ կազատի խեղդամահ լինելէ և վերջն ալ 11 օր ածուխի շտեմարանին մէջ կը փակեն անօթի ու ծարաւ:

4) Ռուբէն Քէհեան, Թալասցի, 40 տարեկան, ամուսնացած. անխղճաբար կը ծեծեն, մերկացնելով գլխէն վար ջուր կը թափեն ձմեռ ատեն մը, ծընկներուն մէջ քարեր զետեղելով ծնրադրել կուտան, ցեխի մէջ պառկեցնելով անգթաբար կը կոխտտեն, և այդ բոլորը կը տեսէ 6 օր:

5) Պաղար Վէզիրեան, Թալասցի, 40 տա-

րեկան, զաւակներու տէր. մերկացնելով ստէպ-ստէպ եր-
կար ժամերով կը գանակոծեն մինչեւ արիւն:

6) Արսէն Գալֆաեան, Թալասցի, 33 տարե-
կան, ամուսնացած. վկայեալ փաստաբան և փոխանորդ
կառավարութեան գանձուն. 4 օր առանց հացի և ջրի
թողնելէ յետոյ զէնճիրլիք կոչուած շղթաներու և կա-
ղի պահարան խցիկի մէջ 11 օր շարունակ կը պահեն
գրեթէ մերկ, չոր հացով միայն կերակրելով, անարգա-
լից հայհոյանք տեղալով ազգի, անձնական ու ընտանե-
կան պատուոյ դէմ:

7) Աբրահամ Խաչատուրեան, Թալասցի,
28 տարեկան, ամուսնացած. կը գանակոծեն խիստ եւ
ցեխի մէջ նստեցուցած շամբուներով կայրեն մարմինը:

8) Նաճը Մաճառեան, կեսարացի, 20 տարե-
կան. մերկացնելով գլխէն ջուր կը թափեն ժամերով. 4
ժամ ալ ցեխի մէջ ծնրագիր կընեն և տաքցուցած ու-
նելիով ոտքերն ու ուսերը կայրեն:

8) Յակոբ Ճէպիտէլիքեան, կեսարացի, 30
տարեկան. սա բոլորովին սխալմամբ բռնած էին ուրիշ
Յակ. Ճէպիտէլիքեանի տեղ. 24 ժամ շարունակ ցեխի
մէջ մերկամարմին գլխէն վար սափորներով ջուր կը թա-
փեն, ապա մարմնոյ շատ տեղերը ունելիքով կայրեն, մի-
զանոցի մէջ տաքցած շիշ կը խոթեն և այլ շատ չար-
չարանք կուտան, և միայն յետոյ երբ կը հասկնայ միւ-
թէսարըֆը թէ այդ անմեղը սխալմամբ բռնած են, կը կան-
չէ իր մօտ և կը բաւականանայ այս քստմնելի խօս-
քերն ըսելով. «ողորմ, հագգընը հելալ էթ, սիզի եան-
լը կէթիրմիշէր» (որգիս, իրաւունքդ նուիրէ, ձեզ սը-
խալ են բերեր):

10) Առաքուր Եփեմ, կեսարացի, 45

տարեկան, զաւակներու տէր. կը գանակոծուի չարաչար
եւ մերկամարմին սափորով միշտ կը թափեն, կը լկէն
չարաչար. գլխիվայր կը կախեն, բերանը բանալով կը
թքեն, օրերով անօթի կը թողուն. և այդ բոլոր չարա-
բանքները 12 օր կը տեսէ:

11) Նաճի Ղազար Մաճառեան, կեսարացի,
60 տարեկան, զաւակների տէր. 42 ժամ անօթի կը
թողուն բացօդեայ տեղ, ձիւնի վրայ, այնպէս որ սաստիկ
կը սառի. միւթէսարըֆ փաշան վախնալով թէ չը մեռ-
նի և գործը ծանրայնայ, թող կուտայ, բայց հազիւ թէ
բանտի դռնէն կենէ՝ խեղճ ծերունին կը մարի ու կկո-
նայ թաւալելով ձիւնի մէջ. ոստիկաններն բազմութեան
առջեւ վերցնելով՝ կը տանեն և կը ձգեն իր տունը:

12) Մարտիրոս Ճիվանեան, Էֆէրէէցի, 18
տարեկան, նոր շրջանաւարտ Մարզուանի անգլիական Ա-
նատուեան Գօլէճի. կը մերկացունեն նախ և վայրենա-
բար կը գանակոծեն, ապա կախաղան կը դնեն և վե-
րըստին կը ձեծեն, այնուհետեւ մերկամարմին կը պառ-
կեցունեն ցեխոտ և ջրալից գետնի վրայ և օրերով ա-
նօթի կը թողուն. նոյն իսկ միւթէսարըֆ փաշան ինքն
իր պաշտօնատան մէջ կապտակէ, կը ձեծէ ու կը հայ-
հոյէ թշուառ պատանեակն:

13) Բարսեղ Տէօքմէճեան, կեսարացի, 27
տարեկան. սորան կը մերկացնեն և այնքան խիստ կը
գանակոծեն, որ արիւն կերեւայ, կուրծքի ոսկորները կը
փասուին և 15 օր շարունակ առատ արիւն կը թքէ:

14) Յովհաննէս Արզումանեան, կեսա-
րացի, 28 տարեկան. սորան մեղադրելով թէ կեսարացի-
ներու կողմէ գործի մը համար Մարզուանի ընկերութեան
պատուիրակ գացած է, աներեւակայելի կերպով կը գա-

նակոծեն. ապա կը մեղադրեն թէ իր, Յովհաննէսի. փաստաբան եղած օրերու մէջ սպանուած թիւրքն ինքն է սպաննած, մինչդեռ թիւրքերու կողմէ սպանուած ըլլալն արդէն վաղուց ստուգուած է, և հրացաններու կոթերով զինւորներն անգութ հարուածներ կը տեղացունեն վրան եւ տանջանք մը չը մնաց որ չը տային նորան անդադար:

15) Ա իւլայէն կ'շաժալեան, թալասցի, 19 տարեկան. ոտքերը շղթայ և ձեռաց վրայ երկաթեայ ծանր ձեռնակապեր դրուելով՝ անօթի ու ծարաւ թողուեցաւ 48 ժամ:

16) Մ'կրտիչ Ս սլիեան, կեսարացի վաճառական, 25 տարեկան. անուրի շտեմարանը ձգուելով վրայէն պարկերով անուրի և կազ թափեցին, և այդպէս ամբողջ 12 ժամ:

18) Յոսէֆ Գարագիւլահեան, Գուլա անուանեալ, կեսարացի, 21 տարեկան. ֆէյզուլահ անուն հարիւրապետը սորան կը ձերբակալէ Մանձրսի մէջ եւ ձեծելով կը բերէ մինչեւ Էֆքէրէ եւ այդտեղ կառավարութեան կեդրոնը ախուր մէջ մէկ ոտքէն գլխի վրայ կը կախէ եւ գլուխը կը թաղէ ձիու աղբի մէջ. 24 ժամ այսպէս կախ թողնելէ յետոյ՝ միւս օրը կեսարիա բերելու տան ճամբան միւս թանթըք քեմաթիպի (հարցաքննիչ) Ահմետ ամենայն բռնութեամբ կը փորձէ ստիպել զԳուլա վկայելու համար, թէ կեսարիոյ այգիի մը մէջ թիւքի մը սպանութիւնն արած է Յով. Արզումանեանը, սպաննելով թէ եթէ այդպիսի վկայութիւն չը տայ՝ չարչարանաց տակ իրեն սպաննել կուտայ: Կեսարիայ հասնելէ յետոյ սաստկապէս կը ձեռնարկէ և շատ օրեր ոտքերուն ծանր շղթայ անցու-

ցած՝ անօթի ու մերկ կը թողուն զէնճիրլիք ըսուած խցիկի մէջ:

18) Ա զիա Մէշէիեան, կեսարացի, 22 տարեկ-

19) Արապետ փափաղեան, պէլէկէսցի, 60 "

20) Սերովբէ Փափաղեան, " 33 "

21) Յակոբ Փափաղեան, " 34 "

Այս չորս անձերը մինչեւ արիւն կը դանակոծեն և շիշերով ու տաքցած ունեղիքներով չարաչար կը տանջն ամբողջ օրերով:

27) Մ'ամաս Բէօփրիւկեան, պէլէկէսցի, 18 տարեկան. սորան երկար ժամերով կը ձեծեն, տաքցած ունեղիքով խիստ կը չարչարեն և ապա մէկ գիշերուան մէջ քանիցս թշուառի պատիւը կը բռնաբարեն գաղանաբարոյ կառավարութեան գաղանաբարոյ պաշտօնեայնէրը:

23) Անտօն Ռշտուլի, Կ. պոլսեցի, 45 տարեկան, զաւակներու տէր. սա կը ձերբակալուի Էֆքէրէ գիւղի մէջ 500-ի չափ պաշտպանութեան և ոստիկան զինւորներու ձեռքով ծննդեան օրերու մէջ: Այդ վայրենիներու ըրած գործերը Էֆքէրէի մէջ այդ պահուն վերը կարճ գրեցինք: Բանտը փոխադրելէն յետոյ ամեն տեսակ չարչարանաց տակ կը ձգեն և կը փորձեն թունաւորել: Տեսնելով բազմաթիւ անմեղներու կրած տանջանքները, Ռշտուլին հարցաքննութեան միջոցին նոցա արձակումը կը պահանջէ, իր վրայ առնելով բոլոր երկվակայելի յանցանքներ, յայտարարելով թէ ինքն չընչակեան Առասկեցութեան գործադիր անդամ մ'է եւ միեւնոյն ժամանակ մերկացնելով ու հարուածելով կառավարութեան բռնակալ ու կեղտոտ արարքներն ու բռնած ընթացքը և պաշտպանելով ժողովուրդեան անբռ-

նաբարելի ու սուրբ իրաւունքները: Թէ գործ գրուած քննութիւններու միջոցով և թէ այդ լեզուին համար մեծ չարեւորութիւն մը ստացաւ Ռշտունիի ձերբակալումը:

Եւփէրէկի բանտին մէջ ջաղացական Ա ը ի ս տ ա կ է ս անուն 45 տարեկան անձը ամբաստանուելով նոյն տաճկական «յայտարարութեանց» խնդրով, թէ իբր ինքն ալ փակցուցած է, անմեղ տեղը ամենասոսկալի անարգանքներու և տանջանքներու մատնած են. նախ 10-ի չափ սրիկաներ բանտի մէջ պատիւը կը բռնաբարեն և յետոյ 4 օր վզէն կը կախեն՝ անօթի ու ծարաւ պահելով: Գրեթէ մերձիմահ՝ կաղաչէ որ իրեն ջուր տան. ոստիկան մը ջրով լի սափորը կը մօտեցնէ և գլխուն զարնելով սափորը կը կոտորուի և թշուառի դուրսը կը վիրաւորուի: Տեղակալին լուր կը տրուի թէ Արիստակէսը մեռնելու մօտ է. այդ ժամանակ կախուած տեղէն վար կառնեն և իբր մեռեալ, մերկամարմին, ձիւնի մէջ կը թաղեն ժամերով, մինչեւ որ կիմացուի թէ թշուառը բոլորովին անմեղ է և վախնալով սահն, անմիջապէս կարձակեն:

Եւփէրէկ բռնուածներու մէջ կը գտնուէր նաեւ կին մը՝ տիկին Ս ը բ ու հ ի ք է լ լ է ճ ե ա ն: Այս դժբաղդ կինը բանտի մէջ շատ տանջանքներ կրելէ վերջ, հակառակ իր արձակած ազիդորմ ճիւղերուն ու լացին, ութ գաղանաբանոյ ոստիկաններու կողմէ բաց տեղ մը կը տարուի և վատարար կը լրկուի:

Վեարադրելով բանտարկուածների այս սոսկալի չարչարանքները, որ հրէշաւոր կառավարութիւն մը կը կատարէ, նկարագրեմ նաեւ փետրուար 16-ի արարողութիւնը, որ նուազ սոսկալի չէր. այն է մեր փոխադրութիւնը Վեսարիոյ բանտէն Գաղատիոյ բանտը: Այդ

թիւն կէս գիշերն անցած՝ ժամ մէկին, ամենք 200 հոգի Վեսարիոյ բանտն ենք դեռ, երբ յանկարծ ահաբեկու ձայնով մը բանտի դռներն կը բացուին, կոշտ ու կոպիտ բանտապանները եւ զինւորները հրմշտկելով կարթնցունեն մեզ և կէս քուն՝ կէս արթուն կը հանեն մեզ մեր անմոռանալի անկողիններէ. ոմանք չիմանալով ինչ կայ՝ այլայլեալ կը մարին կիյնան, ոմանք կը դողան ահ ու սարսափի մէջ, ոմանք հնազանդելով իրենց բազդին խոժոռ լուծեան մը մէջ կեննեն: Վերջապէս կը հանուինք բանտէն դուրս. իւրաքանչիւրի վզին ու ձեռքերուն շղթայ և ձեռնկապ գրուելէ յետոյ, զոյգ-զոյգ և երբեմն 4-5 հոգի իրարու կը կապուին և ապա կառավարութեան դռնէն դուրս կը հանուինք: Ոչ ոք գիտէ թէ ո՛ր կը տարուինք, երբ մէկէն կը տեսնենք այնտեղ նախապատրաստուած կառքերու երկայն շարք մը: Զինւորներու ու ոստիկաններու անպատուաբեր աջակցութեամբ կը լցուինք այդ չոր ու մերկ կառքերու մէջ, ոչ մաշկեակ կամ վերմակ, ոչ բազմոցի նման բան մը եւ ոչ իսկ ցրտին ու ձիւնին դէմ պատասպարելու ծածկոց մը. շատերուս ոտքերն են բոլակ և գլուխը բաց, որովհետեւ աղօտ ճրագով խորամուծ բանտի մէջ հազիւ թէ վրանիս հագնելու միջոց ունեցանք, այնքան աճապարել կուտային մեզ: Վերջապէս գիշերուան խորին մթնութեան մէջ, սաստիկ ձմեռով մը այդպիսի վիճակով ճամբայ ելանք՝ հեծեալ բազմաթիւ ոստիկաններու, պաշտօնեայնորու և զինւորներու հսկողութեամբ, բայց ո՛ր ոչ ոք գիտէր. կառուղին միայն կիմացներ մեզ թէ Գաղատիա կերթանք, որ կառավարութեան կեդրոն է Վեսարիոյ և Եօզկաթի համար: Ամբողջ եօթն օր այդպիսի դժբաղդ և վերջին ծայր թշուառ ճանապարհորդութիւնն ըրինք,

երեկոները գոմերու մէջ, հսկողութեան տակ և քարերու, յարդերու, հողերու և աղբերու վրայ, իսկ ցորեկները ցրտաշունչ քամիէն, փոթորիկէն, ձիւնէն ու անձր-րեւէն կառքերու պատառոտած ու խարխուլ ծածկոցներու տակ կրած ու չոքած՝ վերջապէս հասանք Գաղատիայ ուղղակի բանտը: Ճանապարհի չարչարանքներն ու տառապանքները լաւ հասկցնելու համար բաւական է ասել, որ Գաղատիոյ վատ բանտն արքայութիւն երեւցաւ մեզ ամենուս համար: Անցան ժամանակներ, օրեր, ամիսներ, որ կը գտնուինք այստեղի բանտին մէջ և կը սպասենք մեր դատաւարութեան, որ մօտերս պիտի տեղի ունենայ: Բայց այդ սպասումին մէջ մենք մեր ընկերներէն պիտի կորցնենք, որովհետեւ շատերը խիստ հիւանդացած են և այս օրերս յոյժ ցաւալի կորուստ մը ունեցանք. մեռաւ Արսէն Տէօքմէճեան անունը 23 տարեկան երիտասարդը, որոյ ընդունակութիւններն ու բնութեան ազնւութիւնը խիստ սիրելի էին և ապագայ մը խոստացող: Արսէնը շատ չարչարանքներ կրեց բանտին մէջ. նա շատոնց արդէն հիւանդ կերեւէր, երբ մէկէն վերջին 15 օրուայ մէջ հիւանդութիւնը սաստկացաւ և մահը յափշտակեց: Խեղճը իրմէ մեծ եղբայր մը ունէր բանտի մէջ, բայց ոչ եղբայրը և ոչ այլ ոք թող տուին տեսնուիլ հետը...

Ահա մեր վիճակը: Գառն է մեր ճակատագիրը—մենք գիտենք, բայց ամենատմարդի անձն ալ կը խոստովանի, որ յիբուհի, եթէ դժուր մը կ'այ, այդ դժուրը տաճկական բանտերու մէջն է. եթէ միջնագարեան էնքիզիթօրներու տուած չարչարանքներէն աւելի սոսկալին կուզեն տեսնել—կը գտնեն այն տաճկական բանտերու մէջ. եթէ մարդկային անձի ստորացման ամենագաղա-

նային տեսակը կուզեն—կը տեսնեն այն տաճկական բանտերու մէջ: Կը կրկնենք, չենք տրտնջար մեր ճակատագրին դէմ, բայց նոյն իսկ տաճկական հարցաքննութիւններն ապացուցին որ օր էնք ո վ մեղք չեն կրնար մեր վրայ բարդել և իսկապէս միայն մի բանին երու դէմ տաճիկը կրցաւ իր բէֆին համաձայն յանցանքներ հանել: Այդ «յանցաւորները» սակայն տրտնջող չեն բնաւ. եթէ նոքա ընտրած էին մի «փշոտ ճանապարհ» նոքա ալ գիտէին անշուշտ, թէ ինչ սարսափելի ձախորդութիւններ կը սպասեն իրենց, և այս վայրկեանիս նոքա բան մը միայն կը բաղձան. այն որ բոլոր աշխարհ լսէ բանտարկուածներու արդարութիւն պահանջող ձայնը և դոցա չարչարանքներու ձիւներն ու շղթաներու աղմուկը. որ հայ ժողովուրդն իր մէջէն միշտ նորանոր ոյժեր առաջ բերէ իր արդար դատի պաշտպանութիւնը յառաջ մղելու համար. որ հայութեան այնքան զաւակներու կորստեան վրէժը միախառնուի սուրբ պատերազմի պահանջին հետ և միանգամայն ընդ միշտ ջարդէ այն շղթաները, որք այսօր մեր վրին, ձեռքերուն ու ոտքերուն վրայ կը ծանրանան եւ կը տանեն մեզ մահուան դուռը...

ԳԵՂԱՏԻԱՅԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ.

Վեց ամիս բանտարկված վիճակում պահելուց և վերեւ նկարագրված անասելի տանջանքների ենթարկելուց յետոյ՝ վերջապէս 1893 թ. Մայիս և Յունիս ամիսներում դատի ենթարկվեցան 56 հոգի, որոնցից 14-ը անպարտ արձակվեցան, իսկ մնացած 41 հոգին՝ իբրեւ անդամներ Հնչակեան Կուսակցութեան՝ ամբաստանված այլ և այլ յանցանքներում, դատապարտվեցան 17 հոգի՝ մահան, 6 հոգի՝ 15 տարւայ, 8 հոգի՝ 10 տարւայ և 10 հոգի, որոնց մէջ մի կին, 7 տարւայ բերդարգելութեան: Վերջը, Սեպտեմբեր ամսում, Տիգրան Կիւրպէնկեան, մարդուանցի, 25 տարեկան, ուսուցիչ, ևս դատապարտվեցաւ 10 տարւայ բերդարգելութեան:

Այդ դատավարութեան ընդարձակ տեղեկագրութիւնը, որ իր ժամանակին գետեղվեցաւ «Արեւելքի», «Հայրենիքի» մէջ եւ տաճկական թերթերում, կանխապէս գրված ու խմբագրված էր թիւրք կառավարութեան ձեռքով, որը ջանացել էր դուրս նետել՝ գլորգոյքի մէջ գետեղված՝ այն մի շարք գեղեցիկ պաշտպանողական ճառերը, որ արտասանել էին դատավարութեան միջոցին ամբաստանվածներից՝ ոմանք, և անիմանալի կերպով խեղաթիւրել, աղաւաղել էր հայ ամբաստանվածների ասածները թէ նախնական հարցաքննութիւնների և թէ դատավարութեան միջոցին: Տաճիկ կառավարութեան այդ տեղեկագրութեան մէջ որքան էլ ա-

մեն ջանք թափված է տարօրինակ, տգեղ, ստայօգ, երբեմն մինչեւ իսկ վատ ներկայացնելու հայ ամբաստանվածներին, այնուամենայնիւ ուշադիր ընթերցողը նոյն իսկ տաճկական տեղեկագրութեան մէջ կը գտնէ շատ կէտեր, որոնց մէջ պարզ երեւում է ամբաստանվածների կատարեալ ազնուութիւնը և հարցաքննութիւններում, տանջանքների տակ ու դատավարութեան մէջ նրանց բռնած օրինակելի, անվախ ու գեղեցիկ ընթացքը: Այստեղ սակայն պէտք է ասենք, որ այդ 41 ամբաստանվածներից դուրս կար մէկը, կեսարացի Ռուբէն Ճէվահիր Ճեան անուն անձը, որ տեղեկագրողը (մուսալիր) ստոր դերը կատարեց և դրա համար ազատ արձակվեց, ի հարկէ, իբր քաջալերութիւն իր անամօթ արհեստին:

Ընամիջապէս ներքեւ առաջ բերելով 41 դատապարտվածների անունների ցուցակը, գետեղում ենք նաեւ մի կարեւոր դոկումէնտ (վկայագիր) — այդ դատապարտվածների տված Տեղեկագիրն՝ անգլիական դեսպանին և Պօլսում, Տեղեկագիր, որի մէջ իր ամբողջ տգեղ մերկութեամբ երեւան է հանված տաճկական դատարանի, տաճկական արդարադատութեան էութիւնը:

ՅՈՒԾԱՆ ՀԱՅ ԴԱՏԱՎԱՐՏՎԱԾՆԵՐԻ ԳԵՂԱՏԻԱՅՈՒՄ.

ՄԱՀԻԱՆ ԴԱՏԱՎԱՐՏՎԱԾ.

- 1) ԱՆՏՕՆ ՌԱՏՈՒՆԻ, Կ. Պօլսեցի, 45 տար., խմբագիր և ուսուցիչ:
- 2) ԿԱՐԱՊԵՏ ԹՈՒՄԱՆԱՆ, Մարդուանցի, 45 տար., ուսուցիչ Գօլէժի:

- 3) ՅՈՎՀԱՆՆ ԳԱՅԱՆԱՆ, Մարգուանցի,
28 տար., ուսուցիչ Գօլէժի:
- 4) ՅԱԿՈԲ ՊԱՀԼԱՌՈՒՆԻ, Կէմէրէքցի,
42 տար., վաճառական:
- 5) ԿԱՐՕ ՔԷՐՏՄԷՆԵԱՆ, Թալասցի,
24 տար., ուսուցիչ:
- 6) ՄԱՐՏԻՐՈՍ ՃԻՎԱՆԵԱՆ, Էվքարացի,
19 տար., ուսուցիչ:
- 7) ԴԱՆԻԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ, Տէրէվանքցի,
42 տար., վանահայր:
- 8) ԿԱՐԱՊԵՏ ԱԼԱՃԱՃԵԱՆ, Կեսարացի,
28 տար., վաճառական:
- 9) ՅԱԿՈԲ ՃԷՊԻՏԵԼԻՖԵԱՆ, Կեսարացի,
30 տար., շաքարավաճառ:
- 10) ԲԱՐՍԵՂ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ, Կեսարացի,
27 տար., վաճառական:
- 11) ՄԻՍԱԿ ՔԷՉԷՃԵԱՆ, Եօզկաթցի,
34 տար., ուսուցիչ:
- 12) ՄԻՍԱԿ ԵԱԶԸՃԻԵԱՆ, Թալասցի,
23 տար., կառապան:
- 13) ԹՈՐՈՍ ԾԱՌՈՒԿԵԱՆ, Կիւրիւնցի,
22 տար., վաճառական:
- 14) ԿԻԼՊԷՆԿ ԷԱՄԱԼԵԱՆ, Թալասցի,
20 տար., հիւսն:
- 15) ՅՈՎՀ. ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ, Կեսարացի,
28 տար., քանդակագործ:
- 16) ՄԻՀՐԻՃԱՆ ԽԱՆԱՊԱԽԵԱՆ, Թալասցի,
24 տար., հիւսն:
- 17) ՓԱՆՈՍ ԵԱՂՈՒՊԵԱՆ, Թալասցի,
30 տար., հրացանագործ:

15 ՏԱՐԻ ԲԵՐԴԱՐԳԵԼՈՒԹԵԱՆ.

- 18) Մ Կ Ր Ս Ի Է Փ ա փ ա ղ ե ա ն,
Մարգուանցի, 28 տար., խանութպան:
- 19) Յ ա Ր ու թ Իւն Գ ա Ր ա կ ե ո ղ ե ա ն,
Մարգուանցի, 25 տար., խանութպան:
- 20) Մ ա Ր տ Ի Ր ո ս Գ ա Ղ ու ս տ ե ա ն,
Կէմէրէքցի, 40 տար., քարոզիչ:
- 21) Գ ա Ր Ր Ի Է Ղ Վ ա Ր Դ ու կ ե ա ն,
Էվէրէքցի, 28 տար., կօշկակար:
- 22) Կ ա Ր ա պ ե տ Կ Իւ Ր Ի ն ե ա ն,
Թալասցի, 26 տար., նամակաբաշխ:
- 23) Յ ա կ ո բ Թ ա պ ա ղ Շ ա ն,
Թալասցի 42 տար., ժամագործ:

10 ՏԱՐԻ ԲԵՐԴԱՐԳԵԼՈՒԹԵԱՆ.

- 24) Ս ե ն ե բ ե Ր Ի մ Գ է պ ա պ Ճ ե ա ն,
Եօզկաթցի, 23 տար., ուսուցիչ:
- 25) Մ Ի հ Ր ա ն Վ ա Ր Դ ա ն ե ա ն,
Զօրումցի, 28 տար., խանութպան:
- 26) Յ ա կ ո բ Տ է ո Վ Լ Է թ ե ա ն,
Պալականացի, 44 տար., խանութպան:
- 27) Ս տ ե փ ա ն Պ ո յ ա Ճ ե ա ն,
Էվքարացի, 25 տար., հարկահան:
- 28) Մ ու շ ե Ղ Զ ո Ր Լ ու ե ա ն,
Եօզկաթցի, 30 տար., կաղսպարիչ:
- 29) Յ ա կ ո բ Զ ո լ ա Գ ե ա ն,
Կեսարացի, 25 տար., կօշկակար:
- 30) Մ ա մ ա ս Ու ն ա ն ե ա ն,

- 31) Կեսարացի, 22 տար., մսավաճառ:
Յարուլթիւն Սիմօնեան,
Թալասցի, 48 տար., ապխտարար:

7 ՏԱՐԻ ԲԵՐԴԱՐԳԵԼՈՒԹԵԱՆ.

- 32) Տիկին Սրբուհի Բէլլէճեան,
Էվէրէքցի, 26 տար., տանտիկին:
33) Արսէն Գալֆեան,
Թալասցի, 33 տար., փաստաբան:
34) Շաւարշ Եսայեան,
Թալասցի, 40 տար., ուսուցիչ:
35) Ղազարոս Ատրեան,
Հաճիգիւղցի, 24 տար., խանութպան:
36) Գալուստ Ուղունեան,
Հաճիգիւղցի, 25 տար., վաճառական:
37) Սարգիս Միտիլեան,
Հաճիգիւղցի, 30 տար., ուսուցիչ:
38) Խաչատուր Օղլագճեան,
Հաճիգիւղցի, 35 տար., ոստայնանկ:
39) Յովհաննէս Տիրացուեան,
Կէրմիրցի, 33 տար., կառապան:
40) Դանիէլ Գասաբարսեղեան,
Կեսարացի, 26 տար., ոստայնանկ:
41) Յովհաննէս Գարաքիւլաճեան,
Կեսարացի, 21 տար., սպասաւոր:

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ.

Տէր,

Ինչպէս յայտնի է ձեր բարձրութեան, թուականէս իբր վեց ամիս առաջ Փոքր Ասիոյ ներքին կողմերը տեղ տեղ թրքական յայտարարութիւններ փակցուեցան եւ փակցուելէն անմիջապէս յետոյ ձերբակալութիւնք տեղի ունեցան: Չերբակալելոց թիւը հասաւ գրեթէ 600ի, որոց ամենքն հայ էին: Կառավարութիւնն ամենախիստ միջոցներու և անլուր չարչարանքներու գործադրութեամբ խնդրոյն սա գոյնը տուաւ, թէ այս գործ հայ Գօմիթէի հեղինակութիւն է (թէեւ բուն իրողութիւնն այն էր թէ՛ դոքա թուրք աղբիւրէ մը կուգային): Քննութիւնք ամիսներ շարունակեցին և հուսկ ապա անկարեւոր և կամ անպարտ համարուածներ քառիկ տօնի առթիւ արձակուելէ յետոյ՝ շուրջ 80 հայեր, կանաղան տեղերէ, իբր գործի հեղինակներ, գրգռիչներ ու յեղափոխականներ ամբաստանուելով՝ բարձրագոյն հրամանաւ Գաղատիոյ դատարանին առջեւ հրապարակային դատաստանի ենթարկուեցան:

Սոյն այս խնդրոյ համար «հրապարակային» անուներ, «քաղաքական ատեանը» նորութիւն պէտք է համարել. թէեւ մենք չէինք կրնար հաւատալ թէ այս դատ հրապարակապէս պիտի լսուի և արդարապէս որոշում տրուի, բայց մի քանի պարագաներ, որպէս են մասնաւոր հրաւիրելոց, ամեն ազգի կրօնական առաջնորդաց և

մանաւարդ Անգլիական հիւպատոսի՝ ներկայութիւնը, պահ մը կարծել տուին մեզ թէ կառավարութիւնը վերջնականապէս ժողովրդեան տրտունջը լսելու և խնդիրը հիմնովին ուսումնասիրելով՝ արդարացի կերպով դատելու և գործը գոհացուցիչ կերպով կարգադրելու մի միտում ունեցած լինի. հետեւապէս ուրախութեամբ և ամեն ինչ համարձակ խօսելու պատրաստութեամբ մտանք դատաստան:

Միայնակա՛ն դատաստանի մեզ նկատմամբ գոյացուցած կարծիքը և որոշած մեղապարտութեան աստիճանը այս էր. «Ձերբակալուած հայեր և իրենց հետեւողներ նպատակ ունենալով մի ինքնուրոյն իշխանութիւն ու հայրենիք ձեռք բերելու, առ այս յանգգնած են յեղափոխական ընկերութիւններ կազմել որպէսզի Թուրքիոյ մէջ գտնուած հաւատարիմ հայ հպատակները զինու զօրութեամբ ապստամբեցունեն օսմանեան գահուն դէմ. եւ սոյն վախճանին հասնելու համար սկսած են արդէն գումարումներ ընել, դրամ հաւաքել, զէնքեր և հրոսակային խումբեր պատրաստել, մարդասպանութիւններ գործել, տէրութեան փոստարանը զարնել, ևն., ևն.» Ահա այս ենթադրութեամբ՝ պատժական օրինաց 58-րդ Յօդուածի տրամադրութեան համաձայն՝ ձերբակալելոց իւրաքանչիւրին պատժուիլը կը պահանջուէր՝ աստիճանաբար, որպէս յայտնի է, սոյն յօդուած 8—15 տարի եւ մի մասն ալ յաւիտենական բերդարգելութեան կը տրամադրէ. այս վերջինը նշանակուած էր մեզ բաժին:

Ամեն ինչ պատրաստ էր. դատարանի կողմէն օրինական փաստաբաններ կարգուած էին ամբաստանելոց պաշտպանութեան համար. ամեն կողմէն մի առ մի բերուած էին վկաներ, թուով իբր 35, որոց ամենքին (ի բաց

առեալ մի քանի թուրք սուտ վկաներ) նոյն խնդրոյ համար ի սկզբան բանտարկուած և ապա Զատիկ տօնի առթիւ ներումով արձակուածներ էին: Եւ ահա սկսաւ դատավարութիւնը մայիս 1-ին: Դատավարութեան ամբողջ միջոցին ընդհանուր դատախազը (հայտնաց մի քուրդ) ամբաստանելոց սաստիկ հակառակ խօսեցաւ. իւր բոլոր խօսքեր թիւրք հասարակութիւնը քրիստոնէից դէմ գրգռելու յայտնի բնութիւնը ունէին: — Վրկանները լսելու առթիւ ատենը ամբաստանելոց և փաստաբանից կրկնակի պահանջմանց վրայ, յետ առանձին երկար խորհրդածութեան՝ արդար որոշում և վճիռ մը յայտնեց, որոյ համեմատ «Վկայից ոչ թէ նախնական հարցաքննութեան միջոցին ճշման ու թելադրութեան ներքեւ ըսածները, այլ եւ յաւէտ դատարանի առջեւ երդմամբ ըսածները վաւերական պիտի համարուին»: Բայց այս որոշում թուրքի վրայ մնաց. եւ ահա իսկոյն զգացինք մեր յուսախաբութիւնը և յայտնի եղաւ որ ներկայ դատաստանն ալ ճիշդ ուրիշ անգամներ եղածներու պէս, հակառակ օրինաց և արդարութեան՝ ամեն ձայն խեղդելով, խնդրոյն դարձեալ իրենց ուղած գոյնը տալով, զամենքը դատապարտելու սահմանեալ էր, և եղածները եւրոպական կառավարութիւնները խաբելու համար լոկ ձեւակերպութիւններ էին: Եւ ալ ինչո՞ւ զարմանա՛նք. ո՞չ ապաքէն նոյն իսկ Պօլսոյ մէջ, եւրոպական տէրութեանց ներկայացուցիչներու աչաց առջեւ, մի եւ նոյնը տեղի ունեցաւ Մուսայ պէկի հարածանօթ գայթակղալից խնդրոյն առթիւ:

Պէտք էր տեսնել ամբաստանելոց աղէկուոր վիճակը. սպանդանոցի մէջ դիզուած ոչխարներու կը նմանէին. իւրաքանչիւրն իր կարգին կը ջնար իր անմեղու

Թիւնն հաստատել, նախագահին խնդրին կոչում կընէր Ի զո՞ւր կը ճգնէին ոմանք հասկցունել թէ իրենք ամենագառն տանջանքի ներքեւ խոստովանութիւններ ըրած կամ յերկրած և մասնաւոր հրահանգի համեմատ ուրիշները զօգարտած էին. և ոմանք՝ թէ իրենք նպատակ չունէին օսմանեան կառավարութեան դէմ ապրտամբելու կամ առանձին իշխանութիւն ու հայրենիք կազմելու, այլ իրենք պարզ բողոքողներ էին կառավարութեան ապօրինութեանց դէմ, պաշտօնէից բացարձակ իգործ գրած զեղծմանց ու կեղեքմանց դէմ, և ընդհանրապէս երկրին ամեն կողմը տիրող ընչից, կենաց և պատուոյ անապահովութեան դէմ, և թէ՛ իրենց այս տեսակ ընկերութիւններ կազմելուն՝ նոյն իսկ այս կարգի անտատանելի անտեղութիւններն առիթ էին տուած, և թէ իրենք երկրին թշնամի խռովարարներ չեն, այլ բարեկարգութեան ցանկացող՝ ամենահաւատարիմ բարեկամներ են հայրենեաց, եւն. եւն. դատարանի կողմէն այս կարգի անկեղծ և համարձակ անձնապաշտպանութիւններ կընդմիջուէին, փաստաբաններու խնամքով պատրաստուած ծառեր կըծատուեցան, ամբաստանելոց մի բանիներու կողմէն արտասանուելիք ծառերու հազիւ մէկ մասը լսեցին *), սաստիկ զայրացան և ուղեցին շտապաւ լմնցունել դատը՝ գայթակղութեան տեղի չը տալու համար, ամեն միջոց գործածեցին համարձակախօսները լռեցունելու և դատը ըստ հաճոյս խեղաթիւրելու: Եւ ահա կը ցաւինք ըսելու, յաջողեցան յայսմ, խնդրոյն բողոքո-

*) Թէեւ համարձակախօսներ ամեն առիթ յօգուտ գործածելով՝ խօսեցան աներկիւղ ինչ որ կուզէին յայտնել հրապարակաւ:

վին տարբեր գոյն տալով. եւ վերջապէս մայիս 29-ին նախագահը գոչեց յդատաստանը վերջացած է: Ասկէ երկու օր վերջ այն է Մայիս 31/12 Յունիս, երկուշաբթի օր, մեզ նկատմամբ արձակուալիք դատաւճիռները լսելու տարուեցանք: Ամբաստանելոց նստարաններուն վրայ 56 հոգի էինք. մեծ բաղմութեան մը առջեւ վճիռներ արձակուեցան վերջապէս. 14 անձեր անպարտ արձակուեցան. 10 հոգի (մին՝ կին) 7-ական տարուան, 8 հոգի 10-ական տարուան, 6 հոգի 15-ական տարուան բերդարգելութեան, և 17 հոգի ալ մահուան դատապարտուեցան՝ պատժական օրինաց 54րդ յօդուածի յաւելուածոյն տրամադրութեամբ. 1 հոգի, կեսարացի Ռուբէն Ճէվահիրճեան, տեղեկագրողի (մուխպիր) դեր կատարած ըլլալուն համար ազատ արձակուեցաւ. և համարձակախօսներէն մէկը, քերովբէ Փափաղեան, կանխաւ հեռացուցին տեղէս, և ըսին թէ յետեւաց խանգարում ունենալուն համար Պօլսոյ Զիմարանոցը ղրկուած է դարձանուելու (??). եւ դեռ 30-ի չափ հայեր, ժամանակէ մը ի վեր ձերբակալուած, իրենց կարգին կըսպասեն դատուելու:

Ահա այս է խնդիրը իր պարզութեան եւ ճշմարտութեան մէջ: Պատիժներ կարի ծանր եւ անթօրէն տնօրինուեցան. բաց աստի, բացարձակ զեղծումներ եւ անիրաւութիւններ ի գործ դրուեցան. զայս կըսենք մենք և կը հաստատէ հասարակաց կարծիք, մինչեւ իսկ թուրք հասարակութեան սակաւամիւ խղճամիտ դասին կարծիքը:

Աւահա ներփակեալ կը յղենք ձեր բարձրութեան՝ բանտի մէջ և բանտէն դուրս ի գործ դրուած տանջանաց և խեղճութեանց ցանկերը հանդերձ պարագայիւր ինչպէս նաեւ ընդմիջեալ պաշտպանողական ծառեր, ո

րոնք ճոխ լըյս կրնան սփռել մեր արդար պահանջի և
հետեւած ուղղութեան վրայ:

Ներկայացնելով զայս ձեր բարձրութեան՝ կուգանք
խոնարհաբար խնդրելու որ շնորհ ընէք գործել ի վեր-
կութիւն մեր և ի փառս անգղիական մեծազօր ազգին:

Գաղատիոյ Դատապարտեալք.

Յունիս 6—18, 1893.

Բանտ Գաղատիոյ.

ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՃԱՌԵՐ.

ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՃԱՌ ԱՆՏՕՆ ՌԵՏԱԻՆԻԻ

— Կ. Պօլսեցի —

Տէր Նախագահ,

Քաղաքական շատ ծանր յանցանքի ամբաստանու-
թեամբ հինգ ամիսէ ի վեր ձերբակալուած ու բան-
տարկուած եմ. իմ մասին եղած քննութիւնք թէեւ ա-
ւարտեցան ու դատաստանական գրութիւնք ատենիդ
բովէն անցան, բայց տակաւին ներկայ խնդրոյս իրողու-
թիւնը, նորա սկզբունքն ու ճշմարիտ նպատակը երե-
ւան չեկան. դոքա թանձր քօղի մը ներքեւ ծածկուած
կը մնան. և այսպէս, բուն խնդրի մասին խառնակ ու
շփոթ գաղափարներ կը տիրեն հետաքրքիր անհատի գը-
լսուն մէջ, յուզուած ժողովուրդեան և մինչեւ կառավա-
րութեան բոլոր շրջանակաց մէջ:

Արմանամ ինձ տրուած ամբաստանագրէն, որ բա-
ղաքական յանցաւոր մը կը նկատուիմ ես, առաջին կար-
գի ոճրագործ մը, և ուստի դատապարտելի, ըստ տրա-
մադրութեան պատժական օրինաց 58 յօդուածի *): Եւ

*) Սոյն յօդուած քաղաքական յանցաւորներու յան-

սակայն արդար օրէնք թող չեն տար դատապարտել զոր՝ առանց նորա մասին եղած ամբաստանութիւնները միառմի, ուշի ուշով հաստատելու, և կամ առանց ամբաստանեալի կողմէն ի մէջ բերուած պատճառաբանութիւններն ու հերքումներն ի նկատի առնելու: Եւ ճիշդ այդ նպատակի համար սահմանուեցաւ սոյն հրապարակային դատաստան. այդ նպատակի համար ատենադ շնորհեց փաստաբաններ իւրաքանչիւր ամբաստանեալի, և հիմա հասած է ժամը պարզելու ներկայ խնդրոյս իրողութիւնըն ու նպատակը: Ուստի կը խնդրեմ, ի նկատի առէք այս մասին տալու բացատրութիւններս, հանդերձ մանրամասն պարագայիւր:

Տալու բացատրութիւններս, մէկիկ մէկիկ գրական փաստերով փաստուած ու կենդանի ապացոյցներով հաստատուած, իրենց նպատակ ունին լուսաւորելու մութ գաղափարներ, յստակելու պղտոր ու շփոթ կարծիքներ, պարզելու կառավարութեան կասկածն ու երկիւղը ծանօթ խնդրոյ մասին, ցուցնելու հանրութեան թէ ես և իմ ընկերք՝ ոչ թէ քաղաքական «յանցաւոր», հայրենեաց թշնամի «ոճրագործներ» ենք, այլ հակառակը, սա նուիրական հայրենեաց և առհասարակ եղբայր հայրենակցաց շահը, հանգիստն ու բարօրութիւնը ցանկացող և առ այն՝ ոգի ի բռին ճգնող հարազատ զաւակներն ու հաւատարիմ մշակներն ենք հայրենեաց: Հաստատապէս համոզուած եմ, որ յայնժամ միայն, երբ, ի դարմանումըն չարեաց, ձեռնարկուին և գործադրուին ազդու, հիմնական միջոցներ, յայնժամ միայն այս և սորա նը-

ցանքին համեմատ՝ աստիճանական, իսկ ծանրագոյնին ցրկեանս բերդարգելութեան կը տրամադրէ:

ման խնդիրներ կը դադրին գոյութիւն ունենալէ:

Թէ կայ երկրիս մէջ մի խնդիր՝ հասարակաց միտքերը յուզող և Օսմանեան կառավարութիւնը զբաղեցնող այն ալ է հայկական խնդիրը, որու նմաններ ատեն ատեն յերեւան եկան Զուհաստանի, Սերբիայի, Բոլղարիայի ևն խրտմանց առիթով: Յեղափոխութիւն, ապստամբութիւն, խռովողի մը. բայց, կըսեմ համարձակ, թիւրքական լուծէն ջանալով ազատիլ հայ իշխանի մը, հայ ամիրաներու լուծին քաղցր ըլլալը չենք ըսեր և չենք ուզեր այն: Ամեն լուծ, օտարին կամ հարազատ, միշտ միակերպ ծանր է: Այլ մենք, համարձակօրէն կըսեմ՝ յանուն ներկայացուցած Հնչ. կուսակցութեանս, կուզեմք ձեռք բերել քաղաքական կատարեալ ազատ կացութիւն մը, որ աշխատաւոր ժողովրդեան համար նպաստաւոր օրէնքներ ըլլան տնտեսական և քաղաքական, որով նա կարենայ աւելի յառաջագիմել՝ մինչեւ իր կատարեալ ազատութիւնը: Հակառակ է ժողովրդեան շահուն, հակառակ է մեր սկզբնային կեղեքիչ կառավարութիւնէն ազատելու համար՝ մի այլ հարազատ, կեղեքիչ կառավարութեան ոտքին տակ իյնալ: Մենք, Հնչակեանքս, ամեն ճիգ պիտի թափենք ձեռք բերել հայ ժողովրդին համար, որ մեզ հետ կը քալէ այսօր, այնպիսի հասարակային դրութիւն մը, որ կեղեքուածը, գիւղացին, աշխատաւորը կեղեքողներուն, նորա քրտինքով ապրողներուն դէմ ինքնապաշտպանութեան զէնքեր ունենայ օրէնքներու մէջ և՛ ձգտի իր առաւել ընդարձակ բարօրութեան իրադրութեան տակ իր հեռաւոր ապագային մէջ: Կրնանք այդ զործման տակ ի հեռաւոր ապագային մէջ: Կրնանք այդ զիճակի իրագործման չը ձգտիլ՝ առանց դաւաճան ըլլալու ժողովրդեան կենսական պահանջներուն, առանց

մասնելու անիկա սպառման, կորստեան. ոչ. — ատոր համար է որ մենք յեղափոխական ենք: Արնայ և կուզէ այն վիճակն իրագործել թիւրք տէրութիւնը. ոչ. — ատոր համար է որ մենք ապստամբ ենք: Եւ ինչ անմիտ պիտի կարծուիմք մենք, եթէ ոչ այդ հոյակապ շէնքին, այլ մի հարազատ լուծ ունենալու համար՝ թողլով մեր ընտանիքն ու հանգստութիւն, զոհելով մեր կայքն ու կեանք՝ ելլենք գանք Անատոլիի ներսերը, պահուելու համար փնտռենք այրեր ու խռոչներ, օրերով մնանք անօթի ու ծարաւ, գիշերի խոր լուռութեան մէջ, ամայի լեռներու վրայ վայող բուերու ձայնին տակ, մեր մերկ ու սակաւապետ մարմինները պատսպարելու համար կարօտ մընանք կապերտի ու ապայի կտորներու, հագնինք տրեխներ (չարու) ու պարտաւորինք երբեմն մեր քաղցը յագեցունելու համար կրծել վայրի խոտերու արմատներ ու վայրի պտուղներ. . .

Այս և ներկայացուցած շնչ. կուսակցութեանս պատկանող ընկերներս կուզանք այդ սկզբունքներու և դադափարներու ծառայելու ու զանոնք ժողովուրդեան մէջ ծաւալելու, ձգտելով հասարակութեան բարօրութեան նըպաստելու, ժողովուրդն իր ամեն իրաւանց տէր ընելու և իր տխուր կեանքն ըստ ամենայնի բաղցրացնելու համար: Այս է իմ շարժառիթս, այս է մեր ամենուն շարժառիթն ու սկզբունք, այս է հասարակութեան անմիջական պէտքը, արդար պահանջը. և ահա այս ցանկալի ընդհանուր շահուն, ընդհանուր բարօրութեան մէջ է հայ ազգին ու հայ անհատին, ինչպէս նաեւ մեզ հայրենակից ամեն ազգի և ամեն անհատի, մասնաւոր շահն ու բարօրութիւն:

Թոյլ տուէք ինձ այլ կերպ կանգ առնեմ խնդրին վրայ:

Հայ ազգը նշանաւոր ֆաթիհ սուլթան Մէհմէտ Բ. խանի իշխանավարութենէն, այն է իբեւ 500 տարիներէ ի վեր, Օսմանեան դահուն հովանոյն ներքեւ ապրած է ու կապրի: Այս ազգ սոյն երկար ժամանակամիջոցի մէջ հաւատարմութեան շաղկէն չէ շեղած և ոչ մաղի չափ. եղած է աշխատասէր, մտացի, ճարպիկ, հնարագէտ մի ժողովուրդ: Զայս կը վկայեն պատմութիւնք, ինչպէս նաեւ Օսմանեան տարեգրութիւնք: Ճարտարապետութիւն, փողերանոցի, վառօդարանի, հանրային տրոց, մաքսի տեսչութիւններ և այլ փափուկ պաշտօններու վերին հսկողութիւն հայ ազգի անհատներու ձեռամբ շարունակ գործ դրուած են. միով բանիւ հայեր, իրենց հաւատարմութեամբ, յառաջդիմասէր ձեռններով ու գործունէութեամբ՝ ոչ նուազ բարոյական ու նիւթական ծառայութիւններ մատուցած են երկրին ու կը մատուցանեն տակաւին:

Հայեր, ի հարկէ, այդ հին ժամանակներու մէջ ալ ունէին տուրքեր՝ տէրութեան գանձը հոգալու, այդ ժամանակներու մէջ ալ կը կրէին հալածանք ու զոհանք Նիւխերիներէ, քիւրտերէ և այլ ցեղերէ. այդ ժամանակներու մէջ ալ Օսմանեան տէրութեան և օտար կառավարութեանց միջեւ կը ծագէին քաղաքական ծանր խնդիրներ, երբեմն իսկ պատերազմներ. հայեր այդ հոգաւոր ժամանակներու մէջ ալ կրնային բողոք բարձրացունել օտար տէրութեանց և կամ փայլուն պատրանքներով՝ հակումներ ցուցնել դէպի այս կամ այն կառավարութիւն ու այսպիսով նետել իրենց վրայէն Օսմանեան լուծը: Ուրեմն երբ հայը, որ դարերէ ի վեր այդ չէ արած և մնացեր է միշտ հաւատարիմ, ինչո՞ւ այս վերջին տարիներու մէջ կը տեղացունէ զանազան բո-

ղոքներ, կը բարձրացունէ աղմուկներ, կշարժի, կը խլը-
տի ու կը փաթթուի իր հանդիպած միջոցին: Անտարա-
կոյս պատճառ ունենալու է և պէտք է մի գաղտնիք
կենայ այս բոլոր խլրտմանց ու դժգոհութեան ճիշերու
ներքեւ: Այո, կայ մի գաղտնիք և զայն պարզել դիւրին,
խիստ դիւրին է:

Հայեր ցնորական դաղափար մը չէ որ կը տածեն. նոքա
կուզեն, բնականաբար, հետեւիլ լուսաւորեալ ու զարգա-
ցեալ քաղաքակրթութեան մը շաւիղներուն, և այսօր մի
կարգ նպաստաւոր, մղիչ, մի ուրիշ կարգ աննպաստ,
կաշկանդիչ պարագաներու շնորհիւ կուզեն առաւել բան
երբէք յառաջդիմել դիտութեան ու արուեստից մէջ,
կուզեն երջանկութեամբ վայելել իրենց արդար վաստակ-
ները, կուզեն միով բանիւ ապրիլ իբր մարդ, ապա-
հովեալ կեանքով ու կեանքի բոլոր նպաստաւոր պայ-
մաններով, համընթաց հասարակային արդար պահանջից
ու ձգտմանց:

Եւ երբ այս բնական արթնութեան մէջ կը տես-
նեն իրենց անհատական, ընտանեկան ու ժողովրդային
սուրբ իրաւանց բռնաբարութիւնը, այն է՝ կենաց, պատ-
ւոյ, ընչից բացարձակ անապահովութիւնը եւ մի շարք
ազգային իրաւանց կաշկանդումը, զորս Պերլինի 61-րդ
Յօդուածը հաստատելով՝ յուսոյ խաբուսիկ մի նշոյ-
լով կը խոստանար դարմանել, և երբ փոխանակ դար-
մանուելու, ընդհակառակը, սոսկալի համեմատութեամբ
կաճին ու կը բազմապատկին երկրին մէջ տիրող հալա-
ծանաց, անիրաւութեանց, զրկանաց, բարբարոսութեանց
որակն ու քանակը. երբ, կըսեմ, կը տեսնեն հայեր որ
իրենց կործանումը փութացնելու ու ժողովրդեան գոյու-
թեան վճռական հարուածներ տալու մասնաւոր միտում-

ներ, մասնաւոր եռանդուն ջանքեր կան, — այս դառն ի-
րականութեան հանդէպ՝ բնական չէ որ կատաղին, դի-
ւահարին և յուսահատական ճիգերով մաքառին իրենց
գոյութեան պայմանաժամը երկարելու. ըսէք, խնդրեմ,
բնական չէ, արդարացի չէ այս մաքառում:

Այո, ամեն տէրութեան երկրի մէջ հալածանք կը
պատահին, բայց նոցա մէջ բռնաւորներն ու աւաղակա-
պետներն պաշապանելու, արդարացնելու, շքանշաննե-
րով պատուելու միտումն ու ջանքը միշտ չերեւիր: Մենք
արդարութիւն կուզենք:

Այո, ամեն կառավարութեան ատեաններու ու դա-
տարաններու մէջ ամբաստանեալին, յանցաւորին նկատ-
մամբ օրինաց համաձայն քննութիւններ կը կատարուին,
բայց, մեր մէջ տեսնուած ու մեզմէ խիստ շատերուն
վրայ կատարուածին պէս, ամբաստանեալները խոստո-
վանց ունեւելու և մինչեւ իսկ չը գիտցածնին խո-
սեց ունեւելու համար՝ այս ժողովոյն առջեւ խօսելն
ու լսելը անվայել, անպարկեշտ տանջանքներ ի գործ չեն
գրուիր: Մեր մարմիններն անձեռնմխելի պիտի ըլլան
միշտ:

Այո, ամեն կառավարութեան մէջ, օրինաց ներած
աստիճանով, տուններ կը կոխուին, կը խուզարկուին, բայց
մեր աչաց առջեւ պատահածին պէս պաշտպօղովներ
զապթիկներու հետ միացած՝ տանց դռները չեն խոր-
տակեր ու մտներ, կանանց նուիրական պատիւը չեն բռ-
նաբարեր, տան թանկագին իրեղէնները չեն թալաներ և
տունը աւերակի ու մոխրի կոյտերու չեն վերածեր: Մեր
պատիւը, մեր բնակարանն, մեր հացն անձեռնմխելի պիտի
ըլլան միշտ:

Այսօր Օսմ. տէրութեան մէջ «Հայ և Հայաստան» խօս-

քերը ոչ միայն արտասասնողներն, այլ մինչև իսկ լսողները՝ խիստ հարցաքննութեան, բանտարկութեան, ծեծի ու բազմատեսակ չարչարանաց կենթարկուեն: Մենք խօսքի, ընկերութեանց և գումարումներու ազատութիւն կուզենք:

Այսօր Օսմ. տէրութեան մէջ կարգիլուի ճշմարտութիւնը գրել, սկզբունքներ պարզել, կենսական խնդրոյ վրայ ճառել եւն. ստութեան ու կեղծիքի անարգ գործիք մըն է մամուլը այժմ: Մամուլի ազատութիւն կուզենք:

Եկեղեցական, վանական, դպրոցական, կտակային, ընկերական, ամուսնական և այլ կարեւոր խնդիրներ ընդհանուր ժողովրդեան կամքով պիտի սահմանուին: Հասարակային յարաբերութեանց, կրթութեան և խղճի ազատութիւն կուզենք:

Այսօր Օսմ. տէրութեան պաշտօնէից մէջ համաճարակ դարձած կաշառակերութեան և ղեղձումներու շնորհիւ խեղճ ժողովրդեան կրած տառապանքին և զըրկանքին, դատերու տարիներով երկարաձգումին եւ կարգ մը խեղճ արարածներու, իսլամ և ոչ-իսլամ տարիներով առանց դատաստանի կամ անարդար դատաւճռով բանտերու մուծ և խոնաւուտ անկեանց մէջ հիւժեւուն դէմ ոչ թէ բողոքել, այլ ինքն իրեն նստել ու իր աղէտին վրայ ողբալն անգամ կարգիլուի: Իր պարտքը ճանաչող, օրինական և հասարակութեան վրայ ոչ ծանրացած պաշտօնէական վարչութիւն կուզենք. կանօնաւոր, ազատամիտ և արդար դատարանական գործողութիւն կուզենք:

Այսօր Օսմ. կառավարութեան ամեն կարգի ճշնշունքներն ու բռնաբարութիւնները մի կողմէն և բարբարոս ցեղերու հասուցած աղէտը, հալածանքն ու կառավարութեան ատոնց ըրած ամեն տեսակ պաշտպանութիւններն արեան մէջ կը խեղդեն հայ ժողովուրդը:

Ինքնապաշտպանութեան համար մենք զէնք կուզենք. փոխանակ ժողովրդեան վրայ ծանրաբեռնեալ զօրաց առանձին դասի մը՝ ընդհանուր ժողովրդեան զինաւորութիւն կուզենք:

Այսօր Օսմանեան տէրութեան մէջ ժողովուրդը տնտեսապէս կը քայքայուի, կը մահանայ շնորհիւ ամեն կարգի հարկերու ու տուրքերու ծանրութեան ու եղանակների և պաշտօնեաներու գործած ամեն տեսակ ապօրինութիւններու, շնորհիւ տնտեսական նախաձեռնութեան կաշկանդման, շնորհիւ յարմար հաղորդակցութեանց, ճանապարհներու, կատարեալ բացակայութեան, շնորհիւ կառավարութեան պաշտպանած վաշխառուներու, մեծ կալուածատէրերու, պարտատէրերու և ամեն կարգի կեղեքիչներու, — մինչդեռ տնտեսական յառաջդիմութեան նոր և ընդարձակ պահանջներ են երեւան եկած հասարակութեան մէջ: Տնտեսական ազատութեան և աշխատաւոր դասակարգի շահերու համար կառավարական օգնութիւն ու նպաստաւոր օրէնքներ կուզենք:

Եւ այդ բոլոր պահանջներու գործադրութիւնքը պիտի կատարուին ընդհանուր ժողովրդեան կամքով, անոր նախաձեռնութեամբ և անոր շահերու համաձայն: Ժողովրդեան ամեն չափահասներու ուղղակի ընտրական իրաւունքը կը պահանջենք, որ իրեն քուէներով պիտի ընտրեն և գումարեն Ազգային ժողով մը:

Ահա, տէր նախագահ, մեր, հայ ժողովրդեան ներկայ ան միջակայն պահանջները, որոց իրագործման նա պիտի դիմէ, սախեալ է դիմելու և արեան ծովու միջով իսկ, քանի որ այլ կերպ չը կրնար հասնել իր այդ անմիջական, այդ մօտաւոր նպատակին: Որովհետեւ այլ եւս նա յոգնեցաւ, ձանձրացաւ ստրկութենէն, նոր կեանքի անհանդուրժելի պէտք մը զգալով: Եւ եթէ այսօր,

վաղը նա արեան հեղեղներ թափելով հարթէ իր ճան-
բան դէպի իր ազատութիւնը, ատոր պատասխանատուն
պատմութեան առջեւ ինքը չը պիտի լինի: Ամեն համ-
բերութիւն իր սահմանն ունի. . . Կանաչ ճիւղերը կա-
րելի է մինչեւ մէկ աստիճան ծռել, բայց երբ այդ աս-
տիճանը կանցնի՝ կը կտորին: Մարդիկ երբեմն մեծ չա-
րիքներու, նոթութեան, ծարաւի, ցուրտի եւ այլն կրնան
դիմանալ, բայց երբ չափն անցնի՝ այլ եւս չը կարենա-
լով դիմանալ՝ կամ ինքզինքնին կը կորսնցունեն եւ կամ
կը ձեռնարկեն աւարի, կոտորածի, յափշտակութեան:
Օղը կարելի է շիշի մէջ ճնշել մինչեւ այսինչ աս-
տիճան, եւ այդ աստիճանը որոշ է, բայց երբ այդ աս-
տիճանը կանցնի՝ շիշը կը պայթի եւ գուցէ փնաս պատ-
ճառէ զինք ճնշողին ու մօտակայից: Արդ, որո՞ւ է յան-
ցանքը, ճիւղին որ կտորեցաւ եւ կամ կտորիլ ստիպուե-
ցաւ, թէ ոչ ձեռքին, որ զայն չափազանց ծռեց. աւա-
րի եւ յափշտակութեան յանդգնող նոթի ամբոխին,
թէ ոչ՝ նոթութիւն ծնուցանող եւ խեղճութիւն մշա-
կող օրինաց. շիշը պայթեցունող օդին, թէ ոչ՝ օդը չա-
փազանց ճնշողին:

Տէր նախագահ, նշանաւոր է առածն իր ճշմարտու-
թեամբ.

«Աճ պրագմայրն, խըսըղ օլուր,

Զօդ սէյլէմէյին, արսըղ օլուր:»

— Նոթի թողութ՝ կըլլայ աւազակ,

Թէ շատ զօուցէք՝ կըլլայ անառակ:

Թէ որ ես եւ իմ ընկերք ոճրագործներ ենք, ինչպէս
կըսուի, թէ որ մենք ընկերութիւն կազմեր ու կազմա-
կերպութիւններ ըրեր ենք եւ թէ որ այսօր կայ կա-
ռավարութիւնը զբաղեցնող ներկայ խնդիրը, ասոր պատ-

ճանը եւ այս կացութեան պատճառ եղողները պէտք է
փնտռուին, — ահա անոնք են մեղապարտ, անոնք են պա-
տասխանատու եւ ոչ մենք:

Տէր նախագահ, կառավարութիւնը զիս եւ ինձ նը-
ման 40-50 հոգիներ ձերբակալելով անոնց մասին ծանր
պատիժներ տնօրինելէ ի՞նչ օգուտ կը ընայ բաղել. միթէ
խնդիրը ասով վերջացած կըլլայ. կարելի՞ է միթէ եր-
կիր մը կամ գաւառ մը համաճարակէն ազատել՝ նոյն
համաճարակով վարակեալները մեռցնելով. ոչ ապաքէն
ախտը հիմնովին ջնջելու համար պէտք է ջնջել ախտին
պատճառը: Կառավարութիւնը զմեզ ոճրագործ եւ երկ-
րին ու տէրութեան դէմ դաւաճան կը նկատէ, բայց մի-
թէ այս նկատում համաձայն է արդարութեան եւ խղճի
օրինաց: Մեր վերքերը երեւան ենք հաներ, դարման կը
փնտռենք, ահա մեր յանցանքը, ահա մեր ոճիրը: Յան-
ցաւորն այն է որ իր ցաւն ու ախտը կը ծածկէ բժիշկէն:

Քայլ մը յառաջ երթալով կը յայտարարեմ ամե-
նայն համարձակութեամբ թէ՝ մի ժողովուրդի եւ կամ
մի ազգի նեղութիւնն ու տառապանքը ժամանակին առ-
որ անկէ չը ծանուցանող եւ միշտ իրենց անձնական շա-
հերն ու հանգիստն հասարակութեան փնասու մէջ փրնա-
ռող եւ ամենէն աննպաստ պարագայից ներքեւ իսկ թէ
ինքզինքնին եւ թէ բարձրագոյն կառավարութիւնը՝ «ասա-
յըլ պեր քէմալ տըր» (կատարեալ անդորրութիւն կը
տիրէ) պարբերական հեռագիրներով խաբողներ են կեղ-
ծաւոր պաշտօնեաներ, երկրին թշնամիներ. այո՛, անոնք
են հայրենեաց ու ժողովուրդի դաւաճաններ եւ ոչ մենք:

Բարձրագոյն ատեանդ թող շնորհ ընէ մի անգամ
խղճի մտօք ակնարկ մը ձգել մեր անցեալ կենաց վրայ:
Ես եւ իմ նմաններ, ոչ աւազակ ոչ դաւաճան, ոչ մար-

դասպան ու ոճրագործ ենք. այլ այս հայրենեաց և մեր հպատակած կառավարութեան՝ 500 տարիներէ ի վեր ամենայն հաւատարմութեամբ ու անձնութեամբ ծառայող հայրերու հարազատ զաւակներն ենք, ի հարկին պատճառս մեր կեանքը տալու հայրենեաց բարեկարգութեան և հասարակաց բարօրութեան համար:

Տէր Նախագահ, թոյլ տուէք ինձ մի քանի խօսք ալ անել ծանօթ եաֆթաներու (յայտարարութիւն) մասին: Արդարեւ, ինչպէս ձեզ յայտնի եղաւ, այս յայտարարութիւնը Հնչակեան Կուսակցութեանս Կեդրոնէն տրուած հրահանգին համեմատ այս կողմեր՝ նորա բաղմամբիւ Մասնաճիւղերի միջոցով ցրուեցան կամ փակցուեցան, բայց այլ եւս հարկ է ըսել որ ասոր մէջ ալ մի գաղտնիք կայ. և ահա գաղտնիքը, որ է զուտ ճշմարտութիւն: Թէեւ ատոնք այս կողմեր հայերու ձեռամբ ցրուեցան՝ բայց ատոնց խմբագիրն ու հեղինակներ հայեր չեն, ինչպէս շատեր կարծեցին ու դեռ կը կարծեն. անակնկալ մի աղբիւրէ եկան անոնք: Ահաւասիկ ապացոյցներս: Թէ այդ յայտարարութիւնը և թէ ատոնց ցրուումէն ամիսներ առաջ ատոնց օրինակները թարգմանօրէն հրատարակող՝ մեր Հնչակեան Կուսակցութեան գլխաւոր օրգան՝ «Հնչակի» նոյն թիւն՝ այժմ դատարանից սեղանի վրայ է. շնորհ ըրէք, բացէք, կարգացէք նոյն թիւը, ուր պիտի տեսնէք թէ՛ այս յայտարարութեանց մի շատ օրինակներ կանխապէս ցրուած են Միջերկրականի եղերաց վրայ մինչեւ Սիւրիա. բայց զարմանալին այն է որ կառավարութիւնը յայնժամ ոչ մի շշուկ չը հանեցարդեօք ինչո՞ւ... Այո, յառաջագոյն կազմակերպեալ և այսօր Լօնդօնի մէջ գոյութիւն ունեցող իսլամ Գօմիթէն՝ որովհետեւ Միջերկրականի եկերաց մէջ կը-

նար դիւրաւ յարաբերութիւններ ու ճիւղեր հաստատել, այդ կողմեր, իր իսլամ ճիւղերու միջոցաւ յաջողեցաւ ցրուել զանոնք. և թէպէտեւ կառավարութիւնը մի բանի տեղեր իրադեկ եղաւ խնդրոյն գաղտնեաց, բայց խոհեմութիւն սեպեց գործը շուտով ծածկել, հարկաւ մեր իսլամ հայրենակցաց մէջ յուզման և գայթակղութեան առիթ չընծայելու համար: Բայց, որովհետեւ վերոյիշեալ իսլամ Գօմիթէն ներքին գաւառներու մէջ դեռ յարաբերութեան և հաղորդակցութեան դիւրութիւններ չունէր՝ մեր կեդրոնական Գօմիթէին դիմելով անոր օգնութիւնը խնդրեց. Կեդրոնն իր համաձայնութիւնն տուաւ: Բաց աստի, յայտարարութեանց պարունակած իմաստն ու ոգին մեր ընկերութեան նպատակէն ու սկզբունքէն բոլորովին դուրս են: Եթէ շնորհ ընէք և տաք ինձ «Հնչակի» նոյն թիւը, պիտի ապացուցանեմ հրապարակաւ թէ՛ իսլամներէ կազմուած մի Գօմիթէ՛ մի ժամանակ Քրանսիայի մէջ գործեց և La Turquie Libre (Ազատ Թիւրքիա) անուամբ մի թերթ հրատարակեց, ապա ֆըրանսական կառավարութիւնը, համակերպելով թուրք կառավարութեան խնդրանա ցզանոնք իր երկրէն արտաքսեց, ուսկից անցնելով Գօմիթէն յԱնգղիա, հաստատուեցաւ ի Լօնդօն, ուր է և կը գործէ ցայսօր: Կառավարութիւնը սոյն Գօմիթէի և թերթի գոյութիւնը շատ լաւ գիտէ, և ես այս կէտը ձերբակալուած օրէս ի վեր կըրկին կրկին շեշտած ու համարձակ իրողութիւնը յայտարարած եմ կուսակալ Ապետին բաշայի, Կեսարիոյ միւթէսարըֆին և այլ բարձրաստիճան պաշտօնէից առաջ: Բայց դժբա սոյն յայտարարած իրողութեանս վրայ, գէթ առեւտրութիւն, թեթեւ աշօք նայեցան և կամ գրեթէ կառեւորութիւն չընծայեցին, եւ ես այս պարագան ուրիշ

պատճառի չեմ կրնար վերագրել եթէ ոչ այս խորհրդի-
դին, թէ Եւրօպայի մէջ իսլամներէ բաղկացեալ Գամի-
թէի մը գոյութիւնը՝ հոս իսլամ ժողովրդեան մէջ չը տա-
րաձայնելու ու կարգ մը շփոթութեանց տեղի չը տալու
համար՝ ծանօթ յայտարարութեանց հեղինակ ու խմբա-
գիր՝ հայերը հռչակելով՝ մեր իսլամ հայրենակցաց ա-
տելութիւնը մեր վրայ գրգռեն: Բայց միթէ արդարու-
թիւնը կը ներէ մի այսպիսի խեղաթիւրում:

Տէր Նախագահ, ներկայ խնդրոյ նպատակն ու ի-
րողութիւնը ընդարձակօրէն պարզեցի. կը յուսամ թէ
կառավարութեան և հասարակութեան շփոթ և մութ
գաղափարները լուսաւորելու բաւական բացատրութիւն-
ներ տուի. այս ամենը արդարութեամբ և խղճմտօրէն
քննելէ վերջ իմ մասին վճիռ մը արձակել ձեզ կը մը-
նայ. ինչ որ ալ լինի ձեր վճիռն ու որոշումս, այժմէն կը
յայտարարեմ որ խիղճս անդորր է, զի սուրբ նպատակի
մը համար, ըստ կարի, պարտքս կատարած եմ: Կը խընդ-
րեմ միայն ամենէն գեր ի վեր ու նուիրական հայրենեաց
ու հասարակութեան շահն ու իրաւունքը ի նկատի ունե-
ցէք միշտ եւ ապա կուղէք մահապարտ հռչակեցէք զիս:

Իրեր ու մարդիկներ ժամանակի հոսանքին հետ կը
սահին, կանցնին, բայց ապագային համար պատմութիւ-
նը միայն կը մնայ, հաւատարիմ աւանդապահ անցեալ
ժամանակաց. եւ արդ, ապագան ու արդարութիւնը, ան-
համբեր լարուած աչքերով ձեզ կը դիտեն, ձեզ կը
խօսին. եթէ կրնաք անսացէք դոցա ձայնին, ձեռքեր-
նիդ գրէք ձեր խղճին վրայ ու այնպէս արձակեցէք ձեր
վճիռը:

29 Մայիս, 1893
Գաղատիա Դատարան.

II

ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՃԱՌ ԿԱՐՑ ՔԵՐՏԵՆՏԵԱՆԻ

— Թալասցի (Կեսարիա) —

Տէր Նախագահ,

Ժամանակէ մը ի վեր մի դատ կը մղուի մեզի դէմ.
նախնական քննութեանց իբր արդիւնք՝ ձերբակալուե-
ցան ոչ սակաւ անձինք: Կառավարական պաշտօնեայք
գործին խռովարար (ֆէսատ) մակդիրը կուտան, խնդրոյն
գոյնը կը փոխեն. և ի՞նչու:— Պատճառը մէկ է և պարզ.
զի ներկայ խնդրոս իր պարզութեան մէջ՝ իրենց մեր-
կութիւնը և քաղաքականութեան գոյնը հրապարակելու
կը ծառայէ. և ուստի կը պարտաւորին սքօղել զայն, խե-
ղադիւրել զայն ըստ հաճոյս իւրեանց, և այսպէս զմեզ
ներկայացունել իբր ամենամեծ ոճրագործներ. բայց ճշ-
մարտութիւնը՝ եթէ մի ժամանակ իր երեսը պահէ իսկ,
չը մարիր, չը մեռնիր. նոյնպէս արդարութիւնը վեր-
ջապէս մի օր, ուշ կամ կանուխ, իր փայլուն գլուխը
պիտի բարձրացունէ ապագայ հօրիզոնէն և յայնժամ
զմեզ և կամ մեր հողակոյտերը մատնանիշ ընելով պի-
տի հռչակէ թէ մենք ոչ խռովարար, ոչ ոճրագործ և
ոչ հայրենեաց թշնամիներ ենք, այլ անձնուէր, հաւա-
տարիմ, հասարակաց հայրենիքին հարազատ բարեկամ և
նորա բարօրութեան համար կայք ու կեանք զոհելու
պատրաստ ոգիներ եղած ենք: Այս հաստատ համոզու-

մով սկսած գործի և բանտի տաժուկ անկեանց մէջ ու շղթայի տակ. այս է գերագոյն սիրտիանքս:

Տէր նախագահ, դարերու և ժամանակներու ընթացքով բնական է որ ուսում և գիտութիւն օր քան զօր ծաղկին ու ծաւալին ժողովրդեան ամեն խաւերու մէջ. այս յառաջընթաց հոսանքի մէջ ամեն ինչ կը թուղու իր հին գրութիւնը, կը նկրտի ի նորն, ի լաւն, ի լաւագոյնն, միով բանի՝ ի կատարեալն՝ ըստ այսմ, մարդկութիւն, մի ժողովուրդ, քաղաքակրթութեան լուսով քանի. լուսաւորուի այնքան լաւ կը տեսնէ իր մերկութիւնը, իր պահանջները, որոց թիւն ու սահման կաճի եւ կընդարձակիրստ աստիճանի լուսոյ եւ գաղափարի զարգացման: Ահա այս անհրաժեշտ եւ անուական պէտքերու առջեւ՝ բնական մի ձգտում կամայ ակամայ կը մղէ մարդը կամ ժողովուրդը դէպ ա՛յն կողմ՝ ուսկից կը յուսայ լնուլ իւր բազմապիսի պէտքերը, որոնք, իրենց կարգին աստիճաններ պիտի ըլլան նոր պէտքերու, նոր զարգացման:

Պատմութիւնը կը ցուցնէ թէ հայ ժողովուրդը օսմանեան տէրութեան հպատակած օրէն ի վեր՝ այս կամ այն ձեւի տակ՝ հալածանք, զոկանք եղած է իր բաժինը: Եւ ինչո՞ւ, պիտի առարկուի բնականօրէն, հին ատենները, ըսնք երկու դար առաջ մի դար առաջ, դժգոհութեան արտայայտութիւններ, խլրտուքներ չունեցան հայեր: — Պատճառը պարզ է, եւ արդէն՝ ի վերեւ բացատրուած: Այդ ժամանակներ հայեր, ինչպէս նաեւ իրենց հայրենակից ժողովուրդներ, զարգացեալ քաղաքակրթութեան մը լեցուի ճաշակը չէին առած, համեմատաբար մութի մէջ էին, իրենց կեանքին մէջ տնտեսական, հասարակական ներքին նոր պէտքեր և պահանջներ ծագած

չէին տակաւին և իրենց գլխին տեղացած չարիքներուն խիստ փառք տալով՝ կուրօրէն կը համակերպէին պատահածին: Ուստի, այս աւուր հայուն դժգոհութեան արտայայտութիւնները ուրիշ ոչինչի պէտք չէ վերագրել եթէ ոչ՝ յառաջդիմութեան բուռն տենչին, զարգացման նոր արթնցած և կամ արծարծուած կրակոտ փափաքին կեանքի նոր պէտքերու պահանջին, չը մոռնամ նաեւ օրուան խնդիրը, հացի խնդիրը, որ մի հսկայական դեր կատարելու սահմանուած կը թուի: Ներկայ խնդրոյս այս տեսակէտէն նայելով՝ ո՞վ կարող է մեղադրել զմեզ. ո՞չ ապաքէն բնական է մի այսպիսի ձգտում և համընթաց դարուս ոգւոյն, եւ ո՞չ ապաքէն զուր է մաքառիլ այս ձգտման դէմ, պատուար կանգնել այս նոր հոսանքին դէմ:

Թէ մի գործօն ընկերութիւն, շնչակեան անուամբ, գոյութիւն ունի այս երկրին մէջ՝ անուրանալի է այդբայց խիստ անարդար է «խռովարար» մակդիրը տալ այդ կազմակերպութեան: Եթէ ինձ հարցուի՝ փրկաւորաւ մակդիրը կընծայեմ անոր: Եւ արդարեւ այդ ընկերութիւնն ո՞չ միայն հայերը այլ և բոլոր վիճակակից հասարակութիւնը բռնութեան եւ հարստահարութեան ճիրաններէ փրկելու մեծ նպատակն ունի: Զատուիլ Թիւրքիայէն և մենք մեր գլխին մի թագաւոր մի իշխան ունենալն զուտ զրպարտութիւններ են մեզի և մեր կուսակցութեան սկզբանց դէմ. և եթէ մի այդպիսի դրութիւն այսօր իրականանար, կը հաւատամ որ մեր արդի վիճակէն աւելի նախանձելի մի վիճակ չը պիտի լինէր այն: Մենք կը ցանկանանք, այո, հայ, թուրք, յոյն, հրէայ եւն՝ բոլորս միասին, եղբայրաբար, մէկ հողի վերայ, մէկ դրօշի ներքեւ վայելել ազատութեան, արդարութեան, հաւասարութեան քաղցր պտուղները, ապրիլ

ապահով և մարդավայել մի կեանքով և անմասն չի մնալ ցանկալի քաղաքակրթութեան բարիքներէն: Այս է մեր փնտռածը և հասարակութեան ցանկացածը. հոս է երջանկութիւնը և ոչ աշխարհացոյցի գոյները լաւ փոխելու մէջ. այդ սնտոի խաղը ուրիշներուն կը թողունք:

Հարցնենք մի անգամ այն ժողովրդոց, մեծ կամ փոքր, որոնք ունին տէրութիւններ, թագաւորներ, կայսրներ ևւ այլն, հարցնենք թէ այդ անուամբ իրենց վրայ ծանրացող այն ոսկեզօծ լուծերէն գոհ են: Ես իմ մասին անշուշտ եմ, դ՛հ, ո՛չ՝ պիտի պատասխանեն ամենքը, եւ ոմանք այս բացասականին՝ աղիողորմ հառաչներ պիտի կցեն: Ոչ, տէր նախագահ, մենք չենք ցանկար նոր ոսկեզօծ լուծեր յօրինել մեր վզին, մեր, ինչպէս նաեւ աշխարհի բոլոր ժողովրդոց բողբոջ, ամեն տեսակ լուծի դէմ է արդէն:

Եւ արդ ինչպէս չը հառաչենք եւ նորանոր միջոցներու չը դիմենք, մինչ մեր ականջին տակն ու աչքի առջեւ ամեն օր, ամեն ժամ խեղճ մի բաղմութիւն կը տառապի, կը տագնապի վայրենաբարոյ, անուղղայ ցեղերու հարստահարութեանց ներքեւ. մինչ խեղճ, հեղաճմբոյր հայ ժողովրդեան հալալ վաստակն, կայքն ու կեանք և նուիրական պատիւ ի վտանգի են շարունակ. մինչ երկրին մէջ, ամեն կողմ, կը տիրէ բացարձակ անապահովութիւն, որի բնական արդիւնքը կը լինի անակութիւն. աղքատութիւն վիճակագրութիւնք աւելի պերճախօս են. շնորհ ըրէք քննեցէք ու պիտի տեսնէք թէ՛ սա վերջին 3—4—5 տարիներու մէջ որչափ յաճախ և որչափ մեծ անանկութիւններ տեղի ունեցած են: Այս մէկ կողմէն: Ինչպէս չը հառաչենք և ազատութեան միջոցներու չը դիմենք, երբ միւս կողմէն ինքն կառավարութիւնը

նորանոր վէրքեր կստեղծէ, տնտեսական եւ քաղաքական զարգացման առջեւ ամեն կարգի արգելքներ կը ստեղծէ. ամեն տարի կը կրկնապատկէ, կը բազմապատկի արդէն կեցած ծանր տրոց քանակը: Իսկ հաւաքման եղանակը. սիրտ չէ մնացած որ չը վիրաւորի այս սոսկալի հարուածէն. տուն չէ մնացած որ չայրի դժոխքի այս անգութ կրակէն, գիւղ չէ մնացած որ չը քայքայի այս հսկայ աղէտէն: Երկրագործ խեղճ ժողովրդեան, հարկաւարներու և ոստիկաններու, որպէս թէ մահուան սեւ հրեշտակներու առջեւ մահուան գողով կը բռնուի: Երկիրը արդէն յոգնած ու անիծուած, կը զւնայ առատ բերք, ուստի ինչպէս փակել հին հաշիւները, ինչպէս կերակրել ընտանիքի անդամները: Հարկահաւաքներ պէտք է ստանան իրենց պահանջը, ինչ կերպով որ կրնան. և ուստի աղքատ ժողովրդեան կեանքի ամեն կարեւոր պիտոյքները կը վաճառեն և այն չափազանց վատ գնով: Կը վաճառեն խեղճերուն ոչխարն ու կով, էջն ու եղ, տան կահ կարասին, մինչեւ իսկ անկողինն ու վերմակ, մինչեւ որ մերկացունեն տունը, կողոպտեն ընտանիքը ու կործանեն գիւղը: Առ այս ապացոյցներ յառաջ բերելու համար չափազանց պարզամիտ պէտք է լինի մէկը. սորա հանապազօրեայ մերկ իրողութիւններ են ուստի անհերքելի:

Եւ ուստի, ինչպէս չը խորհնք միջոցներ այս չարիքներէն ազատելու համար և ինչպէս չը կազմենք գաղտնի ընկերութիւններ, քանի որ մեր բողբոջները լսելու եւ արդարութիւն ի գործ դնելու տրամադիր մի մարմին չը կայ. եւ ինչ օգուտ բողբոջներ պաշտօնէի մը դէմ իրմէ բարձր, բայց իրեն համախօս պաշտօնէի մը ան, գէթ ազատութիւն կենար համարձակ լալու և մեր կոծն ու բողբոջ մամուլի յանձնելու: Տարաբաղդ ժո-

զովուրդ, ձեռքը կապուած, ոտքը կապուած լեզուն կապուած, մինչեւ երբ այսպէս սպասէ:

Ինչպէս չը հառաչենք եւ ամէն կարելի միջոցներու չը ձեռնարկենք երբ կը տեսնենք որ կաշառակերութիւն բացարձակ տիրող օրէնքի կարգ է անցած, երբ յայտնի իրաւունքներ կը խեղաթիւրուին, երբ ճշմարտութիւնը մոռուի կը ծեփուի, երբ արդարութիւնը կարտաքսուի դատարաններէն, երբ գողեր, աւազակներ, ոճրագործներ անպատկառ կը պաշտպանուին եւ երբ ասպարէզ կը բացուի եւ կրնդարձակուի աղքատացած ժողովուրդը շարաշար կեղեքելու, պաշտօնապէս եւ անպաշտօն կերպով ըսէք, խնդրեմ, միթէ կարելի է տուիալ այս չարիքին:

Տէր նախագահ, կը ցանկամ թէեւ խնդիրը մի քիչ աւելի պարզել, բայց ժողովոյդ ձանձրոյթ չը պատճառելու համար չը պիտի խօսիմ վերջին պատերազմի միջոցին բուլմիլի եւ Անատոլիի կողմերը ճնշուած ժողովուրդեան ենթարկուած սրտաճմլիկ դժբաղդութեանց մասին, չը պիտի խօսիմ Շէյխ ճէլալէտօնի, Շէյխ Օպէյ-տուլլահի եւ այլ բազմաթիւ պէկերու, վոյվոտաներու, աղաներու շահատակութեանց մասին, որոնք Պելլինի զաշնագրոյն 61-րդ Յօդուածոյ հեղինակութեան առիթ տուին. չը պիտի խօսիմ նաեւ այն վատանուն Մուսայ պէկի արարքի մասին, որ գրեթէ դեռ երէկ այնչափ զբաղեցուց կառավարութիւնը, հասարակութիւնը եւ հին ու նոր աշխարհաց մամուլները, եւ ոչ սոյն կարգի հանդէպ տեղի կունենան զանազան անկեանց մէջ, եւ որք կարնոյ, Գուլ Գափուի, Սասնոյ եւ այլն խլրտմանց եւ ցընցմանց առիթ տուին, եւ այս աւուր հալածանքն ու զը-

կանք իրենց կարգին ով գիտէ ինչ ահագին ցնցումներ պիտի ծնանին: Կուզեմ սակայն սա մատաղ հասակիս մէջ իմ եւ ընկերակիցներու՝ բանտերու խորքին մէջ ենթարկուած բռնութեանց եւ չարաբանաց մասին երկու խօսք յաւելուլ եւ ապացոյցներ յառաջ բերել եթէ հարկ լինի:

Ճանօթ խնդրի առթիւ ձերբակալուեցանք, բայց ինչ սոսկալի ձերբակալութիւն, ինչ ահաւոր բանտարկութիւն: Այն ցուրտ, խիստ ցուրտ ձմրան մէջ, այն տըխուր, սեփ սեւ գիշերներու մէն մի ժամեր՝ կարծես տարիներու դանդաղ երկարութիւնը ունէին եւ այդ բոլորի սեւ յիշատակներ դեռ կը ցնցեն տարաբաղդ զոհերուս ոսկորներն ու ամբողջ գոյութիւն: Հնորհ ըրէք մի պահիկ երեւակայել գիշերը կեսարիոյ բանտին մէջ. — Կը լսէք սա աղէկտուր ճիւղերը, յուսահատ աղաղակները, որոնց կը խառնուին գաւազանի հարուածներ: Պատուհանէն ներս նայեցէք մի անգամ տեսէք զոհերը ի գետին փռուած, յանձնուած սա կատաղի, անբարոյ, արիւնարբու ոճրագործներու անգթութեան, որոնք մեզ նման թէեւ բանտարկեալ բացառիկ պաշտօն ունին այս անգամ սա նուրբ խնդրոյն միջամտելու, կառավարութեանն օգնելու մինչեւ որ կորդեան հանգոյցը լուծուի: Ահարկ մը դարձուցէք սա անշարժ, կըր արարածի վրայ. զոհերէն մին է դա: Գունուարի ամենացուրտ գիշերներէն մին, մերկացուցած, ձեռքերն ու ոտքերն իրար կապուած, սափորներով սառն ջուր կը տեղացնեն գլխին վրայ, մարմնոյն վրայ. եւ որպէս թէ այդ գիւլային չարաբանքը չը բաւեր, գաւազանի եւ բիրերու հարուածներ կը տեղան մերկ, սառած, թմրած մարմնոյն վրայ. խեղդուկ հառաչներ միայն կարելի է լսել «ամա՛ն, ամա՛ն...»

Մի ուրիշ խորշի մէջ տարաբաղդ զոհը մէկ ոտքէն գլխիվայր կախուած, 5-6 ժամէ ի վեր գարձեալ մերկ կարազաններու կտրուկ հարուածներ կը փաթթուին մարմնոյն ամեն կողմէն. կաղաղակէ, կը պաղատի. «մեռայ, կեցէք, գթացէք...» — «Սէջլէյէճէքմիսին, խընղըրդ, (խող դու, պիտի զրուցեմ գաղտնիքը): — «Չեր ուզած կերպովը պիտի զրուցեմ, ազատ թողէք զիս, կը պատասխանէ ճարահատեալ զոհը:

Մի այլ խորշի մէջ, արդէն մի քանի օրէ ի վեր այս եւ այն կարգի չարչարանքներու ենթարկուող եւ սակայն պահանջուած խոստովանութիւնը եւ կամ յայտնութիւնը չընող զոհի մօտ կը տանին տաքցուցած երկաթեայ մի հերիւն *). երբ սա դեռ կը յամառի՝ անգթօրէն գործին կը մղեն տարաբաղդի անդամի մէջ մահուան ճիւղեր կը սարսեն խորշը, բայց ոչ կատաղի վըհօններն սիրտը. «խնդրեմ դանակ մը, դանակ մը կողիս, ժամ առաջ ազատիմ չարչարանքէս», կ'աղաղակէ:

Մի քիչ անդին մի զոհ՝ ուրիշ մի գաղանային խումբի մէջ արիւնկղակ ոճրագործներ օրն ի բուն կըստեղծեն նոր միջոցներ, նոր եղանակներ տանջելու, շարելու, եւ կամ, իրենց բառովը՝ «խոստովանցներու»: Զոհը օրերով չարչարուելով անդամալոյծ դրութեան մէջ է եւ դեռ «կը յամառի խոստովանելու». ի լուռ մնալէն եւ մեծ յուսով յաջողութեան՝ ի գործ կը դնեն մի նոր, դիւային, արտասովոր եղանակ. խեցեղեն ջրամանի ծորակը կը մղեն զոհի նստատեղւոյն մէջ, կը փռեն, կուռեցունեն, մինչեւ որ տարաբաղդը աներեւակայ յելի տանջանաց ներքեւ կիյնայ նուազեալ...

*) Պիզ, միլ:

Բայց հերիք, հերիք, ալ փակեցէք ձեր աչքերն ու ականջներն սա դժոխային տեսարաններէն... Ահա-ւասիկ այս տանջանաց մի մեծ մասը իմ անձիս վրայ ի գործ դրուեցաւ. քանիցս տարուեցայ միւթէսարըֆ բաշայի առջեւ, որ զիս բարբարոս շուներու յանձնելով կը ըսէր, «տարէք, դեռ չէ խեղճեցեր, քիչ մ'ալ կարգացէք վրան» (ծեծել): Շատ «կարգացին» վրաս, ծեծեցին, սոսկալի կերպերով տանջեցին եւ ես ճարահատեալ, խօսեցայ ինչ որ կուգէին որ խօսիմ. մահէն պրծելու մէկ ճամբայ կար, այն էր «խոստովանութիւններ» յերկրել եւ կամ ուրիշները զրպարտել:

Ընդհանուր դատախազը ամբաստանեալ ընկերակիցներուս այս կարգի յայտարարութեանց դէմ՝ քանիցս առարկեց ըսելով թէ եթէ իրօք այնպէս չարչարանք եւ բռնութիւն ի գործ դրուած է՝ պէտք էր ժամանակին բարձրագոյն ատենաներու բողոք բառնալիք եւ այլն: Բայց միթէ կարելի էր բողոք բառնալ ամեն միջոցներ փակեցին մեր առջեւ. մեզ չարչարեցին մութի մէջ, խեղճեցին մեր առջեւ. մեզ չարչարեցին մութի մէջ, խեղճեցին մեր ձայնը. և մինչեւ իսկ կերպով մը բողոքելու յաջողողներ ինչ օգուտ քաղեցին: Ես ալ բողոքեցի կուսակալ Ապետին փաշայի, երբ խնդրոյն քննութեան համար Վեսարիա կը գտնուէր: Լրեսց բողոքս, տեղեկացաւ խօսքերուս դառն իրողութեան, բայց լռեց: Ուստի դիւրին է մակաբերել թէ այդ բոլոր չարչարանքներ և բռնութիւն մասնաւոր հրահանգի մը համեմատ ի գործ կը դրուէին:

Տէր նախագահ, թոյլ տուէք, երկու խօսքի մէջ ամփոփեմ մեր բուն նպատակը և այնպէս վախճան տամ՝ պաշտպանողականիս:

Մեր պահանջն է անիրաւութեան դէմ արգարու-

Թիւն, անհաւասարութեան դէմ հաւասարութիւն, բըւ-
թեան եւ բարբարոսութեան դէմ քաղաքակրթութիւն,
ապահով կեանք, հանգիստ հաց: Մենք ժողովուրդն ենք,
հասարակութիւնն ենք. հասարակութեան թշուառութեան
պատճառը մեր կեանքի գէշ, վնասակար պայմաններն են,
իսկ ատենց բարեփոխութեանց արգելք են կառավարու-
թիւնը եւ պաշտօնեայք. իրաւունքը հասարակութեանն է.
հասարակութիւնը իր նուիրական իրաւունքները պիտի
պաշտպանէ, վաղ կամ անագան: Մեր մէջ չիք խորու-
թիւն ազգի, կրօնի եւ հաւատալեաց. յաշս մեր եղբայր
են ամենեքին. մարդկութիւն գերազանց քան ազգու-
թիւն. ահա մեր դաւանանքը: Կէտ մեր նպատակին է ա-
զատել հասարակութիւնը բռնութեան եւ կաշառակործ-
պաշտօնէից անիրաւութեան ճիրաններէն եւ կեանքի գէշ
պայմաններէն եւ ստեղծել տնտեսական եւ հասարակական
ցանկալի կեանք:

Պիտենք որ այս կարգի մեծ խնդիրներ մեծաքա-
նակ զոհերով միայն կը լուծուին, եւ մենք այդ զոհե-
րու շարքէն լինելու պատիւն ու երջանկութիւնը ունինք:
Բայց դատարանդ եւ կառավարութիւն թող չը խաբէ
ինքզինք, խորհելով թէ մեր բանտարկութեամբ, դատա-
պարտութեամբ, ցկեանս արտորանօք կամ տաժանակիր
աշխատութեամբ եւ կամ գլխատմամբ վախճան պիտի գըտ-
նի այս խնդիր. — ո՛չ ո՛չ: Չի քաղաքակրթութեան լու-
սով որ քան զոր կը լուսաւորի հասարակութեան միտք,
եւ այս զգացում, գաղափար կը ծաւալի ամեն խաւերու
մէջ, եւ այսպէս մեր խնդիր, որ ժողովրդային է,
կըզգենու կարեւորութիւն, զօրութիւն, վեհութիւն եւ մի
օր՝ յաղթանակ:

Եւ արդ, ինչպէս կը տեսնուի, մեր գործոց ու վար-

մանց, խորհուրդին ու նպատակի մէջ «հասարակութեան
խաղաղութիւնը վրդովելու» ո՛չ մի կէտ կայ. ընդհա-
կառակը, մենք կողմնակից հասարակութեան՝ ուխտեալ
թշնամիներ ենք ընդդէմ անիրաւութեան եւ բռնութեան:
Ահաւասիկ մեր պահանջն ու ցանկութիւն: Այս պահան-
ջի համար ապրիլ, մաքառիլ եւ եթէ հարկ լինի մեռնիլ՝
է եւ պիտի լինի մեր միակ պարտականութիւնը եւ գե-
րազանց երջանկութիւնը. հեռի մենէ ոճրագործութիւն
եւ կամ այլ խռովարար նպատակ, ժողովուրդեան հարազատ
զաւակներ եւ հայրենեաց համեստ եւ ճշմարիտ քաղա-
քացիներ ենք մենք:

Ես ըսի:

29 մայիս, 1893

Գաղատիա Դատարան.

III

ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՃԱՌ ՄԱՐՏԻՐՈՍ ԹԻՎԱՆԵԱՆԻ

— ԷՎԷարացի (Կեսարիա) —

Տէր նախագահ,

Այլ տեսնէք որ տարիքս դեռ փոքր է, եւ սակայն
սա փոքր հասակիս մէջ մի ամենամեծ ոճիրով ամբաս-
տանուած եմ: Շատ չարչարուեցայ, շատ տանջուեցայ, ա-
նարգուեցայ, այն աստիճան որ կեանքը արժէք չունէր
աչքիս առջեւ եւ կամ աւելորդ մի բեռ էր ուսերուս
վրայ: Ի՞նչ էր պատճառը, որ զիս պատանիս, ենթար-

կեց այդպէս մի կարգ դժոխային տանջանաց: Ազատութիւն տուէր ինձ որ պարզեմ:

Մինչեւ ցարդ շատ տեղ փորձեցի պարզել ներկայ խնդիրը, իր ինչ ըլլալը, բայց չը յաջողեցայ, ըստ որում պարտ էի նախ խնդրոյն պատճառը որոնել անոր համար յանդիմանեցին զիս, լռեցուցին զիս: Վերջապէս քննիչներս ու շարչարողներս զիս չը հասկացան, և կամ չը հասկանալ կեղծեցին, և բնական է որ սխալ ներկայացուցին զիս և դատա: Այժմ քաջալերուած սա վերջին առիթէն, կուգամ պարզել խնդիրը այնպէս, ինչպէս որ է, վստահ լինելով որ առեանդ, ըմբռնելով խնդրոյն կարեւորութիւնը, ամենալուրջ խորհրդածութեան նիւթ պիտի ընէ դայն:

Ներկայ դատիս սկիզբէն ի վեր «հայկական խնդիր» անուան ներքեւ մի խնդիր կը շրջի բերնէ ի բերան. չը գիտեմ ի՞նչ աղբիւրէ յառաջ կուգայ այս գաղափար, այսօրն, խնդիրը «հայկական» կոչել ու անցնիլ: Ինչպէս ամեն քաղաքական ճշմարիտ մարմիններ, նոյնպէս մեր շընչափան կուսակցութիւնն ունի իր ծրագիրը և որ այժմ դատարանիդ սեղանին վրայ կը գտնուի. կը խնդրեմ կարդացէք, քննեցէք և պիտի տեսնուի թէ աղբի, ցեղի, կրօնի, հաւատալեաց ևն խնդիր չը կայ և ոչ ալ՝ մի թագաւորութիւն կազմելու խորհուրդը, զոր կը վերագրեն մեզ, անհունապէս մեղանշելով ճշմարտութեան դէմ: Այս հիման վրայ՝ աւելի լաւ և արդարացի չէր լինէր ներկայ խնդիրը փոխանակ միմիայն հայկականի, կոչել ժողովրդային, հասարակական, ինչպէս որ է:

Մեր պահանջը և դմեղ այնչափ չարչարանքի ու տանջանքի ենթարկող պարագան կուգայ կը կեդրոնանայ հանրութեան շահուն մէջ. հասարակութեան սօրբ

շահը, սօրբ իրաւունքը — ահա մեր նշանաբանը, ահա մեր կեանքը, ահա ապագայի յաղթանակը:

Եւ տեր աղօտ կերպով ըմբռնած են մեր գաղափարը և խիստ շատերուն ալ սխալ կերպով ներկայացուած է այն ու դեռ կը ներկայացուի իբր ամենամեծ ուժի, մահացու մեղք, կործանող սկզբունք ևն. բայց պէտք է յիշել որ հասարակութիւնը մանուկի կը նմանի. ծնողք երբեմն իրենց մանկտիբը շաքարէ եւ ալ նման անուշեղէններէ զգուշացնելու համար՝ բռնիքն բերանին. ծամածռելով «տղաս, դառն է, լեղի է, թոյն է» խօսքերով զանոնք խաբել կուզեն թէեւ, բայց տղայն բնական հետաքրքրութեան բերմամբ՝ չը գիտցածը գիտնալու, չը ճաշակածը ճաշակելու և վերջապէս ճշմարտութեան տիրելու բուռն տենջով՝ իրմէ արգիլուած իրը կը գնէ բերանը, կը ճաշակէ նորա թագուն քաղցրութիւնը, կը հասկընայ իր ծնողաց կեղծիքն ու ստուծիւնը և այնուհետեւ ամեն միջոց կը գործածէ տիրանալու այն քաղցր իրին, գեղեցիկ իրին, զոր պահիկ մը առաջ իրմէ կարգիլէին. կաղաչէ, եթէ չը յաջողի՝ կուլայ, ոտքերը գետին զարնելով, եթէ դարձեալ չը յաջողի՝ կ'ապստամբի և կը գողանայ. վերջապէս կը տիրանայ ցանկացածին:

Ներկայ խնդրս կը կարծեմ թէ ամեն մասամբ կը յարմարի սոյն օրինակին. ինչ գոյն և անուն որ ալ տրուի անոր, հասարակութիւնը միայն լսելով չը պիտի բաւականանայ, չը պիտի խաբուի. ճշմարտութեան վերահասու լինելու ցանկութեամբ պիտի քննէ, պիտի որոնէ պատճառն և սկզբունք, և այս. առանց դժուարութեան, ըստ որում, այսու ինք իր վերքերը, իր պահանջները բերնած պիտի լինի. և վերջապէս մի օր, մօտ ժամանակի մէջ, տեսնելով իր ցանկացածը, իր վերքերու միակ դար-

մանը, պիտի վազէ զայն ընդգրկելու, եթէ արգելուի՝ պիտի փշոյէ ամեն արգելք ու պատուար, մինչեւ որ հասնի և սերտիւ փարի անոր:

Եւրբ ազգաց պատմութիւնը աչքէ անցունենք՝ պիտի տեսնենք յայտ յանդիման, որ ժողովրդային դժգոհութիւններ, տրտունջներ, խլրտումներ նորանոր յառաջագիմութեան դարագլուխներ բացած են: Օսմ. տէրութեան համար մի ուրախարար երեւոյթ պէտք չէ՝ նըկատուի այս, որ ժողովուրդը իր դարաւոր բռնէն կը զարթնու, կը տեսնէ իր մերկութիւնը, իր վէրքերը, իր երկրին տգեղութիւնը ու կրակոյտի, կամ կը ցանկայ, ձեռնարկել միջոցներու, որ պէ՛տք իր անձը լուսով, բուժէ իր և իր երկրին վէրքերը, գեղազարդէ իր հայրենիքը արդարութեամբ, եղբայրութեամբ, ազատութեամբ, վերջապէս, մի առողջ քաղաքակրթութեամբ: Այս է մեր վիճակ, այս է մեր միակ ցանկութիւն. կարճ խօսքով, կուզենք մարդու պէս ապրել և ոչ ստրուկի պէս: Ուստի, երբ այս գնահատելի գաղափարականը կը տածենք, կը պաշտենք և զայն՝ յօգուտ երկրին և հայրենեաց՝ իրականացնելու համար ընկերութիւններ կը կազմենք՝ կառավարութիւնը զմեզ «խռովարար» կանուանէ և կատաղաբար կը հալածէ:

Տէր նախագահ, ինքս խոնարհ մի պատանի, հազիւ բաժնուած դպրոցական սեմէն, հազիւ ոտք կոխած փորձառական կենաց մէջ, սիրտս արդէն կը զեղու դառնութեամբ, տեսնելով ամեն օր, ամեն ժամ, ժողովրդեան անտանելի կացութիւնը, որոյ գլխաւոր պատճառներէն մին յոռի վարչութիւնն է: Հարցուցէք մանաւանդ գիւղացիներուն. ամենքն ալ առանց բացառութեան ձանձրացած են իրենց անձէն, կեանքէն ու կայքէն. կեանքը

շարունակ ճնշող լուծ մի դարձած է իրենց համար: Հարցուցէք քաղաքացիին, բարեկեցիկ համարուած դասուն, վաճառականներուն, կրնայ գտնուիլ մէկը, որ ապահով զգայ իր կեանքը, իր ինչքը և շատ մը տեղերու մէջ՝ իր ընտանի յարկին սուրբ պատիւը: Կառավարութիւնը ինչ աչօք որ նայի ժողովրդեան՝ ժողովուրդն ալ նոյն աչօք կը նայի կառավարութեան. երկիւղ եւ կասկած երկուքին վրայ կը տիրէ հաւասարապէս. կառավարութիւնը ժողովրդեան համար ունի խստութիւն, ժողովուրդը կառավարութեան համար ունի նողկանք: Այս մի բնական կարգ է. չէք հաւատար այժմ ինձ հետ թէ անհրաժեշտ անմիջական պէտք ունինք բարեկարգութեան, հիմնական բարեկարգութեան:

Տէր նախագահ, ահա այս արդար դատի համար էր, որ տանջեցին զիս, չարչարեցին զիս մի այնպիսի եղանակա՝ որու նմանը, ոչ թէ առաւել կամ նուազ քաղաքակրթեալ երկիրների մէջ, այլ Ափրիկէի ղեռ վայրների անկիւնների մէջ իսկ հազիւ կարելի է նշմարել: Հարուածներու բռնութեան ներքեւ գոյութեանս և այն ատենուան կացութեանս դառն գիտակցութիւնը միայն մնացած էր ինձ, երբ ի լրումն ամենայնի՝ չունչս գոցելով, վզիս չուանի պէս բան մը փաթթելով՝ քարերու վրայէն անզգայ իրի մը պէս քաշկրտեցին զիս ու դուրս բախը հոնեցին: Ոչ միայն ես, այլ նաեւ չարչարողներս և անոնց հրամանատարներ (զի այս բոլորը մասնաւոր հրահանգի մը համեմատ կը կատարուէր) կեանքէս բոլորովին յուսահատեցան. կիսամեռ դրութեան մէջ զիս խլրկեցին տուես, որ գէթ մօրս գրկին մէջ մեռնելու հաճոյքը վայելիմ (և այս փոքրիկ շնորհ մի չէր ինձ համար): Իբր մի ամիս վերջ, կէս առողջ, կէս հիւանդ դրութեան

մէջ, զիս դարձեալ ձերբակալիցին անկողնոյս մէջ և ահա Կալապիկ այսօր ատենիդ առջեւ կը կայնիմ խանգարուած մի առողջութեամբ: Եւ սակայն, արդեօք այս բոլորի համար մի օր տրանջացի, և կամ արդեօք անիծեցի՞ այն ժամը, այն նպատակը, որ զիս այս ճամբուն և այս դառն վախճանին մղեց. — ոչ, հազար անգամ ոչ զի ճշմարտութեան սիրոյն համար կը կրեմ այս բոլորը. փառաւոր մի դատի, հոյակապ մի նպատակի համար ոչ միայն հանգիստս և առողջութիւնս՝ այլ և կեանքս տալու պատրաստ եմ: Այս բոլորը արդէն կանխատեսելով ուխտեցի հաղատութեան փշոտ ճանապարհով՝ երթալ: Այո, ես, ինչպէս եւ իմ բոլոր ընկերներ, մեր աչքին առաջ ունէինք այս բոլորը և աւելին. բայց միեւնոյն ատեն լեցուած ենք մեր դատի վեհութեան գիտակցութեամբ և նորա յաղթութեան անխախտ հաւատքով:

Այլ բողոքներ ի դիմաց ժողովրդեան, առհասարակ պաշտօնեաների բռնութեան, անիրաւութեան եւ խեղճ ժողովուրդին կեանքը տղուկի պէս ծծող կաշառակերութեան դէմ. կը բողոքենք երկրին մէջ տիրող անարդարութեան, հարստահարութեան եւ անապահովութեան դէմ. կը բողոքենք տուրքերի յարածուն ընթացքին եւ հաւաքման անտանելի եղանակին դէմ. խստիւ կը բողոքենք մամլոյ, կրթութեան կաշկանդման դէմ և այն ամեն պաշտօնական և անպաշտօն հալածանքներու և բռնաբարութիւններու դէմ, որոնց յայտնի նպատակը լինել կերելի սպանել մեր մէջ ամեն աղնուական ձգտում և յառաջդիմական շարժում:

Եւ ուստի, քանի որ այս է իրողութիւնը իր պարզութեան մէջ, քանի որ այս է մեր բարի նպատակ, քանի որ այս է մեր անձնուէր ուղղութիւն՝ ինչո՞ւ զմեզ կո-

չել խռովարար, եւ կամ՝ վերին աստիճանի ոճրագործ: Ոճիր է միթէ բարի բաներու ցանկալ. ոճիր է միթէ ընկճեալ հասարակութեան իրաւունքների պաշտպան կանգնիլ. ոճիր է միթէ լուսաւորուիլ, զարգանալ, ապրիլ մարդավայել կեանքով: Գիացէք միայն, թէ մեր մասին ատենէդ արձակուելու դատապարտութեան վճիռը ապագայի մէջ մեր արդարացումը եւ փառքը պիտի լինի: Այս կէտ կը մնայ ձեր շուրջ խորհրդածութեան: Իմ մասին ինչ կուզէք այն վճռեցէք. խիղճս արդէն հանգիստ է. կը հաւատամ դատիս յաղթանակին:

29 մայիս 1893

Գաղափար Գատարան.

IV

ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԺԱՌ ՔԵՐՈՎԲԵ ՓԱՓԱՋԵԱՆԻ

— Պաշտպանեցի (Կեսարիա) —

Տէր նախագահ,

Բնականապէս ուրախ ենք, որ այս ցանկալի առիթը կը ներկայանայ մեզ, ըստ որում, ամիսներէ ի վեր անորոշ և խիստ անտանելի զրուութեան մէջ, անհամբեր կրօնասէիք այս օրուան: Թոյլ տուէք ինձ սակայն նախ՝ գոհունակութիւնս յայտնել բնտի պաշտօնեաներու ձեռքով ծեծուելուս համար. ըսել կուզեմ միայն մէկ անգամ ծեծուելուս համար: Համեմատաբար հանգիստ ենք տեղւոյս բնտին մէջ. թէեւ շղթաներ և գունտեր բա-

ւական ծանր են, բայց հոս սկսան բուժուիլ Կեսարիոյ քանտին մէջ մեր ստացած վէրքերը. թէեւ ունինք դեռ բաւական թուով ընկերներ, որոնց առողջութիւնը խանգարուած է տանջանքներու սաստկութեան պատճառաւ և մէկն ալ զոհ տուինք բանտիս մէջ, յանձին Արսէն Տէօքմէճեանի ընտիր եւ անմեղ երիտասարդին, որու ոտքէն շղթան ճիշդ մահուան նախորդ օրը միայն հաճեցան հանել: Երկրորդ, կուգամ խոնարհաբար ձեր ամենախորշ խորհրդածութեան յանձնել հետեւեալները. ձեր ներդրութիւնը խնդրելով բացատրութեանց պարզութեանը համար, զի միջակ դաստիարակութեամբ խանութպան մի եմ, բայց անկեղծօրէն պիտի խօսիմ և համարձակ՝ ճշմարտութիւնը միայն պիտի խօսիմ. բժիշկներու խօսող հիւանդներ ծաղկաղայրդ ոճով խօսելու պէտք չունեն:

Ներկայ խնդիրս ժամանակէ մը ի վեր օրուան խնդիր դարձած է. ամեն շրջանակի մէջ անոր վրայ կը խօսուի, և կառավարութիւնը վերջերս միայն, վերջին գէպքի առիթով, իր մասնաւոր ուշադրութեան առարկայ ըրած է զայն: Բայց ասկէ մի հակասութիւն կելլէ առջեւս, որը հազիւ կրնամ հասկնալ: Յայտնի է ձեզ թէ Պերլինի դաշնագրութեան 61-րդ Յօդուածը կրնաքուելէն եւ չը գործադրուելէն ի վեր՝ անպակաս խլրտտումներ տեղի կունենան հոս հոն. հարկաւ, ատոնք անընդանակ խլրտտումներ չէին եւ ոչ ալ հաճոյքի համար կատարուած. բայց կառավարութիւնը զանոնք կը հերքէր, անոնց գոյութիւնը կուրանար: Երբ մի քիչ սաստկացան այդ խլրտտումներ՝ անոնց «սրիկայական» կամ «բախտախնդիր», «աւազակային» անուններ տրուեցան. իսկ այս վերջին առիթով կառավարութիւնը զմեզ կստիպէ, կը ծեծէ, 10-20 տեսակ նորահնար տանջանքներով կը չար-

չարէ, որ խոստովանենք և հաստատենք գոյութիւնը մի յեղափոխական ընկերութեան. ինչու ժամանակ մը առաջ հերքել և այսօր հաստատել ջանալ: Տաճկական առածը «մըզրաֆ չուվալա սըղմազ» կըսէ (նիզակը տոպրակի մէջ չը պահուիր). վերքը գոցելով ցաւելէ չը դադրիր և ոչ ալ ցաւը ուրանալով ցաւ լինելէ կը դադրի. ո՛չ ապաքէն խոհեմութիւն և միակ ճամբան է վերքերը բանալ, ցաւերը պատմել, ապա լըջօրէն քննել պատճառները և իսկոյն ձեռնարկել ամենաազդեցիկ դարմաններու:

Այո, տէր նախագահ, այլ եւս անուրանալի է. կայ արդարացի դժգոհութիւն ժողովրդեան ամեն խաւին մէջ, կայ խլրտում, շարժում, և ինչ որ միջիթարական է մեզ, իսկ սպառնական է կառավարութեան համար, այն է թէ այս շարժում, չը նայելով ամեն կարգի և ձեւի տակ ի գործ դրուած հալածանքներու, օր քան զօր կը ծաւալի ու կընդհանրանայ օգի պէս: Հոգ չէ, ինչ անուն կուզեն թող տան անոր, «տղայական», «սրիկայական», «խռովարար», «յեղափոխական», եւն. եւն., խնդիրը կայ ու կը մնայ իր վիթխարի երեւոյթով. վերջապէս մի քաղաքական խնդիր է այն, և քայլ մը ալ առաջ երթալով պիտի ըսեմ, թրքական կառավարութեան համար մահու եւ կենաց խնդիր է այն: Այլ տեսնէք բանտակիցներու մէջ կան լըջամիտ ուսուցիչներ, պատկառելի կը դերականներ, բարեհամբաւ վաճառականներ, համեստ խանութպաններ և արհեստաւորներ, եւ ճիշդ նոյն կարգը կարելի է նշմարել երկրիս բոլոր բանտերուն եւ միջեւ իսկ քստորավայրերուն մէջ, որոնք օր աւուր հոյ բանտարկեալներով խճողուելու վրայ են: Այս համեստ երեւոյթ ինքնին ապացոյց մի է հաստատելու բաւական թէ՛

խնդիրը կարծուածին պէս ոչ «տղայական» է ոչ «սրիկայական» եւ ոչ ալ «խռովարար», այլ, մէկ խօսքով, անհատական եւ հանրային իրաւանց խնդիր է այն, ընդհանուր երկրին բարեկարգութիւնը մասնանիշ ընող ստիպողական խնդիր է այն:

Քանիցս հարցուեցաւ ինձ թէ՛ ինչ ըսել կուզէի անհատական եւ հանրային իրաւունք եւ կամ բարեկարգութիւն բառերով, ուրախութեամբ պատասխանեցի այս հարցման, որ արդէն խնդրոյն հոգին էր, եւ իբր վարձատրութիւն՝ ապականերու եւ բարակ գաւաղաներու հարուածներ ընդունեցայ, եւ այն՝ Կեսարիոյ կառավարչի ձեռամբ: Թոյլ տուէք ինձ այժմ պարզել խնդիրը իմ դիտած տեսակէտովս, համառոտիւ եւ պարզօրէն:

Այլ յիշէք որ թուականէս ճիշդ 15 տարի առաջ Պերլինի Ղեհաժողովին մէջ՝ հայ ազգի պահանջներուն նկատմամբ՝ մի յօդուած խմբագրուեցաւ, 61-րդ Յօդուածը, որը վեց հզօր տէրութիւններ վաւերացուցին, եւ բրիտանական կառավարութիւնը, Կիպրոսի գաշնադրութեամբ, Երաշխւոր հանդիսացաւ հսկելու նոյն Յօդուածի գործադրութեան վրայ: Այդ Յօդուածի առաջարկութիւնը եւ օտար տէրութիւնների, ինչպէս նաեւ մեր երկրի տէրութեան կողմանէ ստորագրուելը՝ ինքնայայտ ապացոյց են ցուցնելու թէ խնդրողներ իրաւունք ունէին իրենց պահանջների մէջ, թէ երկիրը անհրաժեշտ պէտք ունէր բարեկարգութեան: Արդ, ներեցէք, հոս մի պարզ հարցում ընեմ. խնդրողների այդ իրաւունքներուն արդար գոհացում տրուեցա՞ւ եւ խոստացուած բարեկարգութիւններ իրականացա՞ն: Սկսելով հասարակ գործաւորէն մինչեւ համեստ քաղաքագէտը, ամենօրեայ դէպքերու ու իրողութիւններու հետ միաձայն ամենուն խիղ-

ճը «ոչ» պիտի պատասխանէ, այս հարցման: Եւ այս տխուր պարտադանցութեան շնորհիւ, բնականապէս, իրերը այժմ աւելի յոռի եւ աւելի արգահատելի դրութեան մէջ են. դժգոհութեան աղաղակներ բաղմապատկուած եւ բիւրապատկուած են, խլրտմունք գետնու ընթացքին պէս, երթալով կուռին ու կը ծաւալին. եւ կարծես դիտմամբ նոր միջոցներ կըստեղծուին շարունակ նոր՝ եւ ի հարկէ առաւել արտասովոր՝ դժգոհութիւնների ծնունդ տալու համար: Թէ՛ սէր պիտի յանգի այս ճամբան՝ դժուար չէ գուշակել: Սխալ է ենթադրել թէ դժգոհ տարրը հայ տարրն է միայն. առանց ազգի եւ կրօնի խտրութեան՝ ամբողջ հասարակութիւնը դժգոհ է, ըստ որում ճշշող լուծը բոլորի վրայ կը ծանրանայ, թէեւ մասնաւոր եւ յաւելուածական ճշշումներ կը հեղինակուին հայոց համար՝ կասեցունելու զանոնք զարգացման շաւղին մէջ: Դէպքերու այս մերկ իրողութեան առջեւ՝ ենթադրենք թէ այսօր Պերլինի 61-րդ Յօդուածը իր բոլոր լեցունութեամբ իրագործուէր, արդեօք յայնժամ խնդիրը վսխձան պիտի գտնէր: — Այլ համարձակիմ եւ կը ցաւիմ ըսելու՝ ոչ: Այսօր չարիքն այնչափ արմատացած է՝ որ Պերլինի այդ դեղը վայրկենական թմրութիւն մը միայն կըթնայ յառաջ բերել, անբոյժ թողլով վէրքը:

Տէր նախագահ, հայրենեաց ամենահաւատարիմ բարեկամները եւ անձնուէր որդիքը կը դաւանինք մենք զմեզ կը ցաւինք որ մեր ամեն տեղի եւ ամեն կարգի թըշնամիներ կը ջանան զմեզ եւ մեր խնդիրը, որ հանրութեան խնդիրն է, տարբեր գոյնով ներկայացունել եւ ամեն կերպով մեղ հալածել: Բայց ճշմարտութիւնը եւ հասարակական նոր ուսմունքներ, նոր սկզբունքներ,

առաջին անգամ աշխարհի ներկայացուցիչներու բաժինը քաջալերական եղած չէ ընդհանրապէս: Թուի թէ մեր ալ ըստ որում ճշմարտութիւնը՝ եթէ ոչ առաջին անգամ՝ գէթ բարձրաձայն՝ կը հռչակենք, բացառութիւն մը չը պիտի կազմենք: Այդ հոգ չէ:

Շնորհ ըրէք, խորհեցէք, ինչ անձնական շահ կրնայ զմեզ մղած ըլլալ այդ գործին, եթէ ոչ ընդհանուրի շահը, ընդհանուրի իրաւունքը, որու մէջ է արդէն անհատինը: Կրնա՞նք միթէ լուի եւ անտարբեր աչօք նայիլ այն ամեն կտրգի կեդրեմանց եւ հարստահարութեանց վրայ, որոնք ամեն ձեւի տակ, մէկ կողմէն քրդաբնակ լեռներու եւ դաշտերու մէջ, միւս կողմէն կառավարական պաշտօնատանց մէջ, հաւասարապէս ի գործ կը դրուին: Կրնա՞նք միթէ լուի, երբ տեսնենք թէ հասարակաց հայրենիքը մէկ կողմէն գողերու եւ աւազակներու որջ է դարձած եւ միւս կողմէն մէկ իրական գոփոք է եղած իր հաւատարիմ բնակչաց համար. ոչ կենաց ապահովութիւն կայ, ոչ ընչից ապահովութիւն եւ ոչ ալ պատուոյ. եւ այլ եւս ո՞վ կը համարձակի ուրանալ՝ երբ այս բոլոր չարիք ոչ միայն Հայաստանի մութ խորերուն մէջ, այլ ցորեկ օրով մեր մէջ մեր աչքերուն առջեւ ի գործ կը դրուին: Գնացէք Կեսարիա, ուր դեռ մի քանի ամիս առաջ սարսափը արւելէ մարմին հագած փողոցներու եւ հրապարակներու մէջ կը շրջէր. անցէք պարտէզները, այգիները. ուր են հոյաշէն ամարանոցներ. — աւաղ աւեր ու քանդ մոխրակոյտեր պիտի ցցուին ձեր աչաց առջին. մոլեռանդ պաշտօնականներ, ոստիկաններէ քաջալերուած եւ անոնց միացած, գործեցին այդ բոլոր շահատակութիւնները եւ ի վարձատրութիւն այս քստմնելի քա-

ջագործութեան, կառավարական գանձէն երեքական ոսկի պարգեւ ստացան: Անցէք Էֆքարա, միտք բերէք տարւոյս Յունուար 8-ը, երբ գիւղը պաշարուած էր մի կոտորել ամբոխէ առաւել քան 600 հոգիներէ բաղկացեալ եւ որոնց խիստ մեծ մասը պաշտօնականներ, զինուած դաշոյններով, կացիներով, բիրերով, տոպրակներով (աւար փոխադրելու համար), եւ ալ գիւղին է երեւակայել թէ այս կատաղի պատրաստութիւն ինչ արդիւնքներ կրնար տալ. նախատինք, ծեծ, չարչարանք, պատուոյ բռնաբարութիւն, յափշտակութիւն, աւեր ու քանդում. . . եւ ալ շարունակեմ. . . Այս բոլոր աղէտներ անցան այդ համեստ եւ անպաշտան գիւղացիներու գլխէն: Ըսէք, ինքրեմ, այս կեանք է, թէ տանջանք. միթէ Թուրքիոյ մէջ ապրիլ դեռ տառապիլ պիտի նշանակէ: Այս երեւոյթներու առաջ բնական չէ՞ որ Ժողովուրդը կատաղի եւ որոշէ (ինչ որ ընդհանուր մի հասկացողութիւն դառնալու վրայ է) քաջ մահով մեռնիլ մի անգամ, փոխանակ չարաչար մեռնելու ամեն օր: Երբէք, երբէք չափազանցութիւն ըրած չեմ ըլլար, երբ ըսեմ թէ այս երկրի համար իրաւունք կոչուած բանը նշանակութիւն չունի եւ արդարութիւնը գոյութիւն չունի. մեզ հետ բոլոր թիւրք հասարակութիւնը վկայ է այս յայտնութեան. . . Կաշառակերութիւնը համարձակ եւ բացարձակ երկրին տիրող օրէնքը դարձած է, որ արդէն իր տեսակին մէջ անհրաժեշտ միջոց մի է երկիրը կործանելու: Այո, տէր նախագահ, այո, իրաւունքէ զրկուած, ապահովութենէ զրկուած, պատիւէ զրկուած, լքուած, ճնշուած ստրուկ ենք, ստրուկ. մեր աչքեր բացուեցան ու զայդ զգացինք. եւ այս դառն իրականութիւնը դեռ չըզգացողներ պիտի զգան զայն:

երբ լուսաւորուին. եւ գործի համար բարեբաղդաբար՝
շուտ պիտի լուսաւորուին, քանի որ կառավարութիւնը,
աւելի բուռն միջոցներով կը շարունակէ իր կործանիչ
ընթացքը, ճնշելով, կաշկանդելով, հալածելով, տանջելով,
բանտարկելով, արքորելով ժողովրդեան ամենէն համեստ
եւ պատուական տարրը:

Հաւատացէք, տէր նախագահ, որ այս դառն իրակա-
նութեան հանգէպ՝ սրտի անկեղծ մորմոք միայն կը գ-
գանք. այդ մորմոքը, բարի նախանձը, ժողովրդեան վի-
ճակը, վսեմ գաղափարները մղեցին զմեզ այս սուրբ գոր-
ծին, այսքան տանջանաց նիւթական մի շատ զրկողու-
թեանց եւ ուրիշ շատ կորուստներու: Մի կարծէք սա-
կայն թէ՛, ասով ներկայ խնդիրը ընկճուած եւ մեր ար-
գար գատը յաղթահարուած պիտի լինի: Կարելի է գա-
ղափարը կրող այսինչ, այնինչ անհատներու գէմ մա-
քաւիլ, անոնցմէ զմանս բանտարկել, արքորել եւն, բայց
այդ գաղափարը կայ ու պիտի մնայ. զոր է մարտնչիլ
գաղափարի դէմ, մանաւանդ երբ սա ճշմարտութիւն մի
է. եւ ուստի կառավարութեան կողմէ այս հալածանքը
մեզի գէմ՝ օդը ծեծել կը նշանակէ: Բայց այդ ալ
նպաստաւոր է մեր գատին, ըստ որում «հալածել տա-
րածել է՞.» *)

(Ընդմիջեալ)

29 մայիս, 1893

Գաղատիա Գատարան.

*) Փափաղեանը իր ձերբակալուած օրէն սկսելով
ամեն առիթով համարձակ եւ յանգուզն եղանակով խայ-
տառակած է կառավարութեան ամեն կարգի զեղծում-

Y

ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՔԱՌ ՅԱԿՈԲ ՊԱՅԼԱՌՈՒՆԻԻ

— Կէմերէկցի (Սեբաստիա) —

Տէր նախագահ,

Տարիներէ ի վեր առիթ ունեցած եմ ժողովրդա-
յին կեանքը խիստ մօտէն դիտելու, ուսումնասիրելու,
մանաւանդ ներքին կեանքը գիւղերու և գիւղացւոց, ո-
րոնց շատերուն հետ անձնական հաշիւներ ու գործեր
ալ ունեցած եմ. ուստի ինչ որ պիտի խօսիմ՝ պէտք
է նկատել իբր արդիւնք անաչառ դիտողութեանցս եւ
անձնական փորձառութեանս:

Ամեն երկրի ժողովուրդ իր գանգատը ունի. երբե-
մըն երբեմն կը տրանջան, կը դժգոհին, կը յուզուին.
մենք ալ իբր ժողովուրդ, մեր գանգատները ունինք, մեր
ցաւերը, մեր վէրքերը ունինք. բայց ուրիշ ժողովրդոց և
մեր մէջ սա յայտնի տարբերութիւնը կայ թէ՛ ա-

ները: Երբ դատարանը տեսաւ որ կարելի չէ այս անձ-
նուէրին լռեցնել, առանց սպասելու դատի վախճանին՝
գիշերով յանկարծակի արթնցնելով քնէն եւ ձեռքերը
կապելով կը հեռացունէ զայն — թէ՛ ուր, յայտնի չէ:
Երկրորդ օրը նախագահը կը ծանուցանէ թէ «քերով-
բէն մօտաւոր հիւանդութիւն ունենալուն համար (??!!)
յիմարանոց ղըկուեցաւ: Այդպիսով Փափաղեանի ճառը
մնացած է ընդմիջեալ:

նոնք իրենց ցաւերը ըսելու ազատ են, մենք լալու ազատութիւնն ալ չունինք, մինչ մեր ցաւերը խիստ դառն են, մեր վէրքերը խոր և թերեւս մահացու: Այս պատճառաւ է որ մեր աղաղակներ զսպուած լացի մը բնութիւնը ունեն. խոշոր հեկեկանքներ են անոնք և կամ, եթէ կուզէք, հրաբուխի մը պարբերական ցնցումներուն կը նմանին:

Այլ տեսնեմ որ մեր դատաստան հրապարակաւ տեղի կունենայ. այս երեւոյթ յոյժ քաջալերական է ինձ և, կը հաւատամ, բոլոր ամբաստանելոցս համար եւս:

Մարդ եթէ զգաստ է, հաճոյքի համար չիլար և ոչ ալ կը հալածէ իր ստուերը: Բնական եւ տիեզերական օրէնք է, որ ամեն արդիւնք պատճառ մը կենթադրէ եւ ակտ մը կամ չարիք մը արմատէն բուժելու համար, ճարտար մասնագէտք նախ պատճառը կորոնեն, կուտումասիրեն եւ ըստ այնմ կը պատրաստեն դեղ և դարման: Եւ արդ, տէր նախագահ, ձեզ ի դիւրութիւն հետեւեալները կը յանձնեմ ի խորհրդածութիւն:

Ներկայ ժողովոգային տագնապի գլխաւոր պատճառներէն հետեւեալ չորս կէտերն յառաջ կը դնեմ այստեղ հետեւեալ կերպով. — 1) Բազմազան տուրքեր և եղանակ գանձման: 2) Պաշտօնական ղեղձումներ: 3) Ոչ-բրիտանեայ տարրին մոլեռանդութիւնը և հարստահարութիւնը բրիտանեայ դէմ. 4) Անհատական եւ ազգային իրաւունքների կաշկանդում եւ շարունակական սեղմումներ յամենայն դէպս:

1) Բազմազան տուրքեր եւեղանակ գանձման:

Այլ չափազանցեմ արգելք երբ ըսեմ թէ՛ չը կայ մի այլ ժողովուրդ, որ թուրքիոյ ժողովրդեան չափ ընկճւած լինի ուղղակի եւ անուղղակի, անունով եւ անա-

նուն տրոց ներքեւ:

Արնայի մի երկար ցուցակ շինել տրոց, բաժնել զանոնք դասակարգելու և ցուցնել թէ եւրոպական ո եւ է ժողովուրդի մէկի փոխարէն՝ առնուաղն եթէր տեսակ տուրքեր ունենք. տուրքեր, որոց, թողունք գոյութիւնը, անուններն անգամ ծանօթ չեն քաղաքակիրթ ազգերու: Գուք զայս լաւ գիտէք արդէն. մէկ օրինակ միայն հերիք լինի: Այդի տէր մը պարտի վճարել որոշ մի տուրք այգիի գետնին, այսինքն հողին համար, մի տուրք անոր ծառերուն համար, մի տուրք անոր որթերէն քաղելու: Լու խաղողին համար (ըսկաթ թէ՛ քէրէսի), մի տուրք անոր որթերէն քաղած խաղողին համար, մի տուրք անոր խաղողէն վազած գինին համար, մի տուրք անոր խաղողի չաշէն (ճիպրէ) վաղելու օդին համար, մի տուրք վաղած օդին համար, ևն, ևն: Երբ այս բոլորը մանրակրկիտ հաշիւէ մը անցունենք, ի մէջ բերելով նաեւ այգւոյն բուն արժէքը, տիրոջ ըրած ծախքերը եւ այս ամենուն տոկոսը, պիտի տեսնենք, որ կառավարութիւնը եւ այգեատէրերը, այգւոյն ընդհանուր արգիւնքէն գրեթէ հաւասար բաժիններ առած են. թողունք որ նուազ արգիւնքեր տարինք միշտ ի վնաս այգեատիրոջ կանցնեն: Ահա ինչու տեղ տեղ այգիներ կը քակն արտերու կը վերածնեն, տեղ տեղ ալ խաբուսիկ յուսով առաւել չահաւորութեան, արտեր այգիներու կը վերածնեն: Խեղճ հողատէրը չը գիտեր ինչ ընէ, որ ճամբան բռնէ, շատ մը կորստարեր փորձերէ վերջ կամ խոպան կը թողու արտը եւ կամ վատ գնով կը ծախէ զայն մի այլ բազմախնդիրի: Եւ ահա ինչու երկրագործ դասը, որ փոքր թիւ մը չի կաղմեր, այս երկրի ամեն անկեան մէջ շարունակ պարտքի տակ կը հեծէ, և այդ պարտքը

շնորհիւ վաշխառուներու անգութեամբ եւ կործանիչ դրութեամբ, կաճի օր աւուր, կուռճանայ այն աստիճան, որ հողատէրը կը պարտաւորի մնալ անհող եւ անյոյս: Ահա ինչո՞ւ մի այլ դասակարգ ալ տրոց այս կործանարար դրութենէն ձանձրացած, կը վաճառէ իր բոլոր գոյքն ու կեանք եւ կը գաղթէ օտար երկիր: Հողագործութիւնը, որ այս երկրին մէջ մարդուն գլխաւոր բարի մատակարարը, խնամող մայրը եղած է, այսպէս անարգ դրութեան մէջ պահել՝ կը նշանակէ ընդարձակ ճամբաներ պատրաստել մեծագոյն չարեաց: Եւ, աւա՜ղ, արդէն իսկ փճացած է գիւղային կեանքը. ժողովուրդը կը սնանկանայ օր աւուր, արեւելքի պատմական ճոխութիւնք կը ցամաքին: Մնացեալ բոլոր տուրքեր պէտք է դատել այս տեսակետով, սա տարբերութեամբ միայն, որ անոնցմէ խիստ շատեր բողոքովին աւելորդ՝ եւ ուստի բողոքովին անարգար՝ տուրքեր են: Բազմաթիւ օրինակներ կրնայի յառաջ բերել բայց մէկ երկուքով կը բաւականանամ: Աւերջերս նոր մի տուրք հնարուեցաւ — ճամբու տուրք. ժողովուրդը կանոնաւոր կերպով, թէպէտ միշտ դժկամակեղով կը վճարէ այդ տուրքը. բայց ո՞ր են ճամբաներ. բիչ բացառութեամբ՝ բոլորն ալ փլած, ճոխ առիթ կը նծային կառապաններու սոսկալի հայհոյանք եւ անէծք տեղալու, և տարիներով կը մնան աննորոգ: Ո՞ւր կերթայ դանձուած ստակը: Թող որ տեղ տեղ ալ ինչպէս Աստարիայէն Էփէրէկ, թէեւ շինուած ճամբայ չը կայ, բայց դժբաղդ ժողովուրդը կը պտիպուի ամեն տարի որոշեալ տուրքը վճարել այդ գոյութիւն չունեցած ճամբուն համար. Իսկ կրթական (մէարիֆի) տուրքը, զոր բրիտանոնայք կը բռնադատուին տալու, խռանց վայելելու պետական դպրոցաց մէջ կրթուելու արտօնութիւնը. . .

Եւ քանի որ մէկ կողմէն ժողովուրդը մահու քրտինքով կը թրջուի այս անհատնում տրոց ներքեւ, անդին միւս կողմէն պատուանշաններով կը մեծարուին այն հանճարներ, որոնք նոր տուրքի աղբիւրներ կը ցուցնեն, նոր ծրարագիրներ կը յօրինեն՝ ժողովուրդը լաւ եւս կեղեքելու եւ ցամաքեցնելու համար. նորօրինակ հնարիչներ, որոնք աւելի կործանարար են ժողովուրդի համար, քան հնարիչք բազմահարուած հրազեններ:

Ղալով հաւաքման եղանակին, բացարձակապէս մի դժոխային անէծք դարձած է այդ խեղճ ժողովուրդի գլխին: Սարսափի, սուգի եւ դառն արտասուածք օր է այն օրը, երբ հարկահաններ, ոստիկաններ, վաշխառուներ ձիւերու վրայ նստած՝ խումբ խումբ կը մտնեն գիւղերը: Սոքա բացէ ի բաց կը կեղեքեն ժողովուրդը, կը թալանեն գիւղերը. եթէ դրամ չը գտնեն գիւղացւոյն քով (դժբաղդաբար շատ անգամ չեն գտներ)՝ բռնի եւ վատ գնով կը ծախեն նորա անասուններէն սկսելով մինչեւ տանը ամենապիտանի կահն ու կարասին: Գիւղացիք՝ այդ սուգի եւ սարսափի օրերուն մէջ՝ պարտին կերակրել այդ մարդերու եւ ձիւերու բազմութիւնը: Հատ գիւղերու մէջ հաւաքման այդ ահաւոր օրերը գէթ մի քանի շաբաթ յետաձգելու համար, իրենց կարեւոր պէտքերէն զրկուելով կը ճարեն 15-20 մէծիտիէ կաշաւք, որով հարկահաններ կը հեռանան գիւղէն՝ ուրիշ օրուան յետաձգելով իրենց սարսափելի արարքը: Ամեն գիւղ, առանց բացառութեան, այրած, խանձած է այս կրակէն: Թող որ աւելի ներսերը՝ խեղճ արարածներուն ոչ միայն ինչքն ու կայք, այլ նաեւ ընտանի յարկին սուրբ պատիւը զոհ ինկած կը գտնենք այդ գազանաբարոյ մարդոց ճիրաններուն. բայց պիտի լուծ այս կէտը, զի ան-

կարելի կը թուի ինձ լեզուով եւ կամ գրչով նկարագրել այս վիթխարի չարքը, որոյ կատաղութիւն կա-
կաւելնայ ժողովուրդեան աղքատանայլու համեմատութեամբ:

2) Պաշտօնական զեղծումներ.

Պառավարական պաշտօնէից ապօրէն ընթացքը քըն-
նադատել ներքին չէ այս երկրին մէջ ուր մամուլն եւ
բեմն չեն վայելեր իրենց կոչման արժանի և անհրա-
ժեշտ ազատութիւն: Սակայն, բարեբաղդաբար, այդ կար-
գի սեղմումներ չեն կրնար ներգործել անհատական եւ
ժողովուրդային գաղափարներու եւ համոզմանց վրայ: Այսօր,
սկսելով ամենէն ուշիմ, լրջմիտ դասակարգէն մինչ ամե-
նախոնարհ եւ պարզուկ դասակարգը, մի ընդհանուր հաս-
կացողութիւն է դարձած թէ՛ կաշառք թիւրքի ոյ
մէջ գերագոյն օրէնք է: Այս օրէնք քաջա-
լերուած և հաստատուած կը գտնենք պետութեան պատ-
ժական օրինաց կաշառքի յօդուածոյն տրամադրու-
թեամբ, թէ՛ հկաշառատուն եւ կաշառառուն պատժա-
պարտ են գրեթէ հաւասար պայմաններով: Այս պայ-
մաններու ներքեւ կաշառատուն, առանց իրեն մի նոր եւ
աւելի մեծ փնաս պատճառելու, չը կրնար բողբել կաշառ-
առուն գէմ, եւ կաշառառուն այսպէս քաջալերուած,
անպատկառ շարունակ կը գործածէ այս անարգ շահա-
վաճառի կործանարար միջնորդը, կաշառքը:

Սի պարագայ, զոր Սերաստիոյ կուսակալութեան
մէջ խիստ մօտէն գիտելու առիթներ ունեցած եմ, ան-
հարին վիշտով, և ըսեմ նաեւ, զըզուանքով լեցուցած
է ամեն ճշմարիտ հայրենասիրի սիրտը, անխափ՝ իսլամ,
ոչ-իսլամ: Այդ կուսակալութեան մէջ ինչպէս ուրիշնե-
րու մէջ, կառավարական պաշտօններ աճուրդով կը
ծախուի: Զարմանքով նշմարուած է, որ տարեկան

36—48 լիրա թուակ բերող պաշտօններ գնելու
համար տենդոտ թիկնածուներ կը մատուցանեն 100, 1-
50 երբեմն 200 էն աւելի լիրա, մտահ լինելով անշուշտ
սա իրողութեան վրայ թէ՛ մի անգամ բաղձացեալ պաշ-
տօնը ձեռք բերելէ վերջ կրնան դիւրաւ քաղել տաս-
նապատիկը և բազմապատիկը իրենց վատնածին: Քաղել
... եւ ուսկից. — անշուշտ ժողովուրդէն: Կաշառք կու-
զուի ամեն տեսակ դատի համար: Կաշառք կուզուի ծուռ,
անարդար դատերը շտկելու, արդար հոսակելու համար.
կաշառք կուզուի արդար դատերը ծուռելու համար. կա-
շառք կուզուի դատերը տեսնելու, քննելու համար, ե-
թէ ոչ՝ տառնք կենթարկուին մոռացման, կը մնան երբեմն
տարիներով: օրինակներ անպակաս են, կրնայի ատենցմէ
յառաջ բերել տասնեակներով հաղատիոյ բանտէն մի-
այն: Ղերշապէս, կաշառք կուզուի թէ՛ յանցաւորէն, թէ՛
անմեղէն, թէ՛ անիրաւէն, թէ՛ անիրաւեալէն, թէ՛ գողցո-
ղէն, թէ՛ գողցունողէն, թէ՛ մարդասպանէն, թէ՛ սպանեա-
լէն. . . ըսել կուզեմ սպանեալի աղքատկաններէն. . . Կա-
շառք, կաշառք, կաշառք, այս է օրէնքը, այս է հոգին
մի նոր և արտասովոր կազմակերպութեան, որ հկառա-
վարութիւն՝ անուան ներքեւ ժողովուրդը և երկիրը վը-
ճացնելու կը ծառայէ յաջող կերպով: Ահա ինչու ժողո-
վուրդը սա վերջին տարիներուս մէջ խոյս կուտայ կա-
ռավարութեան և գառարաններու գոնէն, զոհելով եր-
բեմն մինչեւ իսկ կարեւոր դատեր և կամ զայնս կարգա-
դրելով իր մէջ: Սակայն պաշտօնեայք գիտեն ճար-
պիկ ճամբաներ հնարել և ուղածնին դատ կամ դատաս-
տան կոչուած ծուղակին մէջ ձգել: Սա մեր ծանօթ
խնդրով մանաւանդ, քաղաքական ի պատրուակին
ներքեւ կը յաջողին իրենց ճանկերուն մէջ ձգել ընտիր

որսեր: Այս կազմակերպեալ ապօրէն գրութիւն բնակա-
նապէս ֆնասակար է նաեւ տէրութեան գանձուն, թող
որ արհեստին մէջ վարպետ եղող պաշտօնեայք կը հա-
մարձակին կողոպտել նաեւ տէրութեան գանձը. օրինակ,
ի միջի այլոց մի կուսակալ *), որ այս պահուս Պօլիս կը
գտնուի և կը քրտնի իրմէ պահանջուած ճամբու նո-
րոգման հաշիւը տալու, ուսկից իւրացուցած է մի քանի
հազար ոսկւոյ համեստ գումար մը: Այսպէս ճամբանե-
րու և այլ բարենպատակ հաստատութեանց շինութիւնք
մեծ փորձութեանց աղբիւր կը դառնան արծաթամօլ պաշ-
տօնէից: Հոս բնական մի հարցում կենլէ մեր առջեւ. ին-
չո՞ւ պաշտօնեայք կաշառակեր են: Առանց խորը մտնե-
լու, ներեցէք, բնական պատասխանը տամ և անցնիմ. —
որովհետեւ կառավարութիւնը, նախ, լաւ չի վճարեր իր
պաշտօնէից խիստ մեծ մասը, մանաւանդ ի գաւառս. եր-
կըրորդ, շաբաթներով երբեմն ամիսներով կը յետաձգէ
վճարումն արդէն անբաւական թոշակներու. երրորդ, գի-
նեմովութիւն, հեշտասիրութիւն և այլն, որք անհաւատա-
րի համեմատութեամբ կը ճարակին ի պաշտօնեայս, դրո-
ներ կը բանան մեծ ծախքերու. չորրորդ, վարպետ պաշ-
տօնեայք, թուի թէ հորիզոնը ամպոտ տեսնելով կը փու-
թան ժամ առաջ ապահովել իրենց ապագան. հինգե-
րորդ, ամեն գէշ պաշտօնէութեան բնական ախան է
այդ: Մի երկրորդ հարցում կը հետեւի բնական կարգով.
ինչո՞ւ բաւական և ժամանակին չեն վճարուիր պաշտօն-
եայք, ինչպէս նաեւ՝ ինչո՞ւ ծանր և նոր տուրքեր կը
գրուի ժողովրդեան վրայ: Այդ հարցմանց պատասխանը մէկ

*) Սերաստիոյ նախորդ կուսակալ Մ է մ տ ու հ պ է յ:

է. այն է՝ կառավարութեան դրամային անվախճան տագ-
նապը և յոռի, անկարգ վարչութիւնը:

3) Ոչ-քրիստոնեայ տարրին մոլեռանդութիւնը և
հարստահարութիւնը քրիստոնէից դէմ:

Հարդ ականջի լուրով միայն կը լսէինք այն խրժ-
ղրժութիւններն, կեղեքումներն ու հարստահարութիւն-
ներն, որոնք քրդերու ձեռամբ ի գործ կը դրուին Տա-
րօնոյ հայոց վրայ: Այժմ Խոսուր առիթը ներկայացաւ մեզ
մեր աչքերով տեսնելու այդ կեղտոտ արարքներ: Գեռ
մի քանի ամիս առաջ մոլեռանդութիւն և կատաղութիւն
ձեռք ձեռքի տուած, սարսափի երեւոյթով կը պտտէ-
ին Կեսարիոյ մէջ և իր շրջակայքը, մանաւանդ Պալա-
կասի և Էվքարա, որպէս նաեւ Եօզկաթի մէջ և իր շր-
ջակայքը և այլուր: Գոյքերու յսկիչտակութիւն, տունե-
րու կործանում, եկեղեցեաց և տուներու հրկիզում, կի-
ներու բռնաբարում, կենաց կորուստ և ալ ի՞նչ... Այս
բոլորը մեր շրջանակին մէջ, մեր աչքերուն առջեւ տեղի
ունեցաւ, և առիթը նախաճաշակն մոլեռանդութեան այն
տարրին, որ իր ներշնչումներն կրստանար ոչ թէ իր սրբ-
տէն, ոչ, այլ ուղղակի կառավարութեան պաշտօնեանե-
րէն: Մեծ է թշուառութիւնն այն անտանելի կացու-
թեան, որու տակ կը հեծեն, կը մաշին և ամեն օր կը
մեռնին մեր եղբայրներու և քոյրերու մեծ բազմութիւն
ի Հայաստան: Մեծ է չափն և աստիճան Մուսս բէկի
և իր նախորդներուն և յաջորդներուն շահատկութեանց:
Հիմա լաւ կը հասկնանք՝ թէ կառավարութիւնը ինչո՞ւ
զինեց քիւրտելը և ինչո՞ւ շքանշաններով մեծարեց կարգ
մը բէկեր (թէպէտ, ներեցէք հոս միջանկեալ մը. միշտ
կը յուսայինք և գեռ կը յուսանք թէ՛ այդ զինուած
խուժաններ այդ զէնքերը օր մը իրարու դէմ օր մ'ալ

կառավարութեան դէմ պիտի դարձունեն): Մէկ կողմէն բարբարոս, անուղղայ ցեղերը զինել և անոնց զործած հազար ու մէկ շահատակութեանց աչք գոցել միւս կողմէն ներքին կերպով և շատ մը տեղեր՝ բացէն հրահանգել և գրգռել խլամութիւնը բրիտաննէութեան դէմ՝ կը նշանակէ պաշտօնապէս քաջալերել այդ տարրի մոլեռանդութիւնը և այսու կրակի ու արեան պաշար պատրաստել մեծ եւ ահեղ մի օրուան համար: Եւ ալ տարակուսի տեղի կը մնայ, երբ կը տեսնենք որ նոյն կատաղութեամբ վառուած մի կարգ պաշտօնեաներ անձամբ կը ծեծեն, կը չարչարեն խեղճ բրիտաննայ զօհները եւ կամ տանջել կուտան զանոնք արիւնկըզակ ոճրագործներու, ինչպէս օրինակ, ի միջի այլոց, Ղեսարիոյ ներկայ կառավարիչը, որ իր հնարած և գործադրած սոսկալի տանջանքներուն համար կիմանանք թէ չքանչանով վարձատրուելու վրայ է:

4) Անհատական և ազգային իրաւունքների կաշկանդում և շարունակական սեղմումների յամենայն դէպս. օրին խօսքով՝ պաշտօնական հալածանք:

Սկսելով կեանքի և գործառնութեան ամենախոնարհ աստիճաններէն մինչեւ բարձրագոյնը, հայի՝ իբր անհատ և հայութեան՝ իբր մի որոշ ազգային մարմնի, ճամբան խճողուած կը գտնենք հազարումէկ արգելքներով եւ խիստ կաշկանդումներով: Պարզ խրճիթ մը շինելու եւ կամ 1—2 պուր ճամբորդութիւն մը կատարելու համար պէտք կըլայ անցնիլ մի կարգ ձեւակերպութիւններէ: Ընկերութիւն մը կազմելու, զպրոց մը բանալու, ռեւէ բարենպաստակ ձեռնարկութիւն կատարելու համար պէտք է ճակատիլ անհնարին գծաւարութեանց դէմ, որոնք «օրէնք», «հրաման» և այլ անուններու ներքեւ կը պահ-

ուին: Գծաւարութիւն ամեն պահ, ամեն քրքր, այս է բաժին ամեն մի հայուն. սա՝ ծնելու համար, մեծնալու համար, դաստիարակուելու համար, դիրք մը գրաւելու համար, ամուսնանալու համար, հայր լինելու համար, վերջագէտ գործելու համար, անդրելու համար, մեռնելու համար՝ պարտի սիրտ ի գող անցնիլ մեծ շարք մը գծաւար ձեւակերպութիւններէ, որոնք շատ անգամ հնարուած բացարձակ արգելքներ են:

Մի ժամանակ «սահմանադրութիւն» անուն չարք մի ողորմելի կանոնադրութեանց պատրանքին ներքեւ գործեցինք, շարժեցանք, կարծելով թէ՛ ունինք ասով դէժ մի քանի տարտամ առանձնաշնորհումներ: Այսօր այն ալ փճացաւ և պիտի փճանար ոչ միայն անոր համար, որ կառավարութիւնն այդ քաղաք, այլ թէ ողորմելի, սահմանափակ էր և անհավաքատասխան չէր հասարակութեան աւելի լայն պահանջներուն: Մի խիստ, մանրակրկիտ, ներքին հսկողութիւն կը ծանրանայ մեր անհատական, բնական կան եւ ժողովրդային գործողութեանց վրայ. կը հետախուզուին մեր ամենաշինչ շարժումներ, մեծ պատասխանատուութեան և կամքնութեան կարող է ենթարկել զմեզ աւելորդ մի կէտ, որ պատահմամբ կը սարդի նման կի մը մէջ: Նամաք, հեռագիր, թերթ, գիրք, թուղթ անհուն կարկածանաց և երբեմն, անել նեղութեանց կենթարկեն զմեզ: Գոնէ հրատարակուած մի օրէնք ըլլաւ, որ գիտնայինք թէ ինչ կարգալու ենք և ինչ կարգալու չենք, ինչ տեսակ բառեր գործածելու ենք եւ ինչ տեսակներէ հրաժարելու ենք, վերջագէտ, ինչ ընելու ենք և ինչ ընելու չենք: Կարծի, մարտիրի վիճակներ մը մեջ կապրինք: չենք համարձակիր երեք հոգի մէկտեղ նստիլ ու խօսիլ վախ-

նալով զի մի գուցէ երեքէն մէկը լրտես լինի եւ կամ մի այլ լրտես հսկէ մեր գումարումը: Լրտեսային մի անհուն զրուծիւն ծայրէ ի ծայր ողողած է երկիրը, վերգոված է մեր ամենօրեայ կեանքը, թունաւորած է մեր հաճոյքները: Սա այսօր մի անարգ շահաւաճառ դարցած է, որուն համար մասնաւոր օրէնքներ հաստատուեցան վերջերս, որոց վերջնայն տրամադրութեան համեմատ՝ ամեն անհատ պիտի լրտեսը լինիլ իր ընկերին, այսինքն, տեղեկագրել իսկոյն կառավարութեան, ինչ որ «քաղաքականի» գոյն ունի: «Քաղաքական», այս է նոր քաղաքականութիւնը, որ ոչ սահման ունի, ոչ կեղծոն, ոչ սկիզբ: Չենք հասկնար ի՞նչ յարաբերութիւն ունի այդ «քաղաքական»ը եկեղեցւոյ մը զանգակին հետ, այս ինչ սուրբի անուան տօնին հետ, կրօնական շարականներու եւ երգոց հետ, դպրոցի այսինչ դասագրքի հետ, այսինչի անուան կամ մականուան հետ, այսինչ ձեւ ֆէսի եւ այսինչ ձեւ մօրուքի հետ:

Ոչ տէր նախագահ, ոչ չենք կրնար լռել երբ կը տեսնենք կառավարութեան մէջ մի հաստատ գիտաւորութիւն եւ, ըսեմ, կազմակերպեալ զրուծիւն՝ ամեն կերպով արգիլելու մեր անհատական յաջողութիւնները եւ մեր ժողովրդային յառաջդիմական ձգտումները: Այո, կը շեշտեմ, հաստատ մի գիտաւորութիւն՝ զմեզ զրկելու լուսաւորութեան բարիքներէն, զմեզ ճնշելու, պղտիկցնելու եւ ժողովուրդը անտեսապէս խալառ աւերելու: Բոլոր նշաններ զայս կը հաստատեն: Հայոցս թիւը երթալով կը պակսի պետական պաշտօններու մէջ՝ ընկերութիւններ կը խափանուին, դպրոցներ կը ջլատուին, մամուլը կոյր եւ անարգ մի գործի դարձած է արգէն, հարուստներ բանտն են, ազգեցիկներ բանտն են, արհես-

տաւորներ, զիւղացիներ, աշխատաւորներ բանտն են, եկեղեցականներ բանտ են կամ յաքսոր, կանայք ալ կան բանտերու մէջ, ծեր ալ, պատանի ալ. դաստիարակներ պատկառելի մի թիւ կը կազմեն բանտերու եւ քսորավայրերու մէջ: Ուշագրաւ մի պարագայ. — լոկ Գաղատիոյ 84 բանտարկելոց 13-ը ուսուցիչ եւ 2-ը եկեղեցական են. ահա պերճախօս մի համեմատական, թող որ արգէն եւ մնացեալք պատուական քաղաքացիներ են, ոմանք ազգեցիկ վաճառական, փաստաբան, արհեստաւոր եւ կամ գործաւոր:

Տէր նախագահ, ահաւասիկ ներկայացուցի ձեզ չարիքը իր արդեանց եւ իր պատճառներուն մէջ: Մտացածին ցնորք մը չենք հալածեր. մեր ցաւը կը պատմենք, մեր վէրքը կուլանք եւ դարման կը փնտռենք: Եթէ երբեմն երբեմն խրատումներ, ցոյցեր կը պատահին հոս հոն, պէտք է նկատել զայնս պերճախօս արտայայտութիւններ զսպուած մի ցաւի, արդար մի բողբոյս. կը հաւատանք մեր բողբոյս արդարութեան, արդար է այն ամեն տեսակետէ: Այս հաստատ համոզմամբ նուիրական պարտք պիտի սեպէ ամեն զգայուն հոյ մղել մեր դատը. այո, անվհատ եւ անընդհատ մղել զայն շատ զօհողութեամբ. մղել զայն, եթէ հարկ լինի արեան մէջ եւ մարտիրոսաց դիակներու վրայ: Լաւ է մեռնիլ, քան ապրիլ ստրուկ կեանքով:

29 մայիս, 1893
Գալատիա Գատարան.

* * *

Վասիլատիայի դատարանում բոլոր ամբաստանվածների թիւը, ինչպէս յայտնի է, 43 էր: Արձակված դատավաճիւնները յետոյ թեթեւ կերպով մեղմացրին, բացի Տինգ Տոգու զէմ տրված մահաւան դատավճռից, որ եւ դորժադրվեցաւ: 1893 թ. վերջերը, Կ. Պօլսի Կենտրոնական բանտում ամեն տեսակ նեղութիւններ կրելուց յետոյ, վերջապէս այդ դատապարտվածներից 9 Տոգի ուղարկվեցան արտօր Ղարաբ-Թարապօլիս, 14 Տոգի՝ Աքիա և 10 Տոգի՝ Ռագոս: Մնացած 5 Տոգին, որոնց մէջ Անտօն Ռշտունին, տակաւին գտնվում են միեւնոյն տեղը, Կենտրոնական բանտում, եւթարկված ամենաժանր մի վիճակի:

ՏԻՊԸՐ ՀԱՅ ՅԵՂԵՓՈՒԸԱՆՆ

ԸՍՊԸՏԸԿԻ

ԹՈՐՈՍ ԶԱՌՈՒԿԵԱՆ

ԵՒ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ

(Կենսագրական տեղեկութիւններ)

Թորոսը ծնվել է Սեբաստիայի Կուսակալութեան Կիւրի ն բաղաբում: Իր հայրը, մահատի Աարգավտը, զբաղվում էր գիւղական առեւտրով (կէզէկճի): Իր վեց զաւակների ամենափոքրիկն էր Թորոսը: Տկարակազմ կարճահասակ, գլուխը կնտակ, նիհար մի երիտասարդ էր նա: Իր փոքրիկ հասակում նա հիւանդոտ ու թոյլ սակայն միեւնոյն ժամանակ ընդունակ մի մանուկ էր: Չը նայած փոքրիկ Թորոսի տկար կազմին, այդ ժամանակէլ «Արամեան» դպրոցի տեսչութիւնը նրան տվել էր մի հսկայ նահապետի անուն. Զայրմայր էր կանչում նրան: Անուանափոխութիւնը նորաձեւութեան կարգն էր անցել այդ ժամանակները դպրոցներում: Թէեւ աշակերտները ոչինչ չէին ուսանում, բայց գոնէ հսկայի անուններ էին ստանում: Խորենացու պատմած նախնական դարերի առասպելական հերոսները վերակենդանացած էին յանձին Արամեան դպրոցի աշակերտների: Թորոսին

կարծես ծաղրելու համար դիտմամբ էին կայցրել այդ հսկայի անունը, բայց վերջը կը տեսնենք, թէ նա ինչպէս արդարացրեց իրան, հաւատարիմ հետեւող գտնելով իր նահապետական անունը:

Ուսում-թրքական պատերազմի վերջերն էր: Տաճկաստանն անտանելի դրութեան էր մատնված: Կողոպտված հայ ժողովուրդն աջ ու ձախ էր ընկնում իր ընտանիքն ապրեցնելու համար: Թրքական միջնաւորութիւնը իր ծայրայեղ աստիճանին էր հասել: Ռուսաց, «ղաւթաւ Կեփուրի», ինչպէս թիւրքերն էին նրան անուանել, յաղթութիւններն աւելի և աւելի էին գրգռում տաճիկ սինքլորին հայ տարրի դէմ: Ամբողջ լեռները դասալիք զինւորների աւազակախմբերով էին ծածկւած: Այդ պատճառով թիւրքիայի խուլ անկիւններում գտնված գաւառների բնակիչներին շատերը, չը կարողանալով տանել այլ եւս իրանց շրջապատող տեղային անշնչալիկ հանգամանքներն, այս ու այն կողմ էին գաղթելու, տեղափոխութեամբ միայն լաւ ու հանգիստ վիճակի տիրանալու յուսով: Այդ գաղթականական հոսանքից ազատ չը մնաց եւ Կիւրինը: Ստոնթը մի բազմութիւն սկսաւ դիմել Մատէն, Սոնն Ղուրջու, Գաղատի, Եօզղատ եւ այլ եւ այլ տեղեր: Թուրսի հայրը իր Պօղոսի գիւղերում ունեցած վաճառականական շահերն եւս աչքի առաջ ունենալով, խառնվեցաւ այդ գաղթականների հետ եւ հաստատվեց Եօզղատում: Պատանի թորոսը սկսաւ յաճախել Եօզղատի «ղահանեան» դպրոցը: Ամենափոքրիկը լինելով ընտանեկան շրջանում, նա ապրում էր ամենափափուկ կեանքով և իր եղբայրների ու բոլորի *enfant gate*-ն էր (չփայտած, երես տված տղայ): Բայց նա չը կարողա-

ցաւ շարունակել այդ կեանքը: Իր դեռ շատ մատաղ հասակում կորցրեց հօրը, եւ մօրը հետ վերագարձաւ իր ծննդավայրը՝ Կիւրին: Եօթը երկար տարիներ անցել էին, բայց նա շատ քիչ փոփոխութիւն էր կրել իր դիմագրծի եւ իր հասակի զարգացման մէջ: Նա այդ ժամանակ քիչ թէ շատ սովորել էր հայ եւ տաճիկերէն լեզուները, յարմարվել էր Եօզղատի միջավայրին եւ սիրել էր այդ երկիրը՝ իբր իր երկրորդ ծննդավայրը:

Իր եղբայրները, Կիւրինում մենակ թողնելով նրան իր այրի մօր հետ, հեռացան: Թորոսն այդ ժամանակ ժողովելով իր բաժին ընկած փոքրիկ կարողութիւնը, ներանով դեղագործի խանութ բաց արեց, որ շատ հեշտ է թիւրքիայում և իր արհեստի բերմամբ առնչութիւն ունենալով թիւրք պաշտօնեաների հետ, բաւական ծանօթացաւ նրանց ներքին աշխարհին, որը քողարկված էր տաճիկական կեղծ քաղաքավարական ձեւական խօսքերով: Նա շփվեցաւ նրանց հետ եւ շատ մօտից կարող եղաւ ուսումնասիրել նրանց իր մօտաւոր կարողութեան աստիճան համեմատ և սկսաւ զգուանքով նայել նրանց վրայ: Այդ գծում ու վատագի պաշտօնեաները սկսան վառնել մեր դեղագործի փոքրիկ կարողութիւնը: Նա տեսնում էր այդ, բայց լուռ էր մնում. լուռ էր ակամայ, որովհետեւ րաեա (հպատակ) էր և ամեն պարագայում ստիպված էր գլուխ խոնարհեցնել նրանց առջեւ, կատարել նրանց ամենափոքրիկ մի բռնահաճոյք: Եւ ով կարող է թիւրքիայում խօսել տաճիկ պաշտօնեաների դէմ. այն օրից, երբ պաշտօնական սրի փոկը բարշ է անում նա իր մէջքից՝ ամեն բան պրծնում է. — անբարոյականութեան ճամբան այլ եւս բացվում է նրա առջեւ. նա սանձարձակ վիստում է աջ ու ձախ. ապ-

րանքներ է գնում և փոխարէնը չէ վճարում, կամ իր
աւելածի չափ է վճարում. ծաղրում է, հայհոյում է,
նախասում է և շատ ժամանակ մտրակում «անպիտան,
խող գեաւուրներին»։ հալալ է համարում ուտել նրանց
փողը, փճացնել նրանց հարստութիւնը և փաստեր է ա-
ռաջ բերում իր վայրենի գործերին նպաստաւոր, առար-
կելով թէ «խողից մի մազ անգամ փրցնելը վարձք է»։
Ի հարկէ, զգայուն սրտերի համար անհնար է այս
ամենը տանել. պէտք է կամ համակերպել և գոհացը-
նել թիւրք պաշտօնեաների ամենափոքրիկ քմահաճոյքը
և կամ քաշվել հրապարակից։ Թորոսի խանութն են-
թարկվեցաւ ամենամեծ վտանգների և կորուստների. բանի
քանի անգամ կնքեցին նրան, առարկելով թէ վէսյա-
գիր է հարկաւոր և ամեն անգամ բանում էին, երբ կա-
շառքն իր շլացուցիչ ու հրապուրող տեսքով մանում էր
նրանց գրպանը։ Բայց վերջ չըկաւ այդ խայառաւի ձե-
ւականութիւններին. չը կտրողանալով տանել պաշտօն-
եաների բացարձակ լկտի ընթացքը, նա փակեց իր խա-
նութը և ինչ որ մնացել էր իր ձեռքը հաւաքելով
մտադրվեց իր հօր արհեստին հետեւել—գառնալ գ է-
զէ կ ճ ի (գիւղական շրջիկ վաճառական)։

* * *

Չորս երկար տարիներ էին անցել Ծառուկեանի Խօզ-
զատից Աիւրին դառնալուց ի վեր. այդ ժամակամի-
ջոցում նա զգալի կերպով զարգացել և առնացել էր. նա
թեւակոխել էր քսան տարեկան հասակը և երիտա-
սարդական աշխոյժը սկսել էր հետզհետէ երեւան գալ։
Խսնութը փակելուց հէնց մէկ-երկու շաբաթ յե-

տոյ, հրաժեշտ տալով իր այրի մօր, նա ուղեւորեցաւ
Քօզոն, Խօզ զատի գիւղերը, որ առհասարակ կիւրինցի-
ների առեւտրի կենտրոնն էր։ Հետեւելով փերեզակ շըր-
ջուն վաճառականների դրութեան, նա գնեց հուլուններ,
փոքրիկ հայելիներ, քիչ քանակութեամբ կտաւ, բասմա
եւ այլ եւ այլ զգեստեղէն եւ գիւղական զարդերի վե-
րաբերեալ բաներ եւ սկսաւ շրջել թէ հայ եւ թէ տա-
ճիկ ու բուրգ գիւղերը։ Նա, այդ enfant gaté-ն, են-
թարկվեցաւ ամեն տեսակ զոհանքների, չարքաշ կեանքի
պայմանների, որ երազումն անգամ չէր տեսել։ Թողած
իր հօրենական ստնը, ուր ամենամեծ քնքշութեամբ
էր մեծացել, նա սկսաւ գիւղացիների բ ու ը ի կտոր-
ների վրայ պառկել, փալասների մէջ փաթաթվել, որ
ամեն տեսակ աղտոտութիւններով լիքն է միշտ։ Բայց, իր-
րեւ Աիւրինի ճշմարիտ զաւակ, ամենայն համբերութեամբ
տանում էր այդ նոր կեանքը։ Առհասարակ կիւրինցիի
համար չարքաշ կեանքը ժառանգական է դարձած. բը-
նակվելով քարուտ լեռներով շղթայված խոր ձորերում,
նա ստիպված է միշտ իր ապրուստի պէտքերը հոգալ
ղրտերից։ Ղինելով երկու նաւահանգիստների, Ալէքսան-
դրէտի (Իսկէնտէրունի) ու Սամսունի մէջտեղ, ճամբա-
ների վերջին ծայր անկանոնութիւնների պատճառով նա
երբեք յարաբերութիւն չունի այդ նաւահանգիստների
հետ։ Նա չէ կարող արտահայտել իր բերբերը, իր ձե-
ռագործները և հետեւաբար, խզված լինելով բոլոր վա-
ճառաշահ քաղաքներից, հարկադրված է ցիր ու ցան
պտտել այս ու այն քաղաք փոքր-ինչ ստակ շահելու
և ապա վերադառնալով ծննդավայր, իր ընտանիքի հետ
մի քիչ հանգիստ կեանք վարելու, եթէ տեղային հան-
գամանքները թոյլ տան և պետական կոչված աւազակ-

ները չը կողոպտեն:

Ընդուն վաճառականութիւնը բոլորովին փոխեց թորոսին: Միաժամանակ գործ ունենալով իրարից ժամերով հեռի շատ գիւղերում, նա ստիպված էր ճանապարհորդել գրեթէ միշտ մենակ. այդպիսով անվեհերօրութիւնըն ու քաջութիւնը սկսան կամաց-կամաց դառնալ նրա բնաւորութեան յատկութիւններ: Պէտք էր տեսնել նրան նստած իր սիրական ձիու վրայ, լէվօլվէրը կապած մէջքին, սուրը քարշ արած ձախ կողից, շէ շխանէ հրացանն ուսին, գիւրջիի ահագին եամինջին վրան առած և համարձակ պտտելիս գիւղից գիւղ: Ոչ ոք չէր հաւատում, թէ դա, այդ քաջատես անձը, այն վտիտ, թուլամորթ փերեղակ թորոսը լինէր, որը մի ժամանակ վախենում էր դուրս գալ տանից: Բայց դա արդարեւ նոյն ինքն այն թորոսն էր: Այդ փոքրիկ մարմնում պահված քաջասրտութիւնը միանգամից ընդ միշտ երեւան եկաւ հետեւեալ դէպքում:

Մէկ անգամ իր ճամբորդութեան ժամանակ նա մըտաւ մի գիւղ իր ձիուն ջուր տալու: Աղբիւրի մօտ կային մի բանի հայ ճամբորդ երիտասարդներ, որոնք կիւրինցի շրջիկ վաճառականներ էին և ուղում էին ջըրել իրանց ձիերը, բայց մոլեռանդ տաճիկ գիւղացիները թոյլ չէին տալիս: Թորոսը բանի տեղ չը գնելով կատաղած խուժանի սպառնալիքները, խլեց դոյը մի տաճիկ երիտասարդից, ջրեց բոլոր ճամբորդների ձիերը և ապա իրանը: Գրա վրայ թիւրքերը սկսան նախատել հայհոյել, քարերով խփել նրանց: Այդ ընթացքից թորոսի արիւնն անմիջապէս խփեց գլխին. նա դուրս քաշեց լէվօլվէրը և ուղում էր արձակիլ թիւրքերի վրայ, երբ միւս հայ ճանապարհորդներն աղաչանքով միջա-

մտեցին: Թիւրք խուժանը սարսափած ցրվեցաւ: Ամբողջ գիւղը լսելով մի գեափուրի այս անսպասելի յանդգնութիւնը, փիւրերով, հրազեններով, քարերով, աղամարդ, կին ընկան նրա ետեւից: Կտած իր շըր (սպիտակ) ձիու վրայ՝ նա անխռով առաջ էր խաղում, երբ յանկարծ նշմարեց 20-25 ձիաւոր, որ գոռում, գոչում էին, հրացան արձակելով իր ետեւից: Ասպանդակը խփելով ձիու կողին, նա սկսաւ կայծակի նման ընթանալ, երբ մէկից իր առջեւը ցցված տեսաւ մի խումբ երիտասարդներ, որ լեռնային ամենամօտ ճանապարհով կտրել էին նրա ուղին և ուղում էին կալանաւորել նրան: Մի երիտասարդ համարձակեցաւ նրա ձիու ցանձից բռնել. մտրակի մի հարուած և մերկ լէվօլվէրի տեսքը բաւական եղան հեռացնելու այդ կտրձին և իր ընկերներին: Թորոսն անվտանգ առաջ գնաց, ապա թողնելով իր ետեւից ընկած ահագին բազմութեան: Կոյն օրը նա իջեւանեց մի թիւրք գիւղի քեահայի մօտ, իբր տաճիկ, Շապան անուան տակ: Այդ օրւայ դէպքը տարածվել էր ամեն կողմ և նոյն իսկ իջեւանած տան մէջ խոսում էին մի «բուռնցքի չափ» երիտասարդ գեափուրի մասին, զարմանում էին նրա յանդուգն համարձակութեան վրայ. շատերը պնդում էին, թէ նա թիւրք լազ էր, թէ գեափուրն այդքան քաջութիւն չէ կարող ունենալ: Թորոսը «քաջի» մասին արած այդ պատմութիւնները մէկ անկիւնից լսում էր լուռ ու մունջ...

Այդ ժամանակ Սեբաստիայի, Գաղատիայի և Հալէպի նահանգներում երեւան էր եկել մի աւշար աւաղակ. նրա անունն էր Չէլլօ: Զարմանալի քաջագործութիւններ էին պատմում նրա մասին: Իր երկու ընկերների հետ միասին նա զբաղեցնում էր ամբողջ Սեբաս-

տիայի, Կեսարիայի, Հալէպի և սրանց գաւառների ոստիկան զինւորներին: Սրանցից շատերը սպանվել էին, շատերը վէրք ստացել, այնպէս որ ոչ ոք չէր համարձակվում Չէլլոյի վրայ յարձակվել և նրա անունը լսելիս՝ ոստիկանները դողում էին ու երկիւղից ցրվում: Կեսարիայի հարևարապետը երկու վէրք էր ստացել իր ազդերից, իսկ մի դէպքում մի ոստիկան զինւոր վախից վայր էր գցել իր գէնքը և իր ընկերների հետ միասին շփոթված խոյս էին տվել դէպի գիւղերը և այդտեղ կողոպտել գիւղացիներին: Չէլլօն կուշտ-կուշտ ծիծաղում էր նրանց վրայ և արհամարհում թիւրք կառավարութեան սինլքոր պաշտօնեաներին: Նա միեւնոյն ժամանակ երբէք չէր մնասում աղքատ դասակարգին եւ, ընդհակառակը, շատ անգամ օգնում էր նրան կամ դըրամով և կամ հարուստներից առած կողոպուտով:

Թորոսը, որ ականատես էր եղել գիւղացիների քաշած տառապանքներին, անգիտակցաբար զգում էր մէկ ինչ որ յեղաշրջում իր մէջ: Չէլլօյի համբաւը, նրա քաջագործութիւնները զարմացրել էին նաեւ Թորոսին. մանաւանդ այդ աւշար աւազակի բարեգործութիւնները և նրա կառավարութեան դէմ ունեցած սաստիկ ատելութիւնը զարթեցրել էին Թորոսի մէջ մի վրէժխնդրութեան ոգի. նա ուխտել էր կուել և յաւիտեան կուել:

Վաղատիայի երկաթուղին դեռ չէր լրացել այդ ժամանակ, ամբողջ Պողոսը իր արմախքները և բերքեքերը տանում էր Մարզուանի վրայով դէպի Սամսոն: Թորոսն ունէր բաւական քանակութեամբ ցորեն եւ գարի և նրանց փոխադրութեան միջոցին հանդիպել էր

նաեւ Մարզուան և լսել մի գաղտնի ընկերութեան մասին: Նա ունէր մի ծանօթ բարեկամ, Մուրատ անունով, որին զիմեւ յայտնել էր իր ցանկութիւնը անդամակցել այդ ընկերութեան: Բայց մերժում էր ստացել. նա քանիցս շարունակել էր իր գիմուքները և ամեն անգամ բացասական պատասխան էր ընդունել: Մէկ օր ինքնաբերաբար նա գնել էր Վաղատիայից 1000 փամփուշտ, մի քանի ըէվոլվէր և ութ օրւայ ճանապարհը կտրելով մի քանի օրւայ մէջ, անվտանգ հասել էր Մարզուան և առանց որ և է շահ ակնկալելու, այդ գործիքները տեղի անձանց ընկերութեան ցանկացել էր յանձնել: Այդ ժամանակ Վախու-Վաթայի անտառների հերոսը, — յայտնի Միւնասը, իր խմբով արդէն երեւան էր եկել և նա կատարել էր զարմանալի քաջագործութիւններ, սպանելով 10 զման և քիւլիկ շասան երկու նշանաւոր և կառավարութիւնից պաշտօն ստացած լազաւազակներին և գիւրջի Մէվլուդ շաուշ ոստիկանին, որով մեծ սարսափ էր գցել կառավարական և ոստիկան զինւորների շրջանակում: Միւնասն ասպատակում էր աչ ու ձախ, ամեն տեղ բաց էր գտնում ասպարէզն իր առջեւ: Ոստիկանները նրա անունը լսելիս «Ալլահ էբպէր» (մեծ Եւստուած) ասելով, սարսափահար խոյս էին տալիս: Թորոսը հետաքրքրութեամբ լսում էր այդ բոլորը և բարի նախանձը բոյն էր գնում նրա սրտում: Եւ նա աղաչում էր Մուրատին, պաղատում էր, որ ընկերութիւնն ընդունէ և միջոց տայ նրան գործելու: Մուրատը, տեսնելով նրա հաստատ որոշումը եւ անընկճելի ոգին, ծանօթացրեց նրան գաղտնի ընկերութեան, այն է՝ Հնչակեան Կուսակցութեան տեղային վարչութեան հետ, որն ամենայն ուրախութեամբ ընդունելով նրա ա

պէս ազդել էր նրա վրայ: Այդ ժամանակ նա դեռ պատանի էր. կարճահասակ, լայներես, կարմրայտ, հաստաշուրթ, մկանուտ ու լեցուն էր և իր ծնօնների վրայ դեռ հազիւ էին բուսել պատանեկութեան շէկ աղուածազերը: Նա լսել էր իր մանկական հասակում շատ ու շատ բաներ, բայց հիմա ամեն ինչ արդէն իրական կերպով պատկերանում էր իր աչքի առջեւ: Այդ բոլորն այդ կիսակիրթ ու բիրտ արհեստաւորի զգացման թելերն այն աստիճան լարել էին, որ նա ինքնաբերաբար մղվում էր հերոսների աշխարհը, նախագծեր էր շինում, ծայրայեղ երեւոյթների միջով տարուբերվում էր: Ահա այդ հոգեկան անորոշ դրութեան մէջ վրայ հասաւ թորոսը: Ահա ինչպէս իր երազների հերոսն իրականապէս տեսնելով իր առաջ, անկեղծօրէն աղաչեց նրան, որ ինքն եւս իբրեւ ընկեր ընդունվէ: Թորոսն այդ՝ իր նման կարճ ու լեցուն նորահաս պատանիի մէջ տեսաւ բաւական տոկունութիւն, անվեհեր ոգի, գարձրեց նրան իրան ընկեր, նրա համար գնեց մի ձի, տվեց մի ձեռք լազի գգեստ և ուրիշ ինչ որ պէտք էր ասպատակի համար:

* * *

Մէկ օր երկու ձիաւոր, կտրիճ տեսքով, ոտքից մինչեւ գլուխ զինված, երեւեցան Ասարիայի ս. Կարապետ վանքի զառիվերում:

Վարդավառի տօնն էր: Այդ օրը շրջակայ գիւղերի բոլոր բնակիչները թափվել էին վանքը: Վեղարաւորների երեսը խնդում էր: Բազմութիւնը խմբերի բաժանված՝ նստոտել էր այս ու այն ընկուզենիի շուաքի տակ: Յուրիս անտանելի ու հեղձացի օդը ճնշում էր:

Հեշտակի զառիվերի հրաբխային միապաղաղ լաւայից առաջ եկած փոշին խփում էր մեր ձիաւորների երեսին: Մանջը քաշելով խոր ձորից մինչեւ վանքն առաջանալիս՝ նրաք ներկվել էին սպիտակ գոյնով. փոշիի հատիկները ներկել էին նրանց և անծանօթ կերպարանք տվել: Քիչ վերջ նրանք արդէն բոլորովին մօտեցան ընդարձակ պարտէզի պարսպին: Մօտ տեղից լսվում էր արեւելեան մանկների, շաքիների (խաղեր) տխուր կլկլոցը: Ուխտաւորների խմբակներում երեւում էին վեղարաւորների ցից սրածայր գլխարկները. այս պատաւոր գլխարկների պատաւոր տէրերը, գինու շոգիից տաքացած, վաւաշոտ ակնարկներ էին գցում այս ու այն օրիորդի վրայ: Վանքի այդ որջացեալ աւազակների տօնն էր այդ օրը. նրանք շողքորթում էին, կատակներ էին անում և կողպատում ժողովուրդին: Երկու զինված ձիաւորների երեւալը ելքետրական հոսանքի նման իսկոյն տարածվեցաւ խմբակների մէջ: Աստուծութեան զրկած պահապան ոստիկանները՝ իրանց հրացաններն առած՝ դուրս նետվեցան վանքի խաւով աղաչելով երկու խորտալազ երիտասարդներին, անմիջապէս հասկացան, թէ որի հետ գործ ունեն: Երարեցին իրանց պարծենկոտ լեզուն եւ գիմելով տաճկական խորամանկութեան, նրանցից որը վազեց ձիաւորներին գիմաւորելու, որը ձիերը բռնելու... եւ սկսան ման ածել ձիերին նրանց բրախքը շրջանելու համար, ոմանք թոթովում էին նրանց վրայի փոշին, իսկ մի քանիսները խաւով աղաչելով շալի շատրուանի շուրջը պատրաստում էին հեծեալների համար օթեակներ և մի քանիներն էլ շրույուրըն (համեցէք) ասելով, առաջնորդում էին նրանց:

Բազմութիւնը մի ժամանակ մոռանալով իր ուրա-

Թուրքիան, շրջապատել էր երկու դեռահաս երիտասարդ-
ներին, սքանչանում էր նրանց բաշլըղներին, նրանց զըբ-
շայի (նեղ շալվար) վրայ և զարմանում, թէ ինչ հա-
մարձակութեամբ նրանք վերցրել էին մարմին և ինչ-
պէս էին զարգարել իրանց կրծքերը փայլուն չափ-
բաստ ֆշէկլիկներով... Մի քանիսի սիրտը
տրոփում, տրորվում էր, թէ ահա չավուշը իսկոյն նը-
քանց կը ձերբակալէ և կապկպելով կը տանէ կենտրո-
նական բանտը: Աղարաւորների երեսի գոյնը նետել
էր. նրանք, այդ օտարակերները, մէկ-մէկ խոյս էին տը-
վել իրանց որջը և նրա նեղ պատուհանից հետաքրքիր
էերպով դիտում էին երկու երիտասարդների ամեն-մի
շարժումը:

Անատուրի ճշ մի քաղաքում տաճիկ տարրն այն-
քան մոյեռանդ, այնքան հայատեաց և այնքան արիւ-
նադբու չէ, որքան Աեսարիայի և իր շրջակայների թիւրք
ժողովուրդը: Նա ունի իր պատմական անցեալը, որը
մեծ անպատուութիւն է բերում տաճիկ կառավարու-
թեան արդէն անպատիւ անցեալին: Իր ներկան աւելի
ժառ է. նա դեռ չէ թողել իր հին ենիչերիական բար-
բարոսութիւնները: Նա հետեւում է հայի — «գեաւու-
րի» — քայլերին, մանաւանդ տօնի օրերում և միշտ աշ-
խատում է պղտորել նրա վայրկենական ուրախութիւնն
անգամ: Նա ուտում է հայի սեղանից, խմում է հայի
գինին և յետոյ անարգում, հայհոյում է նոյն հայե-
րին և շատ անգամ անպատում իսկ հայ կինը: Երբեք
չէ եղել, որ վանքի ուխտագնացութեան օրերում հա-
յրն առանց մի բանի տաճիկ սրիկանների սեղան նստէ:
Այդ ուրախութեան օրը միաժամանակ սարսափի և տրիս-
նահեղութեան օր է դառնում: Զըբլափ ու գի (տա-

ճիկ գիւղ, որի բոլոր բնակիչներն աւազակներ են) Մաշ-
քըսընի, Աէրմիրի, Թալասի թիւրք խուժա-
նը, միացած քաղաքի բարբարոս երիտասարդների հետ,
շատ անգամ յարձակվում է ուխտաւորների վրայ, ջար-
դում, փշոյում սեղանները, թալանում ուտելիք ու խմե-
լիքները, գլուխներ պատառում և հայ հարսների ու օ-
րիորդների վրից քարշ արած ոսկիների շարոցները բռն-
նի յափշտակելով հեռանում: Կառավարութիւնը երբեք
չէ հետաքրքրվել այդ անկարգութեամբ և չէ էլ պատ-
ժել թիւրք սրիկանների բարբարոսութիւնները. իբր թէ
դրանք շատ բնական և կանխամտածված բան լինէին
և անհրաժեշտաբար կատարվէին:

1892 թ. վարդապետը չունեցաւ այդ սովորական
դժբաղդութիւնը. երկու երիտասարդների թողած ազ-
դեցութիւնն ու սարսափն այնքան մեծ էր, որ զսպել
էր տաճիկ երիտասարդների վայրագութիւնը, որոնք բաջ
են միմիայն իրանց շրջանակում... իսկ դրսերը նապաս-
տակի պէս երկչոտ: Եւ այս անգամ նրանք ուրուական-
ների նման երբեմն-երբեմն վեր էին բարձրացնում ի-
րանց գլուխները խաս-Բաղչայի պարսպից և դիտում
երկու փայլուն կտրիճներին:

Մի քանի ժամից յետոյ թորոսն ու Աիւպէնկը մը-
տան վանքը, բաց անել տվին ս. Կարապետի նշխարները
պարունակող մատուռը և գնելով իրանց զէնքերը գերեզ-
մանի վրայ, երկուսն էլ երգվեցան մեռնել հայ ուսմիկ
ժողովուրդի դատի համար: Իրիկնադէմին նրանք մեկ-
նեցան Տէրէվէնք, ուր ծանօթացան և տեսնվեցան
Դանիէլ վարդապետի հետ:

Դուսադէմին երկու ձիաւորները սրնթաց գնում էին Պալասի (Բալասի) դաշտով: Անսարիայի ոստիկան զինւորներն արգէն ցրվել էին գիւղերում և փնտռում էին «նոր Զէլլօին»: Սեբաստիայից Խուսրէվ փաշան (նախկին չէրքէզ աւազակ), իր հետ ունենալով հիւրինցի Մէհմետ բէկ անուն անպատիւ երիտասարդին, 72 զինված ձիաւորներով ճամբայ էին ընկել «նոր Զէլլօին» հալածելու, որը հին առասպելական դեւերի նշան էր, մէկ օրւայ մէջ երեւան էր գալիս մի տեղ, մէկ էլ 10-20 ժամ հեռաւորութեամբ մէկ ուրիշ տեղ: Գաւառների ոստիկան զինւորները, անմաքուր տանտիկինների նման, մերթ այստեղ էին վազում, մերթ այնտեղ և միշտ խոյս էին տալիս այն գիւղից, ուր «նոր Զէլլօին» հասն էին առնում:

Այնքէկից երեք ժամ հեռու Գարա-Գէօլ հայաբնակ գիւղի հարաւային կողմի բլրակի վրայ արեւիձաւազայթները փայլեցնում էին երկու ձիաւորի զօհնները: Նրանցից մէկը հեռադիտակը ձեռքին՝ դիտում էր ձիաւորների մէկ անկարգ բազմութիւն, որ արագաբար գալիս էր: Դա Խուսրէվ փաշան էր իր զօրքով, որ հեռուից շտապում էր դէպի երկու հերոսները: Այս ժամ հեռաւորութիւնից արգէն սկսվել էր փոխադարձ հրացանաձգութիւնը. գնդակները վժվժում էին... Բայց հազիւ կէս ժամ անցած, տաճիկ խառնիճաղանձն արգէն սկսել էր տեղի ալ և փախչել դէպի Գարա-Գէօլ, երբ Թորոսն իր ընկերի հետ դիմեց դէպի մի մօտակայ գիւղ: Այնտեղ հաւաքելով գիւղացիներին իր շուրջը, Թորոսը ահաւ քարոզել նրանց, ներկայացնել նրանց աչքին ի-

րանց տնտեսական բոլորովին քայքայված ու սնանկ վիճակը, դրա պատճառները, կառավարութեան խայտառակ ձեռնարկութիւնները, նրա պաշտօնեանների հրէշային գործերը ևն, ևն: Նա խօսում էր ոգեւորված կերպով, պարզ գիւղական լեզուով և շարունակ շեշտում էր մօտ ապագայում սպառնացող ժողովրդական սկնանկութիւնը: Գիւղացին, դարերի այդ թմրած ստրուկը, ընդունում էր նրա ամեն-մի խօսքը չորացած երկրի նման, որ անյագաբար ծծում է անձրեւի կաթիլները...

Ամեն գիւղ ընդունում էր նրանց իբրեւ իր ազատիչներին: Տաճիկ գիւղացին անգամ հետքերքովում էր նրանցով, հիւրասիրում էր, ահանջ էր գնում նրանց համարձակ խօսքերը և բաց անելով իր աչքը, նա տեսնում էր այն իսկաւոր անդունդը, որ կառավարութիւնը, միանալով դրամատէր վաշխառուների հետ, փորել էր նրա, այսինքն՝ ժողովրդի առաջ: Անկումը մօտ էր եւ այդ սոսկալի վայրկենին անդնդի ու ռամիկի մէջտեղ յանկարծ կանգնած է երեւում մի նորահաս երիտասարդ, որ ցոյց է տալիս այդ մօտալուտ անկումը և նախազգուշացնում նրանց: Եւ թիւրք գիւղացիներն իսկ անհիճում էին սուլթանին եւ նրա աւազակ պաշտօնեաներին, «Մէհտի» (Մէսսիա) անուանում Թորոսին եւ պաշտում նրան:

Առաւարութեան զայրոյթն իր սահմանից անցել էր. նա զգացել էր, թէ իր գիմաց կանգնած էր ոչ թէ աւշար, գող ու աւազակ մի Զէլլօ, այլ ժողովրդի արգաք պահանջների ու բողոքների մարմնացումը եղող մէկ անձ, որ դուրս եկած նոյն այդ ժողովրդի ծոցից, միշտ հաւաճում էր կառավարութեան պաշտօնեաներին, սպանում էր նրանց և ժողովրդին գրգռում բռնութեան

դէմ: Եւ կառավարութիւնն իր ամբողջ զօրութիւնը հաւաքելով, հալածում էր նրան, բայց միշտ յաղթվում: Ամբողջ ամիս ու կէս շարունակվեց այդ փոխադարձ կռիւր: Այդ ժամանակամիջոցում Թորոսն իր ընկերների հետ ենթարկվեցաւ անտանելի նեղութիւնների. նա շատ անգամ ստիպված էր օրը 40—50 ժամայ անընդհատ ճամբայ երթալ և մէկ անգամ հինգ օր նա մնաց անօթի: Պատճառն այն է, որ մի բլրակի վրայ գտնվելով նա շրջապատված էր ամեն կողմից: Բայց պէտք էր ելք գտնել և գտաւ: Իր վերջին որոշումը եղաւ գիշերանց ճեղքել թշնամիներին. ինչ էլ կատարեց: Առանց նկատվելու նա անցաւ և դիմեց գէպի Ա. Գ. Դ. աղի անտառները: Իսկ նրա տգէտ թշնամիները կարծեցին, թէ նա համբարձել է: Հատ գէպերում նրա անկատար հրացանը քիչ էր մնում, որ մատնէր իր տիրոջ. այդպիսի պարագաներում նա գործ էր ածում իր Գարատաղ ըէփովէրը: Իր այդ երկրորդ շրջանն էլ կատարելով ամենամեծ աջողութեամբ, նա վերադարձաւ Մարզուան: Կիւլպէնկը միշտ իր հետն էր:

Մարզուանում, որպէս ամեն կողմ, արդէն լսվել էր իր համբաւը: Նրան վերագրում էին առասպելական քաջագործութիւններ, որ իր երազումն անգամ չէր տեսել Թորոսը: Նրան ընդունեցին ամենամեծ սիրով: Նա տվեց իր գործունէութեան և գիւղացիների տրամադրութեան մասին տեղեկութիւններ և զեկուցումներ: Տեղային չընչական վարչութիւնը, գնահատելով նրա գործունէութիւնն, իրան տվեց պաշտօնական վկայագիր և տաճկա-

կան բէյլիկ-մարթին հրացան և մեծ քանակութեամբ ռազմամթերք: Այդ ժամանակ Մարզուանի բանտից փախուստ էր տվել Միսիթար Տէր Նշանեանը, իր հետ տանելով Չաուշի հրացանն ու պաշտօնական սուրը, և նա ապրում էր քաղաքում ծպտեալ կերպով, իրան ընկեր ունենալով Ջէնկիւճեան Միհրանը: Ինչպէս յայտնի է, այդ երկուսն էլ Մարզուանի 8 Սեպտեմբերի 1893 թ. հերոսանահատակներն են: Այդ երկուսին միացան Թորոսը և Կիւլպէնկը: Կարճ ժամանակից յետոյ այդ չորս հերոսներն էլ մի ցոյց անելով Օսման ջըգի ճամբայի վրայ, զատվեցան իրարից: Թորոսն իր ընկերով անցաւ դէպի Չորում, սպանելով 2 էջբէլիի դէրբէնգի (անցքի) ոստիկանին, որը կողոպտում էր անցորդներին: Չորումից մի վաշտ զինւոր միանալով բաշը-բօզուգների հետ, հետեւեցին նրանց: Սուլդուր-Լուսի մօտ նրանք ունեցան մեծ կռիւ. երկու զինւոր և մէկ բաշը-բօզուգ լազ սպանվեցան: 48 ժամ ճանապարհորդելուց յետոյ Կիւլպէնկի ձին անկարող եղաւ շարունակելու ճամբան: Դա մեծ դժբաղդութիւն եղաւ իրանց համար, որովհետեւ նրանք ստիպվեցան թողնել մեծ քանակութեամբ փամփուշտ և իրանց զգեստեղէնի մի մասը և սպասելով գիշերի խաւարին, գիմեցին Խօղղատ: Բայց նրանք չէին կարող հանգիստ և անգործ մնալ և ոչ մի տեղ. նոր հոսանքը մղում էր նրանց և իրանց համար պարտաւորութիւն էին զգում աւելի եւ աւելի տարածել նրան, այդ նոր հոսանքը:

Նոյն 1892 թ. օգոստոսի վերջերը նրանք ճանապարհ ընկան դէպի Մատէն, ճամբային կռիւ բռնելով սպանեցին երկու ոստիկան զինւորի ու անցան Ղըջըլ-Ըրմագի հարաւային գիւղերը: Այդտեղ եր-

Ֆուլ ընկերները հրաժեշտ տուին միմեանց՝ գարնան անպատճառ կրկին միանալու խոստումով... Շատ դառն եղաւ նրանց բաժանումը. արտասովում էին, համբուրվում էին, իրար գրկում անդադար: Այնպէս էր կապված նրանց սրտերը, որ անհնար էր թւում հեռանալ միմեանցից: Մէկ անորոշ նախազգացում տանջում էր երկուսին էլ. կարծես նրանց առաջ պատկերանում էր ապագան, պատկերանում էր սուլթանն իր անարգ կախաղանով՝ որի վրայ նրանք միանգամ եւս և ընդմիջ ալիտի միանային... Նրանք տեսնում էին իրանց տնջնչացած մարմինները կախ ընկած բռնութեան ստեղծած «անարգ սիւնից» և խուժանը, որ ահ ու սարսափով զիտում էր նրանց, գիւղացին, որ ողբում էր իր սիրելիների մահը և այդ արտասուքները խեղդում էր իր մէջ. բռնութիւնը պատժում էր արտասովողներին... .

Այդ տենդային գրութեան մէջ նրանց արտասուքների ազդեցութիւնից կարմրած աչքերը հանդիպեցին իրար. մէկ ինչ-որ հոգեկան գրութիւնից առաջացած սարսուռ ցնցեց նրանց մարմինները... Վերջապէս նրանք բաժանվեցան և այդ բաժանումն առաջնորդեց նրանց դէպի կախաղան... .

Նրանց գործունէութիւնը ոգեւորել էր գիւղացի և բաղաձայնի հայ ժողովրդներին և սկսել էր նրանցից դուրս բերել նոր հերոսներ: Մի հրիճան խան ապախեանը և փանոս Եաղուպեանն այդ հերոսներից էին: Առաջինը մի կարճ, փոքրիկ եւ վայելչակազմ երիտասարդ էր. նրա խոհուն աչքերը և քաղցր խօսակցութիւնը գրաւում էին իր ընկերներին. իր սուր մտքով, բնական ճարպիկութեամբ նա նախախառնում էր ամենափոքրիկ վտանգն անգամ և խոյս

տալիս: Գիտէր օգտվել և հանգամանքներից. բնութիւնը նրան ստեղծել էր վազելու և սուր շարժելու համար: Փանոս Եաղուպեանը ներկայացնում էր հսկայ, ղյոժ, հսկայ իրան, խոշոր աչքեր և խոժոռ դէմք: Նա խանապախեանի հակապատկերն էր: Թաւուռուս գիւղում կատարված մի սպանութեան համար ամբաստանված լինելով, ստիպվել էր խոյս տալ: Երկու տարի նա ապրում էր փախստական կեանքով: Մենք մի Ժամանակ տեսանք նրան Պոզոխի գիւղերում: Թորոսի երեւան գալուց ի վեր, նա վերադարձել էր Թալաս և խանապախեանի ընկերակցութեամբ բաղաձայն էին գործում: Նրանք պատրաստում էին բնակարան, ուտելիք, ուղղամիտքը Թորոսի և նրա ընկերի համար. հսկում էին և փախստի ճամբաներ պատրաստելով, առաջնորդում էին նրանց: Նրանք, այդ վառվուռն երիտասարդները, խոստանում էին ապագայում մեծ գործեր տեսնել, բայց անարգ մատնութիւնը շուտ վրայ հասաւ. վատութիւնը դաւաճանեց նրանց... .

Մենք չարձանագրեցինք դեռ Թորոսի բոլոր քաղաքործութիւնները: Հանգամանքները դեռ եւս չեն ներում այդ բոլորը երեւան հանել: Ապագայում, անշուշտ, կը լրացվէ այդ պակասը:

Թորոսը նշանված էր: Նա իր ծննդավայրը դառնալուց մէկ ամիս վերջ ամուսնացաւ օր. Էլմաս Ծառուկեանի հետ: Այդ ամուսնութիւնը եղաւ նրա առաջին սխալը: Ասպատակային կեանքը նրանում առաջացրել էր ծայրայեղ յանձնապաստանութիւն. նա արհա-

մարհում էր ամեն ինչ. պաշտօնեաները երբեք նշանակութիւն չունէին նրա առջեւ. նրանց վրայ նայում էր իբրեւ գեանաբարչ սողունների վրայ:

Կիւրինի ձմեռը խիստ սաստիկ էր այդ տարի. նա յիշեցնում էր ծերերին նախկին ձմեռները, երբ կանգուններով բարդված ձիւնն արգելում էր դրացիական յարաբերութիւնները: Հիւսիսի բուռն քամին մօտակայ բարձր բլրակների ձիւնը քուլաներով գզգզում, թափում և ահագին հիւսեր էր կաղմում այդ խոր ձորամէջ քաղաքում: Ամբողջ երկար երեք ամիսներ էին անցել ոչ ոք չէր կասկածում թէ Կեսարիայի, Սեբաստիայի և Եօզղատի գաւառների շրջակայքում շահատակութիւններով կառավարութիւնը զբաղեցնող անձն իր տանը լինէր: Այդ ձմեռ երեւան եկաւ եւ յայտնի «յայտարարութիւնների» խնդիրը: Սարսափած կառավարութիւնը բանտարկում էր ամենքին. ոստիկան-զինուորները տաճիկ գիւղերում կրօնական պատերազմ էին բարոդում և գրգռում տաճիկ տարրին գեավուրների դէմ: Կիւրինի շրջիկ վաճառականները քշվել էին գիւղերից. նրանցից երկուսը զոհվել էին մոլեռանդ խուժանի կրքին: Շիւրվա ն Ղազարը Պօզոսի գիւղերում կողոպտվել էր և այնքան գանակոծվել, որ մի քանի օր վերջ մեռել էր ցաւից: Իսկ Հալաճ-Թորոսեան Յակոբ բաջ երիտասարդը չարաչար խեղդել էին Սարը-Ղըշկա յի և Ուչուխ գիւղի մէջտեղում, և մարմինն անհետացրել: Ոճրագործները, տեղային գատը ի տղան եւ իր ընկերները, համարձակ պատում էին: Յակոբի եղբայրների դիմումները միշտ անյսելի էին մնում: Բընութիւնը եւ բռնութիւնը ձեռք ձեռքի տված կտրել էին գեավուր ճանապարհորդների անցքը: Երեւան էին

եկել եւ մատնիչներ: Գրանց շնորհով Գէտիկ-Օվասիի հայ գիւղերի բնակիչներով լցվել էին բանտերը: Պետական աւազակները կողոպտում էին նրանց: Գիւղացիների ընտանեկան յարկը, նրանց հարսներն ու օրիորդները մատնված էին թիւրք պաշտօնեաների վայրենի կիրքերին: ԷՏՄԱԼՕՂԼԻ ՀԱՄԲԱՐԸ, Կէմէրէկի միւտիւրը, մատնել էր Ծառուկեանին և Կիւլպէնկին: Այս վերջինն արդէն բաւական ժամանակից ի վեր Կեսարիայի բանտում շղթաների տակ էր: Ամեն կողմից լուրեր էին հասնում Թորոսին՝ հեռանալու ծննդավայրից, բայց մի կողմից կատաղի, անխիղճ բնութիւնն արգելք էր հանդիսանում նրան, միւս կողմից նրա անխոհեմութիւնը ծայրայեղութեան էր հասել: Վերջապէս նա զոհ գնաց. . . .

* * *

1893 փետրվարի 17-ին Կիւրինի շուկայում ձերբակալվեցաւ Թորոսը. անմիջապէս շղթայեցին նրա ոտքերը: Գրեթէ 19 օրի չափ անդային բանտում մնալուց յետոյ փոխադրվեցաւ Սեբաստիա: Այնտեղ միջին դարերի ծանր տանջանքների տակ շատ չարաբեցին նրան: Նա յայտնեց իր արած գործերը: Նրան փոխադրեցին Գաղատիա, ուր ստացաւ իր վերջին ծանր վճիռը. . .

Թորոսը միշտ նախատեսնում էր այդ և յաճախ մարգարէաբար յայտնում էր իր ողբերգական մահը: Կախաղանի տակ էլ նա մնաց նոյնը, ինչպէս էր միշտ. հրպարաւ, շիտակ և անընկճելի: Նա մտածում էր միմիայն իր գիւղացիների, ռամիկ ժողովրդի բայբայված դրութեան և հայրենիքի մասին: Այդ նպատակով նա մտաւ գործի-

ասպարէզը և այդ սուրբ աղաղակով «Կեցցէ՛ Հայաս-
տան, Կեցցէ՛ Յեղափոխութիւն»՝ խեղդովեցաւ նա կախա-
ղանի թովով... Նոյնպէս կախաղանի տակ նրա վսեմա-
ղաղակի խորհրդաւոր արձագանքը տուին իր միւս քաջ
և անձնուրաց ընկերները... Բռնակալութիւնը լսեց այն
և սարսեցաւ. — այդ վերջին աղաղակում, որ կարծես գե-
րեզմանից էր ելնում, նա տեսնում էր իր մօտալուտ ան-
կումը:

Կ Ե Ր Ը Ղ Ը Ն Ի Տ Ը Կ Ի Ց

ԹՈՐՈՍ ԾԱՌՈՒԿԵԱՆՆԻ ՎԵՐՋԻՆ ՆԸՄԱԿՆԵՐԸ

I

Գաղատիա. Բանտ. 16 յուլ. 1893.

Սիրելի ընկեր,

Սակաձս կիրականայ. բանտապահներէն մէկը, որ
բան մը չը պահէր ինձմէ, այս կէսօրին ըսաւ ինձ թէ
գիշերը սաստիկ հրամաններ հասած են Պօլիսէն, թէ
ատոնց համեմատ պէտք է մէկ քանիներ կախուին եւ
մնացեալներ աքսորուին հեռաւոր տեղեր: Կը յիշես, որ
նախորդներովս գրած էի թէ՛ քանի քանի անգամներ
Պօլիսէն հինգիս նկատմամբ մասնաւոր հարցումներ ուղ-
ղած էին Ապէտին փաշայի. ինձ համար յայտնի էր այս
վախճանը: Հիմա, սիրելիս, ահա կեանքիս վերջին ժամե-
րը կը մօտենան. քեզ կը վստահացունեն, որ պաղարիւն
կերպով կը դիտեմ այս վախճանը. սա զարմանալի չէ,
արդէն հաշուի մէջ էր ինձ եւ ընկերներուս համար:
Բայց ես աւելի կ'ուզէի գործելու փառքը ժառանգել. քիչ
գործեցի, ահա միակ ցաւս. ժողովըդին ծառայելու ջերմ
փափազներս ուղածիս պէս չի կշտացան: Ցաւս թող մարի
շունչիս հետ, փափազներս կը կտակեմ ընկերներուս: Ներ-
կային վրայ չեմ խորհիր: Վերջին ափսարկով մը անցեա-
լը կը տեսնեմ առջեւս պատկերացած, լեռները, անառ-
ները, այրերը, գիւղերը, որ այնքան ինձ մտերիմ են... Այն-
իմ կոիւներս... ասպատակային կեանքը, իր հաճոյքնե-

ըով ու իր տագնապներով կը շարունակէ աչքիս առջեւ.
...նոյնպէս կը տեսնեմ իմ բազմաթիւ սիրական հայ գիւ-
ղացիներս, որոնց օգտակար ըլլալու համար սրտանց ու-
րախ եմ: Գիտեմ, ապագային յոյսերս պիտի կատարուին
անշուշտ: Սիրելիս, կախաղանիս տակէն կարծես աւելի
պարզ կը տեսնեմ մեր ցանկացած առաւօտին արշալոյսը.
այն համոզումս ալ միշտ կը փայլ, որ նահատակներու
արիւնով միայն հայ ժողովուրդը կրնայ ունենալ նոր բաղ-
դաւոր կեանք մը: Այդ կեանքին համար որքան արիւն
թափուի՝ քիչ է: Մեր ուզածները օր մը անպատճառ
պիտի իրականանան. ժողովուրդը մղված իր թշուառութե-
ան պիտի շարժի միշտ, մինչեւ որ նոր կեանք մը ձեռք
բերէ. միայն թէ անոր սրտոտ, խելացի առջնորդներ պէտք
են. այդ ալ գուր պիտի ըլլաք միշտ: Մի մոռնաք ձեր
Թորոսի այդ կտակը:

Ուրախ եմ որ միւս ընկերներս պաղարիւնութիւն
կը պահեն: Կիւլպէնկը կըսէ՝ դա՛ն իմ սիրելիս, խելո՛ւ
հայ ժողովուրդ, եթէ տասը կեանք ունենայի, տասն ալ
չուտայի բեզ համար: Եթէ առիթ գտնեմ, կը գրեմ
գարձեալ. եթէ չը գտնեմ, իմ հրաժեշտս կուտամ բո-
լոր սիրելիներուս: Թող ներէ ինձ ընտանիքս, որ խաղաղ
կերպով նահատակի բունը քնանամ: Քաջալերեցէք իմ սի-
րական գիւղացիներս. ըսէք անոնց թէ Թորոսներ կրնան
մեռնիլ ու պէտք է որ մեռնին, բայց անմահ են լուսա-
ւոր գաղափարներ. հաւատք գոյացուցէք մեր արդար
գափի յաղթանակի մասին: Կրծքիս կը սղմեմ բոլոր պաշ-
տելի հայ գործիչները. թող երբէք չը թուլնան եւ
միշտ բարձր պահեն յեղափոխութեան դրօշը, չնչակ-
եան դրօշը: Կորուստով պիտի շահինք:

Քոյդ ԹՈՐՈՍ.

II

Կ ա խ վ ե լ ու ց մ է կ օ Ր ա ո ա ջ գ Ր Վ ա ծ .

Սիրելի ընկերներ,

Ա՛լ ստոյգ է. ժամերով կը համրուին մեր օրերը.
կօգտուիմ առիթէն, բանի որ դիակ մը պիտի դառնամ
կամ այսօր կամ վաղը: Կեանքի եւ մահուան մէջտե-
ղը կայնած եմ. մարգարէական ոգի մը կուգայ իմ վրայ.
ապագան երբէք այսչափ պարզ տեսած չունէի. հաւատ-
քը ինձ համար իրականութիւն մը կը դառնայ այս պա-
հուս: Այդ հաւատքը ներշնչեցէք ժողովուրդին, նաեւ
սա փրկարար համոզումը թէ՛ ժողովուրդի համար ուղել
և կրնալ նոյն բաներ են: Զինեցէք կիներն ալ նոր գա-
ղափարներով: Թիւրքին մերկութիւնը, ապականութիւնը
և կործանող ընթացքը ազատ համարձակ երեւան հա-
նեցէք, ինչպէս մինչեւ հիմա վշտացեալներ շուտ կը մի-
անան: Հարուածներէ ու կորուստներէ մի վհատիք. այս՝
ցաւերուն սկիզբն է. դեռ աւելի մեծ հարուածներ պի-
տի ըլլան, իրարանցումներ, կոիւներ, արիւն. այս է ա-
զատութեան ճամբան: Մի բնաւ թուլանաք. փրկութեան
օրը մօտ է, եթէ անօգնական չի մնան գործիչները: Հա-
յուն ազատութիւնը հայը պիտի գործէ. մուրալը օգուտ
չունի. միշտ, պիտի խաբեն ձեզի: Շուտ կը հասնի ցան-
կալի օրը: Պէտք է շատ ոյժ տալ ասպատակներու
կազմակերպութիւններուն. ատոնք հրաշքներ կրնան գոր-
ծել: Շատ գործեցէք, աղէկ գործեցէք, միասին և կանո-
նաւոր գործեցէք: Թիւրք բռնակալի ապականած կառա-
վարութիւնը միշտ առիթներ պիտի տայ ժողովուրդը

կատղեցնելու. այդ կատաղութենէն միշտ պէտք է օգտուիլ: Սիրտ տուէք, պատրաստեցէք գիւղացիներուն... ախիմ սիրական գիւղացիներս... Զգուշացէք ժողովուրդները իրարու դէմ գրգռելէ. մեր դատը անիրաւ, բռնակալ, աղտոտ կառավարութեան դէմ է, որ կառավարութիւն չէ, այլ հրէշային մէկ ճիւղ, որ իր հոտած գոյութիւնը պահպանելու համար իր բոլոր ժողովուրդի կեանքը կը ծծէ... Ապագան երկու թուր ունի. մին պիտի թքնէ այս անարգ կառավարութեան աղտոտ գոյութեան վրայ, միւսը պիտի թքնէ մեր ներքին և եւրոպացի թշնամիներուն երեսը. իսկ մեր թշուառ սիրելի ժողովուրդին կը մնայ փառաւոր յաղթանակը, եթէ գիտնայ առանց յուսահատելու առաջ երթալ այս արիւնալի և փշոտ ճանապարհէն:

Հինգս միասին՝ պաղարիւն կերպով և եթէ կարելի ըլլայ՝ արհամարհանքով մահը դիմաւորելէ առաջ, կախաղանի տակէն սրտանց կը գրկենք մեր բոլոր սիրելիները, բոլոր ընկերները. մեր խոնարհ յիշատակը յարգողներուն կը կտակենք շարունակել միշտ գործը: Մնա՛ք բարով, մնա՛ք բարով... Ախ, այդ խօսքէն կը սառսռամ... Այդքան շուտ... Ինքզինքս յուզուած կը գգամ... բայց չի պիտ պակսի իմ մէջ ոյժս և մահուան առջեւն ալ պիտի կրնամ ըսել կեցցէ՛նոր Հայաստան... Մնա՛ք բարով. կրկին կը սղմեմ ձեզ կրծքիս... Ախ, երանի այդ իրական ըլլար... Խօսքս լմնցաւ... Կախաղանը ինձ կըսպասէ...

Չերդ ԹՈՐՈՍ.

Գաղատիա Բաւոս



ՅԱՆԿ

Երես

Հրատարակութեան մասին:	
Դէպքերը 1893 թ. սկզբից մինչեւ ապրիլ ամիսը.	3
Կեսարիայի մեծ դէպքը	12
Թիւրքական երկու յայտարարութիւնները	17
Գաղատիայի բանտարկւածների չարչարանքը	19
Գաղատիայի դատավարութիւնը	32
Յուցակ դատապարտւածների Գաղատիայում	33
Տեղեկագիր անգլիական դեսպանին	37
ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՃԱՌԵՐ	
Ճառ Անտօն Ռշտունիի	43
Ճառ Կարօ Քէրտմէնտեանի	57
Ճառ Մարտիրոս Ճիվանեանի	67
Ճառ Քերովըէ Փափաղեանի	73
Ճառ Յակօբ Պահլաւունիի	81
Կախաղան	94
Տիպար հայ յեղ. ասպատակի	97
ԿԱՆԱԳԱՆԻ ՏԱԿԻՑ	
Թորոս Ծառուկեանի երկու նամակը	121

ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՐՕՇԷՐԻ ԴԻՐՔՈՎ

1) Նորագիր Հնչակեան Կուսակցութեան (երկ-
րորդ տպագրութիւն: Սպառված) 2րի.

2) Նոր Հոսանք և Բաց Նամակ Հայաստանցիներին.
(սպառված) Գ. 1 Փրանկ.

3) Տարեգարձ 1890 թ. Յուլիս Տասնհինգի: Յե-
ղափոխական հերոսներ: Յ. Զանկիւլեանի, Կ. Մ. Նալ-
պանտեանի և Յ. Ղումրուեանի պատկերներով. (սպառ-
ված) Գ. 30 սանտիմ.

3 bis) Յուլիս Տասնհինգի 1890 թ. արինահեղ Յոյ-
ցը Կ. Պօլսում և օրւան հերոսները — Փրանսերէն: Յ.
Զանկիւլեանի, Յ. Ղումրուեանի և Կ. Մ. Նալպանտեանի
պատկերներով (սպառված) Գ. 30 սանտիմ.

4) Ով ինչով է ապրում. Ս. Դիկչտէյնի:
Թարգմանութիւն: Գ. 75 սանտիմ.

5) Մայիսի մէկը. Ամենամեայ համաշխարհային տօն
բանւորների, Գ. Պլեխանովի և մի գլուխ Պ. Աբ-
սելրօդի «Բանւորական շարժում» գրուածքից: Թարգ-
մանութիւն Գ. 25 սանտիմ.

6) Հայերն Ամերիկայում, Ակն—եանցի և Ինչ
է աշխատանքի վարձ, Թարգմանութիւն Կարլ Մարք-
սից. Գ. 15 սանտիմ.

7) Սահմանադրութեան էութեան մասին, Ֆէրդի-
նանդ Լասսալի, հեղինակի պատկերով և մէկ առաջա-
բանով «Հնչակի» խմբագրութեան կողմից. Գ. 40 սանտիմ.

8) Խրաւունք ծուլանալու, Պօլ Լաֆարգի, հե-
ղինակի պատկերով և մէկ առաջաբանով «Հնչակի» խմ-
բագրութեան կողմից. Գ. 25 սանտիմ.

9) Garden of Eden Defiled! (Եդեմի պարտէզը
կործանված) անգլիերէն գ. 5 սանտ.

10) Բռնութեան դէմ. Գաղափայի դատավարու-
թիւն գ. 1 Փրանկ.

* * *

“Հնչակի” խմբագրութեան մէջ ծախվում է նա-
եւ հեղ. Լեռնացի —

1) Բանաստեղծութիւններ. Ս. Պետերբուրգ, տպա-
րան Ի. Ն. Սկորոխոգովի. գ. 60 կօպէկ.

2) “Փախստականը”, պօէմա յեղափոխական
կեանքից. գ. 40 սանտիմ.

3) “Աւազակը”, պօէմա յեղափոխական կեան-
քից. գ. 25 սանտիմ.

4) “Մարտում” գ. 10 սանտիմ.

* * *

Բրօշիւրների վճարն ընդունվում է նաեւ նամակա-
դրօշմով: Ճանապարհածախսը “Հնչակի” խմբագրութեան
կողմից:



2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0037775

4/32

